



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



891.71
9-31

669
621
10757.

DRILLING HOLE

ՏԱՐԾՈՅ

25 SEP 2006

891.21-31

9-51

Կ. Հ.

25 NOV 2006

ՀՀԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

ՊԵՂ


Պ. Վ. ԶԱՍՈՑԻՄՍԿԻ

ԹԱՐԾՈՅ ԺԱՆՈՒԱՐԻ
ԱՏ. ԶՈՀՐԱԲ

1001
1391



ՆՈՐ-ՆԵՐՆԻ ՁԵՒԱԿԵՐՆ
Տպարան Մերովիք Աւագեանի
1906



ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

II

Երեկոյեան վերջալոյսը հանդարտ մայր էր մտնում: Կապոյտ կիսաթափանձիկ մայիսեան աղջամուխջը տարածուած էր քաղաքի, զատարկացած գետեղի և գետի կապաւատկ մակերեսոյթի վրայ:

Ափի երկարութեամբ երեռմ էին կապած նաւակներ, ձգուած փայտի լաստեր, կիսով չափ բաց փայտով լիքը նաւեր և կանգնած էր նաւահանգստում մի փոքրիկ շոգենաւ: Նաւի անիւի շուրջը սպիտակ ֆոնի վրայ ու տառերով գրուած էր անունը՝ „Իգօր“: Ճանապարհորդները ցրուել էին, տարանքը դուրս էր բերուած ափ: Նաւը վերջին անգամ արձակեց շոգին, վերջին անգամ դէմու երկինք թռաւ նրա սեացած ծխնելոյցից ու ծուխի բուլան, և „Իգօր“-ը, կարծես հոգոց հանելով, թեթեացած, վերջապէս լուեց: „Իգօր“-ը հանգստանում էր և հանգստանում էր նրան սպասարուող նաւորդների խումբը:

Ասջեի տախտակամածի վրայ հաւաքսւել էր մի փոքրիկ խումբ, երկու նաւատօնի իրանց կապոյտ շապիկներով և կլոր զլխարկներով կիսով չափ պատկած էին յատակի վրայ, հնոցպանը իւր մրօտ ձեռներով, մեքենավարը մի անսովոր տիտուր մարդ, ներս ընկած կրծքով և ցաւոս աշքելով և նաւապետի օդնականը, ու մի ֆրանտ մարդ էր, փայլուն ոսկէթել ժապաւէնեայ ձեռաւոր զլխարկով, տեղաւորուել էին պարանների վրայ: Մի երիտասարդ որ ըստ երեսյթին հիւր էր նաւի վրայ, նըստած էր նաւեղուում սպարանի կոյտեղի մէջ տակառի վրայ: Երիտասարդին, նայելով նորա հաստատուն ու ընչացքին,

կարելի էրտալ 20 տարի: Նա բարձրահասակ էր, նիհար և կոպատաքննին: Նորա եցիօը ծուածկ թուխ և այրուած էր, շրթունքները բաւականին փափուկ, բարակ, ուղիղ քիթ և խոշոր, մուգ թխազոյն, թաւշենման, մտածկոտ աչքեր՝ երկար ու ու թերթերունքների տակ ծածկուած: Այս նիհար, թուխ դէմքը զարմացնում էր նշ գեղեցկութեամբ, նշ գծապրութեան կանոնաւորութեամբ (թէն ագեղ չէր), այլ անսովոր անկեղծութեամբ և ճշմարտասիրութեամբ: Այս երիտասարդը երեխ չփափէր ձեռնալ. բայց նորա զգացածը վայրկենապէս նկատելի կերպով արտայայտում էր նորա մութ-սև աչքերի մէջ և դէմքի վրայ, երբեմն մինը միւսին արագութեամբ փոխանակելով:

Այսպէս պարզ ու քամոտ օրին սահում է զաշաի վրայով ամպի սառուերը: Երիտասարդը այնքան մեծացել էր, որ գիմնազիոնի սիւրտուկը վերան չէր զալիս: Կուրծի մօտ նեղ էր, թերթ կարճ, իսկ մէջքը բարձրացել էր վեր: Հին, կեղատ գլխարկը յետ էր ընկած ծոծրակի վրայ, որի առկից դուրս էին ցցուել կարճ զանգուները:

Այդ միջոցին երիտասարդը ըստ երկոյթին զգում էր ինքն իրան իւր զշանում և գտնում էր հոգւոյ ամենալաւ արամազութեւն մէջ: Նշանազգեսաի կոճակները արձակած, ծիսելով նստած էր նա տակառի վրայ և մեծ հետաքրքրութեամբ ականջ էր զնում նաւորդների ճանապարհորդական արկածների մասին պատմութեանը:

— Նուրումի սահանքները յաջնո անցար— հարցրեց նա:

— Ոչինչ, չէ որ գիշերները այժմ պայծառ են, ինչպէս ցերեկը: ալատասխանեց հնոցպանը:

— Բայց Սատանի— Զանծաղի մօտ քիչ էր մնում մի ծերուկ ջրի տակը խորասուգէինք,— տիրութեամբ ասաց մեքենափարը: — Լոյս ցերեկ կպանը նորա նաւակին:

— Ի՞նչպէս թէ,— հարցրեց երիտասարդը շշկուած դէմքով:

— Այնպէս, ճկում էինք, գիտէք, մի փոքր հրուանդանի մօտից, իսկ ծերուկը այդ բոպէին, շար սատանայ, կարեց շոգենաւի առաջը, պատասխանեց նաւապետի օգնականը: — Տանում էր նաւակով ինչ որ կարասիք: Կանդնել չկարողացանք, սուլեցինք, բայց ուշ էր... չփ, ծերուկը նաւակով և բոլսր պարագաներով ջրի տակ զնաց... Մհ, ես նորան.., մահու չտփ փախեցրեց... իսկ յետոյ իմացուեց, որ այդ ծերուկը խուլ, ոչինչ չի լսում եղել, ուզում ես զուռնայ փշիք ականջին... Քաջ մար-

դիկ են: Ինքը ութսուն տաւեկան է և լոզում է մենակ: Զարմանալի չի լինիլ, եթէ այլպիսին շովենաւի տակ ընկնի:

— Ճրից հանեցին, Հարցրեց երիտասարդը:

— Հանեցին: Կարտասիներից էլ մի քանի բան ազատեցին. իսկ նաւակը իհարկէ վնասուեց: Արտասուեց ծերուկը... ձահապարհովները հանգանակութիւն արին և հաւաքեցին մօտ քուն բուրլի:

— Բայց անցեալ զարունքին շիլովի Հավա Երյօվէն նաւը ինչպէս մի կին ու մի սամփի կովատկեց, ասաց նաւատիներից մէկը, շտապ-շտապ ծիսելով իւր կարճ ծիսամորճը: Գիւղացան ազատեցին, բայց խեղճ կինը շորերի մէջ լիճճուելով քարի նման գնաց ջրի տակ: Ըն էլ մի բան էր:

— Եւ այդ բոլորը ազատութիւնից է: Հարկաւորութիւն կայ շատ բեռնաւորուիլ և աշխատել առաջ անցնել... Յիշում եմ, ինչպէս թէ... արտասանեց երիտասարդը, զլուխը ցաւակցար շարժելով:

— Բայց այդ շիլովի մարդիկը յայտնի շարաձճիներ են: Ասաց հնոցպանը: — Նոքա առաջին անգամը չէ, որ հանդէպրի են... Բայց մէկ օր հնոցա լաւ կ'հասնի...:

— Դրա համար էլ նոյս «Հերսով» քանի անգամ ձանձւուատների մէջէ մնացել, ախսուր ծալլուվ ասաց մեքենափարը: Ամեն արի այդ անիծեալին նորոգում են, ամբողջովին կարկատաննելով է ծածկուած... Եւ այսպիսի մի խդաւոկ անօթն էլ «Հերսո» են կաչում... բա... հերսո...:

— Այդ արգէն զորդ է, Քաջալերեց նաւապետի օգնականը: Խոսկիցները լսեցին:

Հնամեայ մայր եկեղեցու զանգակատան պահատպանը հընչեցրեց տամը: Զանդակի միաշափ ձայնը խուլ կերպով տարածուեց զետի և լուռ քաղաքի վրայ: Երիտասարդը մոլոր նայեց հեռու զետի վրայ: Այնահեղ արենելքում, կապոյատաւերները նկատելի կերպով խասնում էին, և բաղաքի միւս կողմը, այսուեղ և այնտեղ ափի վրայ երեսում էին ձկնորսների խարոյիներ: Իսկ արեմատում երկինքը դեռ փայլում էր քաղաքի վրայ, և սպիտակագոյն, թափունձիկ, երեկոյեան լուսաւորութեան մէջ երեսում էին հեռացող նրկու զեղեցիկ ափերը, տուներ, թաղուած թարմ, նորածիկ պարտէզների գալաքի մէջ, հինաւուց եկեղեցների գմբեթներ, բարձր, սպիտակ զանգակատաներ և նլանց փայլուն զագաթները, որոնք ոլանում էին դէսիկ երկինք:

զով էր փշում գետից, ափից բռրում էր սօսիկ և թարմ ցաւ-
րասիկ հոտը, իսկ պարտիզում մի տեղ եղաւմ էր սոխակը:

— Զեք գործերը ինչպէս են, ֆիլիպպ Ալքսանդրովիչ,
ինչպէս է քննութիւնների բանը, - հարցրեց նաւապետի օգնա-
կանը, գառնալով հիւրին:

Ե՞ն, ոչինչ... - պատասխանեց սա, քերելով ծոծրակը: -
Եյլ ևս չսոս քննութիւն մնաց... մտահմատիկա... զրո՞ց առնի:

Ի՞նչ կայ, այդ մի փոթութիւն, - քմծիծաղ հարցրեց նա-
ւապետի օգնականը:

— Իսկ և իսկ - հասաւատեց երիտասարդը, առելի ևս թե-
քելով գլխարկը դէպի ծոծրակը: - Գրահաշին, երկրաչափութիւն...
Էհ, գեռ այդ ոչինչ... այ եռանկիւնաշախութիւնը, տիեզերա-
գրութիւնը... և գեռ կինի լատիներէն, յունարէն...

— Ասել է թէ ապիրտած լիզեններ հոգեպահիկի համար, -
ծաղբածութեամբ նկանեց խօսակիցը:

— Եյլ ուսում ասած բանը դժուար է, - տսոց նաւաստին:

— Եյս, եղբայր, զլուխ ջարդելու բան է, - համաձայնեց
նորա ընկերը:

Յետոյ խօսքը նորից նաւի վերայ դարձաւ:

— Կանոնիս գուրս կ'գաք, - հարցրեց երիտասարդը:

— Հինգ ժամին առաջին շլոցը կ'լինի, - պատասխանեց
նաւապետի օգնականը:

Է-էն, եթէ քննութիւնները շ'լինէին, համար կ'լինի ևս
ձեղ հետո...

— Եւ շատ հրաշալի կ'լիներ ֆիլիպպ Ալքսանդրովիչ, -
վրայ բերեց խօսակիցը: -

— Ինձ մօտ վերեսում թէյ կ'լինէինը... պերկերից և այլ
ձեններից քալածօշ կ'լինէինը... Է-էն:

Կէս զիշերին մօտ խումբը ցրուեց:

Երիտասարդը առաջ ուղիղութեց ափի երկարութեամբ, յե-
տոյ անցաւ կամուրջը և անյայտացաւ նեղ փողոցների լարի-
բինառում: Մի բոտէ նա կանգ առաւ մի փոքրիկ վարդագոյն,
երեք պատուհանով և բարձր ու լաւական թէք կարով առն
առաջ: Հինաւուց լալիան ցարասինները հոգանաւորում էին այս
վարդագոյն առնը, ախտութեամբ ծոելով նշա կարի վրայ իրանց
ջրալի ճիւղերը: Բակում, տան անկեան կից, շինուած էր մի
սարեակի բոյն, վերեւում արօսի փունջ կապած: «Քնած են»
ասաց ինքն իրան երիտասարդը, նայեց մութ պատուհաններին

և շարունակեց ճանապարհը:

Վերջապէս, նա գուրս եկաւ լայն և երկար Մոսկավսկից
փողոցը և կանգ առաւ մի փայտեայ, երկյարկանի սպիտակ տան
առաջ: Մուաքի մօտ գանուած սեան վրայ, զեղնագոյն կեղառա
թիթեղի վրայ, խառնի խուռան, գժուար հասկանալի, զրուած էր,
անձրեներից և ձիւնից ջնջուած. «Ճատշովների ժառանգների
տուն, 2 բաղաքամասն № 18»: Ստորին յարկում մութ էր, իսկ
վերեւում, դէպի բակը նայող պատուհաններից մէկում, վայր թո-
ղած վարագոյք տակից, լոյս էր երեսում: Մի խոպս շան հա-
ջոց լուսեց բակի խուռաքի միջից, երբ երիտասարդը զոնակը
բանալով, շոկացրեց օգակը:

— Պղտանն, Պղատսն, լսիր, - կիսաձայն կոչեց երիտասարդը,
և իսկոյն սի, բրոսու շանը, կաղալով և պաշը բարեկամաբար
շարժելով, զիմաւորեց նորան:

Փաղաքշելով շանը, երիտասարդը ճկուեց անկինից և,
մօտենալով յեակի գասն, սկսեց վեր բարձրանալ ճաճացող
ոսնդուխներով, իսկ Պղատսնը, բարեխզմութեամբ կտարելով
իւր զիշերապահութիւնը, տիբոջ վրայ հաջելը վերջացնելով,
նորից մտաւ բակի խորքում գանուած շաբատի տակ:

Մարթան՝ մի տարեց կին, զեղնագոյն տենդային դէմքով,
քնթաթախ, զզգուած մազերով, փնթինթալով բաց արաւ
զուուը և, թէկ առանց հաջոցի, բայց ոչ այնքան բարեկամաբար,
որքան Պղատսնը, ընդառաջնեց երիտասարդին, չ'մուռանալով բարձր
արտասանել մի քանի արգարացի, բայց խիստ ծանր նկատո-
ղութիւններ «զիշերաշըջինների» հասցէին:

— Եւ ի՞նչ է այս, Տէր Աստուած, ի՞նչ կարգեր են սոքա,
մըթմըթում էր նա: Փոխանակ ընելու կամ զասերը լաւ պատ-
րասելու, նա թափառում է համար թափառում... Եւ ո՞րոնդ է
նա լինում մինչեւ այս ժամանակ: Էզուց ծերուկը նորան լաւ
կ'կոթէ... և տեղն է: Դեռ քննութիւնը չէ վերջացրել և այս-
պէս աղատ շրջում է... Մինչեւ ո՞ր ժամ նորա համար չես քննում:

— Բաւական է ստածդ: Ախր, լաւ զիտեմ, քնում ես,
շնչալով ասաց երիտասարդը, մանելով միջանցքը:

— Քնում ես, - ծաղբեց նորան Մարթան. - շատ կ'քնես
մի քեզ նման անգործ զիշերաշըջիկի հետ:

Երիտասարդը, ասանց հայիացք ձգելու իւր սենեակը,
զգուշութեամբ անցաւ միջանցքի միւս ծայրը, մինչեւ այն դու-
ռը, որի բանալի ճեխքից լոյս էր երեսում:

— Լիդա, կարելի՞ է մտնել քո մօտ, — հարցրեց նա կիսա-
ձայն, զուռը թեթև թխկացնելով:

— Մամի, — լսուեց զան յետեկից մի մեզմ կանացի ձայն:

Սենեակը լաւ լուսաւորուած էր: Սեղանի վրայ կարմրա-
գոյն լուսամիտի տակ գաւուում էր լապտերը, իսկ արդ ու զար-
դի հայելու երկու կողմը վառուած էին բնաճարպի երկու մոմ: Մի
մատաղահաս օրիորդ, մօտ 22 տարեկան միջին հասակով,
բուականին լիքը, գիշերային սպիտակ վերնազգեստով, մինչև
արմունկը յիտ ծալած թեերով, նստած էր փոքրիկ, խեցանման,
կակուզ բաղկաթոսի վրայ արդուզարդի առաջ, և սանցում էր
իսր չեկ հայեկապ մազերը: Նա լսու երկային, մեծ լաւակա-
նութեամբ էր նայում հայելու մէջ, որտեղ ճբագների փալփլող
լոյսի հետ արտացոլում էր նորա գողարիկ, խաժագոյն աշքե-
րով և նուրբ կարմիր այսերով զէմբը:

— Այս էլ ինչ նոր քան է, — ներս մտնելով հարցրեց երի-
տասարդը, ակամայ աշքերը փակելով խիստ լուսաւորութիւնից
և զարմացմամբ չարս կողմը նայելով: — Աշխատում եմ մի նոր
սոներուացք անել, բայց ոչինչ չի զուրս գալիս, — բացարեց
օրիորդը, առանց աշքերը հայելուց հետացնելու: — Ցունական
սաներուածքը ինձ չի սազում... փորձեցի հանգոյցի ձևով կապել,
էլի լաւ չեղաւ... ուզում եմ միայն հիւսել մազերս և բարձրա-
ցնել... պրծաւ գինայ:

— Մասանան գիտե, ինչ յիմարութիւններով ես զու պա-
րապում, — ծաղրելով խօսեց երիտասարդը և, առանց գլխարկը
հանելու, նստաւ սեղանի մօտ: —

Ի՞նչպէս այդ, Լիդա, քեզ չի ձանձրացնում...

— Ահ, թնդեմ, առանց բարոյախօսութեան, —
թեթև բարկութեամբ նկատեց Լիդան, շարունակելով նայել
հայելու մէջ և մազերը սաներել: — Իսկ զու էլի սրտեղ Եր,
հըպէհաշչչների թէ ուրիշ որեէ աշխատաւոլների հետ էլի ժա-
մանակ անցկացնում...

— Որաեղ որ, Լիդաչա, ես էի, այնտեղ ես այժմ չկամ, —
ծաղրական-իրախատ եղանակով արտասանեց երիտասարդը:

— Յիմարութիւն, ուրիշ ոչինչ, պատասխանից նորան
քայրը: — Գուցէ ֆրակային այցելութեան էիր գնացել:

— Կարելի է, — հաստատեց ֆիլիպով, և անբաւականութեան
սոսուերը սահնեց նորա զէմքի վրայով. երեխին հարցը նորա
համար շափաղանց անախորժ էր:

Երիտասարդը հենուելով սեղանին, սկսեց սուելով եղա-
նակել «Լուչինուշկա»:

— Վերջացներ, խնդրեմ, տանել չեմ կարող... — Պատարե-
ցը նորան քոյըը:

— Նեարդեքրդ... — կատակով հարցրեց երիտասարդը:
Օրիորդը լսեց, բարկացկոտութեամբ ուսցնելով շրժունք-
ները:

— Իսկ հայրիկը վաղմուց է քնել... — մի քիչ սպասելուց յե-
տոյ հարցրեց երիտասարդը:

— Այս, — պատասխանեց Լիդան: — Նա շատ նեղացաւ և բար-
կացաւ քո վրայ:

— Իսկ քո ակցիովի աստիճանաւորը այսօր եկել էր, — ընդ-
հատեց նըան եղբայրը:

— Եկել էր, և մինչև անդամ ոչ մենակ, իւր մի եկուոր
վաղուցուայ ընկերոջ հետ... Չատ հետաքրքիր պարոն է:

— Ընորհաւորում եմ:

— Ռւլումովներն էլ եկել էին... շատ ուրախ անցկա-
ցընք ժամանակը, երկեցինք... Լիւզմիլան և Մարուսեան հար-
ցնում էին քո մասին:

— Նորա ինչ գործ ունին ինձ հետ, — հարցրեց երիտասարդը:

— Այս, Փիլիպպ, ինչ տոնով ես այսօր խօսում, անտա-
նելի է, — բացականչեց օրիորդը:

— Զէ որ երբէք լաւ տոնով չեմ խօսել, այդ լաւ գիտես, —
առաջ նըան եղբայրը:

— Ասմ, խնդրեմ, Փիլիպպ, միթէ քեզ, ճշմարիս որ, աւե-
լի ախորժելի է հասարակ ժողովրդի հետ լինել, քան թէ մեր
հասարակութեան, — հարցրեց Լիդան, — թէ դու միայն քեզ այդ-
պէս ես ձեացնում:

— Ամենեկին էլ չեմ ձեացնում, — քթի տակից խօսեց Փի-
լիպպը:

— Այդպէս ուրեմն, քեզ աւելի հաճելի է լինել արհեստա-
ւորի հետ, քան թէ մեզ, — շարունակեց Լիդան, մազերը հիւսե-
լով, և, ոտք ոտի վրայ ձգելով, սկսեց շարժել:

— Տարօրինակ հարց: Իհարկէ, սիրեցեալ արհեստաւորի
հետ ինձ աւելի ախորժելի է զրոյց անել, քան ձեզ հետ...

— Բայց ինչո՞ւ համար է այդպիսի գելապատութիւնը, թոյլ
տուեք իմանալ, — ծաղրելով հարցրեց քոյըը:

— Նախ նըան համար, որ նորա հասարակ ժողովուրդ են.

«պարզ մարդիկ», իսկ դուք—փուջ էք, հրէշներ, դուք բոլորդ կարծես խեղսւած էք... պարզութեամբ մի խօսք չէք ասիլ, այլ միշտ ծամածսելով,—յուզուելով ասաց Փիլիպպը և թանձր կարմրութիւնը շառագունեց նորա թուխ այտէրը: —Դուք միշտ կեղծում էք և աշքեր շնում... Պատահում է, որ սրբներումդ շարախնութիւն էք անում, բայց ցոյց էք տալիս ախուր դէմք, և կամ թէս սկսում էք ժպտալ, երբ դուք չէք ուզում ծիծագել... Օրինակ, յանդնութիւնը ձեղ համար կոպտութիւն չէ, այլ համարձակութիւն, «ինքն իրան պահել գիտնալ» հասարակութեան մէջ... Դուք պէտք և անպէտք տեղ ստում էք... Զզուելի՛ է:

—Իսկ Փրոլկային այցելի քեզ զզուելի չէ, —շարախնոդ ծաղրով նկատեց Լիդան:

—Եզուր ես գու միշտ իմ աշքը խոթում Փրոլկային, —ընդհատեց նորան եղբայրը:

—Ես քեզ արդէն ասել եմ և կրկնում եմ, որ ես գնում եմ մշ նորա մօտ, այլ որդու և աղջկայ: Եւ ի՞նչ է այժմ ինքը Փրոլկան՝ մի հիւանդու խղճուկ ծերուկ...

—Իսկ անցեալը, նորա անցեալը, —թունաւոր ու յամառաբաշ կրկնում էր օրիսրդը:

—Իսկ նորա անցեալը տիսուր է, մռայլ, վատ անցեալ, —ասաց երիտասարդը: —Եւ ինչպէս իմանանք, Լիդա, գուցէ նա այժմ խիստ քաւում է այդ անցեալը, տանջում նրա համար... Եւ յամենայն զէպս նրա անցեալը ուրդոցը չի վերաբերում. համաձայնիք: Նորա մեղաւոր չեն նորա գործերի մէջ:

—Ոչ սք նսցա նորա համար չի մեղապատմ, —ասաց քոյլը: —Բայց և այնպէս ատաղձագործ քեզ ընկեր չէ և ոչ էլ այդ աղջկը քեզ զոյք: Ախր նա բոլորովին անկիրթ է...

—Եզուր ես այդպէս մտածում, —ասաց երիտասարդը: —Նա քեզանից ոչ պակաս բան գիտէ:

—Դու կ'լինես երկի գասատոն:

—Եյո, ես դաս եմ տալիս, —հանդար պատասխանեց Փիլիպպը:

—Չատ լաւ: Զեր մէջ մի բոման չկայ, —հարցըց Լիդան, եռանդով ոտք շարժելով:

—Բոման չկայ:

—Գուցէ նա մտածում լինի կուրսեր երթալ:

—Չգիտեմ շատ կարելի է...

—Այդ լաւ է: Փրոլկայի աղջիկը —կուրսեր, հա, հա, հա, —

ծիծաղելով բացականչեց Լիդան... Ա՛խ, ոչ, ոչ, ինդրեմ... դու զարձեալ կ'ծխոտես սենկակս, —շտապով ասաց նա, նկատելով, որ եղբայրը հանելով իւր քօրտե—տաբա-ը, պատրաստում է ծխելու:

—Դէ, լաւ, կերթամ; —հանգստացրեց նորան եղբայրը, ուզուելով դէպի դուռը: —Ժամանակ է ըսելու, դու էլ բաւական է որբան իզուեցիր...

—Ո՛ւն, ինչպիսի ոճեր, —զզուանքով արտասանեց օրիսրդը —երկի այդ քո ծանօթներիցդ ես սովորել:

—Ա՛խ, դու... աշխարհային պանուճապատանիք:

—Ա՛խ, Փիլիպպ, —կշտամբելով ասաց օրիսրդը:

—Ա՛խ, Լիդոչկա, —նոյն տոնով արտասանեց եղբայրը և, ծաղրածոթեամբ նայելով նորա վրայ, հանդար գուռը փակեց յետեկից:

Քոյլ և եղբայր, կամ ինչպէս կոչում են նոցա այդ քաղաքում «Ճատրովի ժառանգներ» հակապատկեր էին մրմեանց թէ աշտարբնով և թէ հոգեկանով: Քոյրը խսկական չէկ էր և խարտեաշ, կաշուի փափուկ գոյնով, միջակ հասակով, փափլիկ. եղբայրը —խսկական «սե ստանույ», թուխ, բարձր, անձոռնի և շարաբեղէնի տուփերի վրայ նկատելու համար բոլորովին անպէտք: Քոյրը գաւառական օրիսրդ էր, zierlich —manirlich. Նու հիմնաւորապէս իւրացըր էր իւր չրջատառող միջնավայրից արտաքին աշխարհային փայլը և քաղաքավարութեան կանոնների պահպանութիւնը աւետարանական պատուէրներից բարձր էր գասում: Լիդան՝ մի գործնական, խելքը զիսին անձն էր, կեանքի խորհուրդը նորա համար պարզ էր, և 22 տարեկան հասակում նորա համար կասկածանկներ գոյութիւն չունելին, իսկ և իսկ այն դրութեամբ, թէ «Օտարի մեռեալին լէ-լէ ասելով են թաղում, մէջ ուտել, զրայ ման գալ», «ամեն մարդ իւր համար», «աշխարհը դմակ, դու զանակ—կտրիր ու կտրիր» —սոքա նորա համար այնպիսի անյեղլի, չօշափելի ճշմարտութիւններ էին, ինչպէս օրինակ, երկրաշափական մի յայտնի փորմուլա, որ «եռանկիւնու մէկ կողմը փոքր է միւս երկուսի գումարից»: Այս իւր շահերը լաւ ճանաչող օրիսրդը շատ հասարակ կերպով էր նայում կեանքի վրայ. նախ պէտք է գտնել լաւ փեսացու (անպատճառ իհարկէ փողաւոր), երկրորդ, ամուսնանալ նորա հետ և պսակի ժամանակ աշխատել տուաշինը ոտք կոխել գրակալի առաջ փուռած բաց կարմիր գոյնի ատլասի վրայ, որպէս զի

յևագայում կառավարել ամուսնուն. վերջապէս երբորդը, լինել «տանտիբուհի», դուրս գալ հասարակութեան մէջ, ընդունել իւր մօտ ծանօթներ... Տունը ամեն բանով լիքը, ոչ մէկ բանի պակասութիւն, նախանձու հայեացներ: Էլ ուրիշ ի՞նչ պէտք է:

Չատ-շատերը նորան եղբօրից խելօր էին համարում: Վերջինս, ճշմարիտ որ, գեռ բոլորովին չ'կազմակերպուած և մի քիչ տարօրինակ պատանի էր: Եթէ լիդան կեանք էր մաել հարթ ճանապարհով, որ անցնում էր ընդարձակ տարածութեան միջով, եղբօր մասին կարելի էր ասել, որ նա թափառում էր իւր կրակու երեակայութեամբ ստեղծած կասկածանքների և անուրջների մժին անտառում: Եթէ լիդայի համար կեանք մէջ ամեն բան պարզ էր, նորա համար, ընդհակառակն, ոչ մի բան «պարզ» չէր:

Քրոջ բարոյախօսութիւնը երբէք չէր բաւականացնում ֆիլիպին. նա չէր կարողանում բաւականանալ միմիայն լինքն իրան մասին մտածելով, իսկ պայմանեալ քաղաքավարութիւնը. որ այնքան սիրով ընդունում էր քոյրը, նորա համար ծիծաղելի և ատելի էր: Այն ընկերութիւնը, որ լինում էր նոցա տանը, նորա սրտովը չէր: Նա դեռ մանկութիւնից չէր սիրում դուրս գալ հիւրելի սուած. հիւրասենեակում նորա վրայ ծիծաղում էին, նորան կոչում էին «գայլուկ»: Նորա ծանօթ նորահաս աղջկները՝ լիդայի ընկերութիւնը, չէին սիրում խաղալ նորա հետ, «քօշայ» էին անուանում նորան, բարկացնում էին և վիրաւորում, իսկ երբ նա, որպէս համբերութիւնից դուրս եկած շան լակոտ յետ էր մղում իրեն տանջողներին, ասպարէզ էր դուռս գալիս հայրը և, ինչպէս կողմնապահ դատաւոր, մեղաւորում էր նորան և քաշում կամ ականջից և կամ մազերից... Վերջին տարիները նորան աւելի անհանոյ էր երեսում «կիւլտուրական ընկերութիւնը», ինչպէս նա քամահաբար կոչում էր քրոջ մօտ հաւաքուող այր և կին մարդկանց շրջանը, – և նա փախչում էր նորանից առանց յետելը նայելու: Ասալձագործի արհեստանոցում, հրդէհաշչների մօտ, Քրոլկա Տրեսկինայի ագարակում, գետափում բեռնակիրների շրջանում, շուկայ—մուժիկների խմբում, նաւի տախտակամածի վրայ, նաւասիների մօտ, Վասիլիյ Ֆէօդորովի գարբնոցում, ամեն տեղ Փիլիպպը ինքն իւր տեղումն էր համարում և միայն հայրական տան մէջ, այդ մեծ սպիտակ տան մէջ, նորա համար խեղդուկ և ծանը էր, ինչպէս գերեզմանի դամբարանում...

Մառախլապատ, պղասոր մտքեր յուգում էին երիտասարդին՝ քաշում տանում էին դէսի հեռուն: Մի ինչ սր աղօտ բան եռում էր նորա մէջ, ձգում էր նորան այս կողմից այն կողմը և զգացմանը նորա մէջ յաճախ յաղթող էր հանդիսանում սաւը գտառողութեան վրայ: Ըստ երեսութիւն, նա թուշքների էր անում, կպչելով մէկ ծայրից միւսին, բայց այս թուշքների մէջ ես, մէկ ծայրայեղութիւնից միւսը անցնելուն մէջ, կար իւր լոգիկան, և նա մնում էր ինքն իրան հաւատարիմ... զեռ փոքր հասակից նա մտածում էր աւազակ դասնալ, կողոպահել անցորդ վաճառկաններին և առհասարակ հարուստ մարդկանց և կողոպուար բաժանել աղքատներին: Յետոյ նա թողեց այդ հոյակապ միաբը և սկսեց մտածել այն մասին, թէ ինչպէս կարողանայ հեռանալ մի որ և է աղքատ, խուլ, անտառների մէջ թաղուած վանք և խարագնագեստ լինել, հագնել իւր վրայ ծանը, երկաթեայ շղթաներ, պաս պահել, աշխատել մինչեւ արիւն քրախնք և ազօթել ամբողջ մեղաւոր աշխարհի համար: Յետոյ նորա մտքերը անձուկ սահման սաացան. նա կամենում էր լինել միայն գիւղական ուսուցիչ: Բայց նա մտածում էր, որ կլինի իսկական, գործի պէտքական մարդ միայն այն ժամանակ, երբ կ'մտնի համալսարան. այնտեղ նորան կպարզուի բոլոր ճշմարտութիւնը... Բայց այսակող, ի միջի այլոց, նա սկսում էր երկրայել. անհրաժեշտ է արգեօք նորա համար համալսարանը: Հարկաւո՞ր է արդեօք նորան այլ ևս սովորել:

Քոյը և եղբայր մօր մահից յետոյ մնացել էին գեռ փոքր երեխաններ. Փիլիպպը մէկ տարեկան էլ չկար, իսկ լիդայի երկու տարին նոր էր լրացել: Նորա մնացին մեծ մօր—«իշանուհի» իրինա Միխայլովնայի ձեռքին, կիոջ՝ բոլորովին պարզ, անկիրթ, բայց բնական խելքով օժառած: Իրինա Միխայլովնան՝ ծագումով գիւղացի՝ իւր ժամանակին յայտնի գեղեցկուհի էր, երկար տարիններ ծառայում էր իրբեւ անտեսուհի մի գեներալի մօտ և վերջում ամուսնացաւ նորա հետ: Դենքերալը, առում են, ապրել է նորա հետ շատ բաղդատոր և, մեանելով, թողել է կնոջը և միակ աղջկանը՝ Մաշային, այս երկյարկանի սպիտակ տունը և քաղաքից 25 վերան հեռուութեան վրայ մի փոքրիկ կալուած: Իրինա Միխայլովնան Մաշային կնութեան տուեց տեղացի մի սնանկացած կալուածաէր Ալէքսանդր Վասիլիկիվիշ Շատրովին, տեղաւորեց նոցա իւր տան մէջ, կալուածը ծախեց, իսկ փողերը (14 հազար) պահեց թուների համար: Երբ նորա Մաշան մեռաւ,

թողնելով իրանից յետոյ մի փոքրիկ որդի և աղջիկ, պառաւը մտածեց որբերի կայքին խնամատար նշանակել իւր հեռաւոր ազգականներից մէկին, որովհետև վեսայի վրայ շատ յոյս չունէր, բայց ձատրովը խիստ վիրաւորուեց այդ բանից և գործը այնպէս տարաւ, որ պառաւը սախպաւած եղաւ նորան խնամատար նշանակել: Վերջնական կարգադրութիւնները նա չկարողացաւ անել. հիւանդութիւնը յանկարծ վրայ հասաւ և տարաւ նորան գերեզման:

Իրինա Միիւալլովնան մեռաւ 11 տարի առաջ, երբ արդէն Լիդան գիմնազիօնում էր, իսկ Ֆիլիպպը սովորում էր տանը: Մեծ-մայրը սիրում էր «թիւերեն» երեխային, պաշտպանում էր նորան և մինչև մեծ-մօր մահը Ֆիլիպպը չաւ էր ապրում: Նա այժմ ես սիրով և երախտագիտութեամբ է յիշում պառաւին... Իսկ Լիդան, ինչպէս որ էր, այնպէս էլ մնաց հօր սիրելին: Ամենը Լիդայի համար: Ինչ որ ուզում է Լիդան այն էլ կ'ինի. Լիդային ոչ մէկ բանում մերժումն չկայ:

Քրոջ և եղբօր բնաւորութեանց տարբերութիւնը ոչ մէկ բանի մէջ այնքան պարզ չէր արտայայտում, ինչպէս նոցա դէպի իւրեանց հայրը ունեցած յարաբերութեանց մէջ: Ֆիլիպպը քաշուող էր, չէր կարողանում շողոքսրթել և աչք մտնել, իսկ, ընդհակառակը, յաճախ իւր շմատած և կոպիտ գիմազարձութեամբ յարուցանում էր հօր դժգոհութիւնը: Հայրը ես, ինչպէս երեւմ էր, ընդունակ չէր որդուն սիրելու, կարծես ամբողջ նորա ծնողական սէրն ու փաղաքշանքը անբաժան կերպով ընդմիշտ տրուած էր աղջիան: Լիդայի մէջ ամեն բան լաւ էր, և ծերուկը չէր կշտանում իւր «գեղեցկուհուց»: Լիդան կաշառել էր նորան ամեն բանով—և՝ գեղեցիկ արտաքինով, և՝ մեղմ, միաշափ ձայնով, ինչպէս առուակի բըքոց, և՝ նուրբ ձեերով և թէ մշտական, բարեհամբոյր վարքով ու փաղաքշանքով: Որդու մէջ, ընդհակառակն, և՝ «քօշայական արտաքին», և՝ անտաշ ձեեր, յաճախ խիստ բարձր խօսակցութիւն, ծանր և ամուր գնացք, խօսակցութեան կոպիտ ձեեր—ամենը, մէկ խօսքով, սկսած նորա ոլորուն, գանգուրաւոր մազերից, մինչև նորա հասարակ ժողովրդական ոճերը—դիւր չէին գալիս հօրը և երբեմն վիրաւորում էին նորան...

Կողմնապահ մարդիկ կոյր են լինում. նոյնպիսի կուրութեամբ տահջում էր և ծերուկ ձատրովը: Որդու մէջ նա չէր տեսնում համարեան ոչինչ համակրելի, չէր նկատում նորա մէջ

ոչ մի լուսաւոր կողմ, գրա փախարէն որդու բնաւորութեան և վարքի ամեն մի սխալ կէտը լայն կերպով տարածւում էր նորա աշքերում: Սղջկայ մէջ, նորա կարծիքով, պակասութիւններ չկային, կային միայն արժանաւորութիւններ և այդ արժանաւորութիւնները ծերուկը մեծացնում էր մինչև յնորական շափերի...

II

Հետեւալ օրը սովորական ժամանակին, աւաւօտեան իննը ժամին, ծերուկ ձատրովը նստած սեղանատանը ինքնայեռի մօտ ծխում էր իր ծխամորճը և թէյ էր խմում իր ահազին բաժակից: Այդտեղ և եթ նորա թիւի տակ ընկած էր դեռ ևս չբացած լրազրի համարը, որ ստանում էին ձատրովները քառորդ դար շաբունակի:

Մեծ-կլոր սեղանի հակառակ կողմում նստած էր Փիլիպպը և թէյի հետ ուտում էր մի սկ հայի կտոր, խնամքով հաւաքելով սփառցի վրայից վշանքները: Փիլիպպը ձեռք չէր տալիս պարսիմատներին և սպիտակ հացերին, նա չէր սիրում սպիտակ հայ: Նա հագած էր իր վրայ մութ գոյնի մահուտի շապիկ, գոտեսորուած գիմնազիօնական գօտով պղնձեայ զլխով: Նորա կարճ, սի և դեռ լուացուելուց թաց ու չսանրուած մազերը ցցուել էին և ընկած էին ճակատի վրայ անկանոն թեկերով: Բաժակի կողքին նորա առաջ դրուած էր բաց գիրքը, և նա, սեղանի վրայ ճկուած և փշանքները ուտել վերջացնելով, արագութեամբ կարդում էր երես երեսի յետեկից:

Վաղորդեան արեգակի կարմրագոյն ճառագայթները շերտերով ընկնում էին յատակի վրայ: Բայց պատուհանից ներս էր լցուում սենեակը թարմ, զով օգը, երեւում էր կապոյտ երկինքը և լսում ճնճղուկների ճռուղինը... Իսկ սենեակում լսութիւն էր: Փիլիպպը նստած էր խորասուզուած ընթերցանութեան մէջ, ծերուկը շարունակում էր լուռ ծիւել և ծխախոտի կապտագոյն ամպի միջից յաճախ նայում էր որդու ցած խոնարհած զլխին:

Ալէքսանդր Վասիլիեվիչ ձատրովը արդէն 65 տարեկան էր, բայց բաւական լիքը, ամուր կազմուածքը, ըստ երեսյթին, խոստանում էր նորան երկար, առողջ և հանդիստ կեանք: Նորա միծ և բարձր ճակատով գլուխը բոլորովին ճաղատ էր, միայն ծոծրակի և քունքերի վրայ պահպանուած էին սպիտակ մազերի սիրաք թեկերը: Երկար ու սպիտակ ընչացքը ցած էր կախուել, իսկ

գեղին—արծաթագոյն մորուքը հասնում էր մինչև կրծքի կէսը: Այդ մեծ, սպիտակ մօրուքը և մատծիոտ, բաց-կուպատպայն, խիտ և բրդոտ ունքերի տակից փայլող, աշքերը տալիս էին նորա ծերացած, կնճռոտ զէմբին շատ յարգելի, նահապետի կերպարանք: Նա հագած էր գորշ գոյնի մահուտ վերնազգեստ, իսկ նրա տակից, պարանոյի վրայ երեսում էր շապկի օձիկը, ասղնեգործած գոյնդրոյն թերձանով, «Լիդայի մատների գործը», ինչպէս ուրով ասում էր ծերուկը: Ինչպէս երեսում է, ծերուկը այդ բուպէին մի բանից անբատական էր. նա սովորականից աւելի ուժեղ ծծում էր ծխամորճ և ունքերը կիտում: Վերջապէս նա տառ լրագիրը, բացեց, բայց առանց կարգալու դրեց ծնկների վրայ:

— Խոկ դու, Փիլիպպ, երեկ դարձեալ կորել էիր,—ահաճութեամբ ասաց ծնկուկը, ուղղելով ծխամորճի ծայրով իր կախ ընկած ընչացքը:

— Դնացել էի նաւահանգիստ, ելիկ երեկոյեան „Իգօր“-ի եկել,—պատասխանից երիտասարդը, զբքից չկարուելով:

— Գա շատ հաշալի է: Դու, կարծեմ, ոչ մի շոգնաւ չես բաց թողնում,—թթու ծաղրով նկատեց հայրը:— Սմենեին չես կարող շտեմուել նաւաստիների և հնոցպանների հետ...

— „Իգօր“-ի վրայ ես ծանօթներ ունեմ...—աշքի ծայրով հօր վրայ նայելով, ասաց Փիլիպպը:

— Այո, ես լաւ գիտեմ, դու ամեն տեղ ծանօթներ ունես, — շարունակեց հայրը փատացնելով ծխամորճը:— Զարմանում եմ եռ քո վրայ... Դու չես որոնում քեզ հաւասար ընկերութիւն, կըրթուած մարդիկ... Եւ դու... դու միշտ մօտենում ես հասարակութեան մըսուրին... Ի՞նչ լաւ բան դրանում: Եւ ի՞նչն է քեզ քաշում այնտեղ: Ասա խոնդրեմ:

— Դու հարցնում ես ի՞նչն է քաշում ինձ դէպի հասարակ բանուոր ժողովուրդը,—խօսեց Փիլիպպը, զիրքը թողնելով:— Երեի այստեղ ժառանգականութիւնն է գործում: Զէ՞ որ տասն գեղջկուհի է եղել...

— Այս, մենակ տատդ,— տարբացած արտասանեց հայրը:— Խոկ քո մնացեալ բոլոր նախնիքդ թէ մօրանական և թէ հօրանական կողմից ուսու աղնուական տահմից էին...

— Ի՞նչ կայ որ: Նշանակում է տատիս գիւղացիական արիւնը աւելի ուժեղ է եղել... Ես ի՞նչով եմ այստեղ մեղաւոր:

— Դատարկ բան է տառածք: Աւղղակի դու ուզում ես լինել այդպիսի մարդկանց շըջանում... ուզում ես դեր խաղալ... Քիզ

համելի է, որ դու նոցա մօտ թանգարակի մէք առաջին տեղին ես բանում...

— Ոչ մի գեր ես չեմ ուզում խաղալ,—իւր կողմից մթագունած պատասխանեց երիտասարդը:— Ի՞նչ կայ որ, նորա էլ խօմ այնպիսի մարդիկ են, ինչպէս և բոլորը...

— Բ-ը: Ասուուծոյ առաջ, իհարկէ, մարդիկ բոլորն էլ հաւասար են...— սկսեց ծերուկը:

— Խոկ քս առաջ անհաւսմր, — ընդհատեց նորան որդին:

— Այո, իհարկէ... անհաւսար են, — բարկութեամբ, շեշտելով ասաց ծերուկը:— Մէկը զարգացած է, միսը—ագէտ, հաւասում է տունի-աէքերին և բոլոր գեերին. մէկը խելօք է, միսը անխելք, յիմար կամ անպիտան, խարերայ...

— Այդ անհաւսարութիւնը մարդիկ իրանք են ստեղծել, խոկ դու ուզում ես պաշատանել նրան, — նկատեց երիտասարդը:

— Ես արդէն մէկ անդամ չէ, որ ասել հմ քեզ, Փիլիպպ...— սկսեց հայրը ձեռքը շարժելով:— Ո՛չ, դու ուղղակի մաշում ես ինձ:

— Խնդրեմ, հայրիկ, ինձ համար մի մաշուիր, — ասաց երիտասարդը շտկուելով և նայելով հօր վրայ:

— Սպասիր, սպասիր, Փիլիպպ, — գողովոյուն ձայնով ասաց հայրը, մատով սեղանին խինելով:— Տեսնենք ինչ կասես, երբ քս որդին խօսէ քեզ հետ այնպէս, ինչպէս դու ինձ հետ ես խօսում:

Եւ ծերուկը նայեց որդու վրայ, վերջինս հօր վրայ.— Նոցա հայացքները պատահեցան իրաբ: Բայց Փիլիպպը չէր թարթում և մի տեսակ յագնած, ախուր կերպով նայում էր հօր աշքերի մէջ:

— Երբ ես կրանենամ չափահաս որդի, ես չեմ կաշկանդի նորա ազատութիւնը, ես կաշխատեմ հասկանալ նորան, և ոչ թէ կպատերազմեմ նորա հետ օրէցօր, ինչպէս դու ես անում ինձ հետ, — կիսածայն ասաց որդին:

— Սպասիր, սպասիր: Կտեսնենք, — կրկնում էր ծերուկը, նորից ծխամորճը ձեռք առնելով և չնկատելով, որ նա արդէն անդել է:

— Բոլոր ցաւը նրանուուն է, որ դու չես ուզում ինձ հասկանալ, — ասաց Փիլիպպը, արմուկները զնելով սեղանի վրայ և նայելով հօրը:— Դու ահա բաժանում ես մարդկանց զանազան պատերով: Կալվինը նոյնպէս բաժանում էր նոցա կորածների և վրկուածների: Խոկ Քրիստոս չէր բաժանում... նոյնպէս և քս սիրելի գլուղը... Ես ահա այժմ...



Եւ Փիլիպպը արագ-արագ թերթելով գիրքը մի քանի երես, բարձր ձայնով կարդաց.

«Այս, բոլոր մարդիկ պարտական են եղբայր լինել, բայց յաճախ աճիւնը հպարտանում է աճիւնի առաջ, թէև երկուսն էլ ոչ այլ ինչ են, եթէ ոչ միայն աճիւն»...

—Իհարկէ, իհարկէ. զիտեմ... զեռ մինչեւ քո ծնուելը ես զիտէի, —անհամբերութեամբ կարեց ծերուկը:

—Ես ինձ լաւ եմ զգում հասարակ ժողովրդի հետ, և ճշմարիտ որ, հայրիկ, ոչինչ վատ բան չկայ զրա մէջ... —շարունակեց Փիլիպպը: —Ինչու ուզում ես անպատճառ ինձ քո ճաշակին դարձնել... Դու կ'հասկանայիր ինձ, եթէ թոյլ տայիր արտայատել իմ միտքը... Բայց զու միշտ ինձ հետ բարկացկոտ ես լինում, —քեզ հետ անկարելի է խօսել:

—Ճիմա ձեզ հետ խօսել կարելի չէ, —անհամբելութեամբ կոչեց ծերուկը, ըստ սովորութեան բարկացած ժամանակ զուն «գուք»-ի փոխելով: —Ձեզ հետ այժմ բոլորսկին կարելի չէ խօսել: Դուք արդէն այնքան խելօրացել էք, զիտէք այնպիսի տէօրիքաներ, .. փիլիսոփայութիւն, որ պատրաստ էք ամենքին սովորեցնել ու համոզել:

—Դէ, տեսնում ես, հայրիկ... զու արդէն... —ասաց Փիլիպպը անբաւականութեամբ նայելով հօր վրայ:

Այդ բոպէին սպասուհի Դունեան մատուցարանը ձեռքին ներս մտաւ:

—Աղջիկ պարոնը խնդրում է սուրճը տանել իւր սենեակը, —ասաց Դունեան, մօտենալով սեղանին:

—Ա-ա: Դու բարեհաճում է նազ—զուզ անել, —յանկարծ փոխուելով և ուրախ ծիծաղելով ասաց ծերուկը ու սկսեց սուրճ ածել: —Ա-ի, ծոյլ... չարաճճի, —շարունակեց ծերուկը, զնելով մատուցարանի վրայ մէկ բաժակ սուրճ, թանձը եփած սեր, շաքար և պաքսիմատի ամանը: —Ասա, եթէ նա մէկ ժամից պատրաստ չինի, ես նորան ջրով կ'թթիմ...

—Ճատ բարի, —ասաց Դունեան, թեթև ժպտալով, ինչպէս վայել է հլու նաժիշտին:

Այդ բոպէին երկու կապտագյն աղանդներ մօտեցան պապուհանին և մնջալով ներս նայեցին: Փիլիպպը առաւ մի բանի փշրանքներ և մօտեցաւ նրանց: Սպաւնիները երեխ արդէն գիտէին նորան և հանգիստ կցցում էին նորա ձեռքից կերակուրը:

—Վայսկա, Վայսկա: Դու խիստ շատ ես ուտում, .. Ո՞ի

զրկիլ ընկերովն, լաւ չէ, —ցած ձայնով ասաց Փիլիպպը, հեռացնելով մէկ շափականց երես առած աղտևուն:

Իսկ ծերուկ զատրովը, հեռանալով անկիւնը, որտեղ զըտնուում էր նորա ծխատուիը, սկսեց մարքել ու նորից լեցնել ծխամուճը:

Սրանից երկու ժամ յետոյ, Փիլիպպը հագնելով զիմնազիօնի սիրտուկը և, ըստ սովորութեան, զնելով զիմնազիօն ծածրակի վրայ, գուրս եկաւ տնից և ծանօթ ճանապահով ուղեսրուեց խուլ և հանգարտ Վոլչի կիոզցը:

Այսակադ, այս փողոցի վրայ ոչ ժիր անցուգարձ կար և ոչ կապքիր էին անցնում. փողոցը ծածկուել էր արօսով, հաւերը հանգիստ շրջում էին այստեղ և այնտեղ և փորփռում էին տւաղը: Նեղ վայտեայ մայթերը (ըստ նոցա «կամուրջներ»), ծակծկուած ու փտած, ոչ սակաւ վտանգաւոր էին անցորդների համար աշնան մատթ գիշերներին. տեղ-տեղ բալորովին մայթ չկար: Փողոցի երկու կողմի տառները ծածկուել էին արօսով, իսկ կանգնած ջրերի երեսը կանաչել էր: Բազարի աղմուկը համարեայ չէր համում այստեղ, լուսում էր միայն գորտերի կրկոցը և երբեմն չների հաջոց: Այս փողոցը բազարի ծալերից մէկն էր, և այստեղից երեւում էր զաշտը և գիշերներունը փոքրիկ եկեղեցիով և բարձր ու նեղ զանգակատնով, որ սպիտակին էր տալիս ծառերի միջից:

Տների մինի առաջ նստած էր մի պառաւ կին, և Փիլիպպը, անցնելով նորա մօտից, կանչեց:

—Բարաջողում, տատի, մնց նո:

—Բարով, ոբդի: Ընորհակալութիւն բարի մարդկանց... հանեցին արեի տակ: Տարմում եմ, —մըթմըթաց պառաւը:

Խանութի գուան մէջ, չէմքին կոթնած կանգնած էր խանութպանը, առողջ, քաջ տղամարդ, բայց գոյնի ջթէ գօանորուած շաղիկով:

—Բարով, Փիլիպպը Ալէքսանդրովիչ, —ասաց նա, զիմնազիօն:

—Բարին արեի, պատուելի պարոն, —պատասխանեց երիտասարդը:

—Միշտ գրքերը վ, —կոչեց նորա յետերից խանութպանը:

—Այս, չուտով քննութիւն է...

—Այդպէ-էս: Լաւ բան է...

Հեռւում մի 5-6 տարեկան մանշուլիկ, ոսները լայն դրած և շարժելով նէտը, դիմաւորեց նորան խստած ձայնով.

—Պայոն զատրով, ու ժում էք արջակեմ և շպանեմ ջեժ:

—Ոչ, Դերաս, ինդրեմ մի սպանիր,—ծիծաղելով ասաց նորան Ֆիլիպպը:—Ես գեւ ուզում եմ ապրել:

—Ըհ-ը: Վախենում եշ ինչանիջ, —կոչեց փոքրիկ զինուորը, նէտը ձեռքում շարժելով:

Մէկ խօսքով, այստեղ ամեն բայլափոխին Ֆիլիպպ զատը-րովը ծանօթներ ունէր: Այստեղ մինչեւ անգամ շներն էլ ճանաշում էին նորան:

Երբ Ֆիլիպպը մօտեցաւ վարդագոյն տանը, գարնանային արել խաղում էր նրա պատերի և սպիտակ, փայլուն, նոր փերանորոգուած և գեռ չներկուած կտրի վրայ: Մտնելով դռնակից բակը, Ֆիլիպպը մօտեցաւ բաց պատուհանին և սարի մատների վրայ բարձրանալով, նայեց ներս: Այնտեղ պատուհանի մօտ աթոռի վրայ նստած էր մի զտուամեալ ծերուկ, անկենդան գեղնագոյն դէմքով, սպիտակագոյն երկար կտաւէ սիւրտուկով և, իւր գողգողացող գլուխը խոնարհած, շփում էր ծնկների վրայ քթի թաշկինակը և երբեմն ինքն իրան քթի տակ փնժփնժում:

—Նիկիաը տանն է, —հարցրեց նորան Ֆիլիպպը:

Ծերուկը կամաց շարժուեց և դարձաւ դէսի նա:

—Ոչ... գնաց տախտակի, —մշմշաց նա:

—Իսկ նաստեմն:

—Նաստեան պէտք է որ ագարակում լինի... ագարակումն է նաստեան... Այդ բովէին Ֆիլիպպը լսեց՝ վերեւում ճղոց և գլուխը բարձրացրեց: Փոքրիկ մոխրագոյն մի գլուխ գուրս սողաց սարեակարնի ճիրուածքից և երկու մութ, սուր աշքեր նայեցին եկուորի վրայ:

—Սարեակները եկել են, —նկատեց Ֆիլիպպը:

—Ճատ ժամանաէ չէ եկել են... երգում են, —մրթմբթաց ծերուկը:

Եւ մի վայրկեանից յետոյ նա դարձեալ շփում էր իւր թաշկինակը, իսկ նորա շրթունքները ահճայն շաբժում էին... նորա խոր ընկած աշքերը ժրտում էին րոլորովին անմիտ, նրանք կարծես նայում էին շատ հեռուից, բալորովին այլ աշխարհից... Ծերուկը կարծես ճիշտ որ չէր ապրում, այլ երազում էր իր երազները ընդունում էր իրականութեան, իսկ իրականութիւնը երազների տեղ: Սառն, հանգիստ անտարերութեամբ էր վերա-

բերում նա դէսի բոլոը շրջապատողները: Նիկիտան և նաստեան այնպէս էին, ինչպէս և նորա պատուհանի վերել ծըւծուսդ սարեակները և այդ նորա հետ խօսող երիտասարդը, դոքա նորա համար երկայական մի բան էին, և նորա միտքը չէր կանգնում նոցա վրայ:

Փիլիպպը անցաւ տաշեղներով և փայտի կտորներով լցուած բակից և մտաւ ագարակը: Այնտեղ ձգուած էին մի երկու տասնեակ մարգեր, իսկ պատի երկարութեամբ բուսել էին խտ մորենի և հաղարջի թփեր, այստեղ և այնտեղ տեսնում էին եղինջ և կռատուկի լայն տերեները: Ակօնների մէջ և մարգերի կողքին աճել բարձրացել էր խաշւաշի գորշագոյն բոյսը, արօտների մէջ գեղնին էին տալիս կաթնածաղիկ և վայրի եղերգակ: Ազարակի մի անկինում կար փոքրիկ ծաղկած լճակ, իսկ միւս անկինում սօսիների ստուերի տակ գտնուում էին երկու նստարան և մի փայտից կոպիտ շինուած սեղան:

Այդ նստարաններից մէկի վրայ նստած էր նաստեան ձեռագործով. սեղանի վրայ ընկած էին շորեղէնի կարոներ, թեր և կանգնած էր տանու շինած ասեղնագործ մի տիկին¹⁾: Սղջիկը հասարակ, մութ-մոլխարագոյն ջթէ հագուստով և պարանոցի սպիտակ թաշկինակով էր: Նորա սկ մաղերը հիւսուած էին մէկտեղ և լաւ սանրած, միայն քունքերի վրայ կախուել էին անհնազանդ գանգուրներ: Նորա նիհար, գունատ, մութ փայլուն աշխերով գեմքը, բարակ, շիտակ քթով և փոքրիկ, բայց սիրուն ճակատով, շատ դիւրեկան էր: Աղջիկը չէր նկատում Ֆիլիպպի մօտենալը և ցած, քթի տակ երգում էր:

«Այ, ծաղիկներ, իմ գաշաի ծաղիկներ,

ի՞նչ էք նայում ինձ, մոյգ-կապոյտ ծաղիկներ:

Եւ ինչո՞ւ էք զուք տրամում

Գայնան այս ուրախ օրին»..

Քայլելի ձայն լսելով, աղջիկը լոեց և բարձրացրեց զլուխը:

—Ա-ա, վազուց է ինչ չէք երեսում... վազուց, —ուրախուրախ ասաց նա: —Ի՞նչպէս են ձեր զարձերը: Ինչո՞ւ զուք այսօր այդպէս տրտում էք:

—Հօրս հետ խօսակցութիւն ունեցայ այսօր, —ասաց Ֆիլիպպը, նստելով նստարանի վրայ և ձգելով սեղանի վրայ իւր

¹⁾ Թարգ. ծանօթութիւն:—Այդպէս տիկիները շնուռմեն բարեկից և կառուեղէնները և դնում են կարե սեղանի վրայ, կօծեն առելիներ ամբացնելու համար:

գրքերն ու տետրակները:

—Եւ, երկի, անսախողժ խօսակցութիւն:

—Մենք նորա հետ ախորժելի խօսակցութիւն չենք ունենում,—ասաց Փիլիպպը:

—Պէտք է զիջող լինել դէպի ծերերը... նոցա հետ խիստ լինել չի կարելի,—նկատեց աղջիկը:

—Զեղ հեշտ է դատելը, երբ գուրք այդպէս հանգիստ էք,—ասաց երիտասարդը:—Դուք ձեր հիւանդի մօտ ամեն բան տանում էք... ուրիշը ձեր տեղը վաղուց փախած կ'լինէք... Դուք հրեշտակի համբերութիւն ունէք:

—Եւ ճիշտ հրեշտակի,—թեթև ժպիտով ասաց աղջիկը:—Ա'խ, այս գիշեր ինչպէս ծանր էր նա... եղբայրս գնաց բժիշկ կանչելու...

—Իսկ բժիշկը ի՞նչ ասաց:

—Եյ, ի՞նչ պիսի ասէք... ասաց, որ այդպէս էլ պէտք էք սպասել, որ նա օրէց-օր կ'վատանայ... Զատ կ'զիմանայ, այդ է բանը,—ասաց աղջիկը մատնոցի ծայրով մտամոլոր հարթելով կարը:

Երբ աղջիկը մտքի մէջ ընկղմուեցաւ, նորա աշքերը ստացան խղճալի, ողորմելի արտայայտութիւն, և այդ արտայայտութիւնը տալիս էր նորա նիհար, գունատ դէմքին մի տեսակ նրան միայն յատուկ բնաւորութիւն: Այդ բովէներին կարծես նա տեսնում էր իւր առաջ մի որ և է յուզիշ կամ խիստ ծանր պատկեր և կարծես մէկին աղաշում էք, մէկի համար ինդրում էք ներումն...

Լուլթիւն էք ագարակում: Բակից համնում էք ճնճղուկների ճաճուոցը, և լսում էք հարեւն պարտիզում իրանց բոյների մօտ հաւաքուած ագուաների կոռոցը:

—Ո՛րբան գուք բարի էք, նաստեա,—ասաց Փիլիպպը, նայելով աղջկայ վրայ:

—Դուք միշտ աշխատում էք, միշտ բաւական... իսկ իսքոյը...

—Ա'հ, 'ի դէպ, Փիլիպպ Ալէքսանդրովիչ...—ընդհատեց նորան նաստեան:—Զատ ժամանակ չէ ես դարձեալ տեսայ ձեր բրոջը... նա չգիտեմ որտեղից, վերադառնում էք... ի՞նչ սիրունն է նա...

—2արածճի,—ինքն իրան նկատեց Փիլիպպը:

—Դէհ, տեսէք... եղբայրները միշտ այդպէս են վերա-

բելուում դէպի քոյրերը: Զեր քէֆովը լինել դժուար է...—ծաղկելով ասաց նաստեան:

—Իսկ նիկիտան միթէ վատ է վարւում ձեզ հետ:

—Օ՛, այո, միշտ կուտում ենք... նա միշտ նեղանում է իմ վերայ...

—Եթէ ես լինէի՝ ձեր եղբայրը... այն ժամանակ

—Այն ժամանակ կսկսէիր ինձ ծիծել,—կտրեց նորան աղջիկը:

—Ո՛չ չիմացաք,—նորա տոնով, ծաղրելով պատասխանեց Փիլիպպը:—Ես ձեզ շատ կ'սիրէի...

Թեթև, հազիւ նկատելի կարմրութիւն երկաց աղջկայ այտերին: Նա ուրախ ծիծակեց և այնպէս պայծառ, վիպաքշնով նայեց գրքերը քրքրող Փիլիպպին, որ վերջինս կարծես շփոթուեց:

—Այդ գուրք այժմ այդպէս էք ասում, իսկ այն ժամանակ կարելի է նիկիտից ոչ պակաս կնեղանայիք իմ վրայ...—կատակով ասաց աղջիկը:

—Ա՛յ, ոչ... այդ արդէն երբէք, —ոգեորութեամբ ասաց երիտասարդը, և, նայելով այդ բոպէին նորա դէմքին, կարելի էք հաւատալ նորա խօսքերին:

Փիլիպպը կարծես ուզում էք նայել նորա վրայ, գուլխը բարձրացրեց, բայց աւելի ես շփոթուեց և, ունկերը կիսելով, յանկարծ ընդունեց խիստ լուրջ, գործունեայ կերպարանք:

—Այսօր, նաստեա, մենք դաս չենք ունենալ,—ասաց նա, քիթը խոթելով գրքի մէջ..., ինձ պէտք է պարապել... Վաղը քննութիւն է:

—Պարապեցէք, պարապեցէք: Ես ձեզ չեմ խանգարիլ շապառվ ասաց աղջիկը:—Իսկ եթէ հարկաւոր է, ես կ'հեռանամ...

—Ո՛չ, ինչու համար...—կանգնեցրեց նորան երիտասարդը:—Ա՛յ, ես ի՞նչ կանեմ... լաւ է գետնի վրայ կպառկեմ: Այդպէս աւելի յարմար կլինի, —ասաց նա և, հաւաքելով գրքերն ու տետրակները, մեկնուեց ծառերի տակ:

Աղջիկը կռացած աշխատում էք, Փիլիպպը, ըստ երևոյթին, նոյնպէս խօրասուզուել էր իւր պարապունքի մէջ, և նաստեան շատ զարմացաւ, երբ յանկարծ լսեց բոլորովին տիսկերագիտութեան չվերաբերուած մի հարց.

—Իսկ ի՞նչ էք գուրք այժմ գործում:

—Կարում եմ Պրոխորովնայի որդոց հագուստները...—պատաժանեց աղջիկը:—Նա խեղճը բոլորվին ժամանակ չունի: Հարշարւում է նա նոցա հետ...»

Եւ նորից լռութիւն: Լսում է միայն գրքի թերթելու ձայնը և ճնճղուկների անվերջ ճճուցը ու ագուաների կանչը հարևան պարտիզում: Այդպէս անցնում է այլ կա կէս ժամ, և նորից բայցականչութիւն.

—Նաստեա, նայեցէք, թըռթուը...»

—Ո՞րտեղ է, ո՞րտեղ:

—Այ Փետեանակից բաղանիսի յետեկց է բարձրանում... այ... տեսնում էք: Եւ ճշմարիտ, ոչ այնքան հեռու, ճոճուալով և արեի տակ փայլելով, թոշում էր դէպի կապոյտ երկինքը սպիտակ թղթէ թըռթու, երկար ջլոպի պոչով: Քամին էր արդեօք թոյլ և անհաւասար, թէ արձակողները հմուտ չէին գործին, միայն թըռթուը չկարողացաւ շատ բարձրանալ, պտտում էր և թուլանում, կարծես ամեն բոպէ վայր ընկնելու պատրաստուելսկ: Թէկ նաստեան, ըստ երեսոյթին, մեծ էր Փիլիպպից, բայց զարձեալ նոյնքան կենդանի հետաքրքրութեամբ էր հետեւում թըռթուի թոփշըն, որքան և Փիլիպպը: Քաղաքի կեանքի շշուկը և նրա ալէկոծութեան աղմուկը այստեղ չէր համուում: Կենդանացած և ամեն բան կենդանացնող ընութեան աղեցութեան տակ, մայխսեան պարզ, հանդարտ և քաղցր տպաւորութեանց տակ, երիտասարդները զգում էին իրանց մէջ ուրախ և լուսաւոր զգացմունք և այդ բոպէին անհոգ և ուրախ էին, ինչպէս մանուկներ...»

Սակաւ են կեանքի մէջ այդպիսի հարշալի բոպէներ, դրա համար էլ մարդիկ գնահատում են նրանց, գնահատում են աշխարհիս բոլոր գանձերից աւելի, և նրանց մասին յիշողութիւնը պահպանում են մինչև գերեզման:

—Կընկնի, կընկնի,—յուզուելով ասում էր Փիլիպպը, և կարծես բարձրանայն մտածելով:—բռնում են... յիմարներ: Եւ ինչից են վախենում...»

—Ո՞չ ոչ: Բարձրանում է... կանչեց նաստեան, —Օ՛հ, ինչպէս լաւ է... բարձր—բարձր...»

Թըռթուը բարձր բարձրացաւ գէպի երկինք, բայց յետոյ դռուալով և իւր ջլոպի պոչը ծռմոելով, նորից ցածացաւ, և, ինչպէս մի կենդանի էակ, որ տեսնում է իւր համար սիրտ որս, յանկարծ թուաւ գէպի ցած:

—Այ, անխելքնե՞ր,—բարկութեամբ ասաց Փիլիպպը, —շփահն ժամանակին հեռանալ...

Մայնում է կէս ժամ և աւելի: Արել բարձրանում է ծառերի յետեկց և սոքա արգէն ստուեր չեն ձգում: Արել չի թողնում աշխատել, և նտստեան յետեւ է անում նրան: Առաջուայ նման դարձեալ լսում է ճնճղուկների ճաճոցը և պուաների կանչը, բայց գրքի թերթելու ձայնը չկայ: Այսպիսի լսութիւնը աղջկան մի քիչ կասկածելի է ժուում:

—Փիլիպպ Ալէքսանդրովիչ, —կոչում է նա կիսաձայն:

Պատասխան չկայ:

Դուխը կախած գրքի վրայ և կիսով չափ ձեռքով ծածկած, «Փիլիպպ Ալէքսանդրովիչը» խոր քնի մէջ է: Գլխարկը վայր է ընկել արօտների վրայ: Արել կիզում է...»

—Խե՞զ, ինչպէս նորա յոգնում են այդ քննութիւններից, —շնչաց նաստեան ինքն իրան, հանեց զիկց թաշկինակը, մօտեցաւ քնողին և, կոահալով, զգուշութեամբ ծածկեց նորա պլուխը:

Աղջիկը դարձեալ նստում է աշխատանքի, բայց յաճախ նայում է քնողին: «Ճաւ չէ նորան տանիր...—մտածում էր նաստեան: Թէկ նա ամենը չի ասում, բայց կարելի է գուշտկել... Միթէ նա կարող է մի բան թաքնել: Զէ որ նա ամբողջովին, նորա հոգին այնպէս է, ինչպէս ափի մէջ դրած...»

Նաստեան ժպտում է: Նա յիշում է այն ժամանակը, երբ Փիլիպպը առաջին անգամ նոցաւ տունն եկաւ... Եւ այժմ պատկեների ու երեսոյթների մի ամբողջ շարք անցնում է նորա առաջից:

Տրեսկինաները ծանօթներ քիչ ունէին: Իհարկէ արհետաւոր երիտասարդութեան մէջ նիկիտը ծանօթներ ունէր, բայց նորա շապ քիչ էին յաճախում նոցաւ տունը: Ֆիդական հետաւոր ազգականները միայն ծախսի օրերը քաղաք գալով, մի-մի ժամանակ ակն էին տալիս նոցաւ, խանութպան Մակսիմովնան տարին երկու-երեք անգամ գալիս էր նաստեայի մօտ թէյի և հարեսն Աստուածամու գերեզմանատան պահապանը տօներին մտնում էր նոցաւ մօտ վոքը ինչ ծերուկի հետ զրուցելու և մի-մի բաժակ կոնծելու համար: Նիկիտը չունէր բարսեկամներ, նաստեան չունէր ընկերուհիներ... Դրացիները նոյն պէս, ինչպէս և առհասարակ այդ քաղաքացիք, հեռու էին կենում Փրոլկա Տրեսկինայից, երես էին դարձնում նորանից և

այդ երեսղարձութիւնը անցնում էր և նորա անմեղ ընտանիքի վրայ: «Փրոլկայի» և նորա վարդապոյն տան վրայ կարծես կար անմաքելի մի բիծ, և այդ բծի ստուերը կարծես արտացոլում էր և նորա որդոց վրայ: Փրոլ Տրեսկինը արդէն վաղուց վաստակել էր այդ քաղաքում տիտոր հռչակ, նա և՛ ծերերին, և՛ փոքրերին զգուանք ու վախ էր ազգում:

Բանն այն է, որ մինչև 1836 թ, այսինքն մինչև հասարակաց մարմնական պատիժների վերանալը, Փրոլկան դահճի պաշտօն էր վարել: Քառորդ դարից աւելի է անցել այն օրից, երբ դադարել են մեր չուկայի նիկոլսկի հրապարակի վրայ կառափնարան կանգնեցնելուց, և Փրոլկան բեմից հեռացել է: Ծնուեցան և կեանք մտան նոր սերունդներ, բայց ծանը, մթին անցեալը չէր մոռացւում: Ինարկէ այն ժամանակ շատերը չգիտէին Փրոլկային, երբ նա գործում էր և միայն իւր արտաքինով վախ էր ազգում: Բայց «լուրերով աշխարհն է լցուած», ծերերը չէին լռում անցեալի մասին, և Վոլչիյ փողոցի վարդագոյն տան վրայ առաջուայ նման գրօշմուած էր օտարութեան կնիքը, թէն ոչ այնքան պարզ, ինչպէս առաջ:

Փրոլ Տրեսկինը վարում էր փակուած կեանք, ժամանակ-ժամանակ սաստիկ խմում էր, փակուած իւր սենեակում, խմում էր ամբողջ շաբաթներով, խմում էր այն աստիճանի, որ սկսում էր լսել ձայներ և տեսնել երկոյթներ: Եւ այն ժամանակ խղճալի ծերուկը, խճճուած մազերով, դողալով իւր ամբողջ վիթխարի, ծանը մարմնով և գժուար չնչելով, վախի և յուսահատութեան մէջ պաշտպանում էր սարսափելի պատկերներից, որոնք երկում էին նորան արբածութեան զառանցանքում... Նա արդէն 70 տարեկան էր, և նորա, երեմն ուժեղ, մարմինը բոլորովին քայքայուել էր: Վերջին տարիները նա որդու օգնութեամբ դնում էր միայն գերեզմանատան եկեղեցին, կանգնում էր այնաեղ ձափակովմեան դասում պատուհանի մօտ, և համարեա ամբողջ ժամասացութիւնը լսում էր ծնկաչոք, ծանը ախ ու վախ քաշելով և շրթունքները շարժելով:

Անցեալի մասին նա երբէք չէր յիշում: Անցեալը նորա համար կարծես գոյութիւն չունէր: Միայն մէկ անգամ, այն էլ շատ վաղուց, խօսակցելով իւր հին ծանօթ, եկեղեցեցու պահապան հվանի հետ, արբած խօսեց այդ մասին:

—Իմ վրայ նայում են, ինչպէս կատաղած շան վրայ...— ասում էր Փրոլը, տատանուելով սեղանի վրայ:—Ինքս կալանա-

ւոր էի, բանդում, ուզում էին տաժանակիւ աշխատանքի ուղարկել՝ ուրիշների պատճառով, երգում եմ, ինչպէս Աստուծոյ առաջ: Բայց և այստեղ ազատութիւն էին տալիս, փող... իսկ ապրել ամենքն էլ են ուզում... Ինձ ինչ... Յանցանքը իմը չէ... Հ-ը, ինչ ես նայում:

—Է՞հ, Ֆրոլ Սեմեոնիչ, արժէ անցեալի մասին յիշել...— Նկատեց պահապանը, անհանգստութեամբ նայելով իւր գըր-գուած խօսակցի վրայ:

Պահապանը վախնում էր, որովհետեւ Ֆրոլկան դեռ ոչ մի անգամ խօսը չէր բայց արել նորա առաջ, թէ ինչպէս ինքը դահճին է եղել, և իվանը աշխատում էր այդ անախորժ, ծանը նիւթի մասին խօսը կառուը ձգել:

Այժմ նիկիտին և նորա քրոջ, իհարկէ, ոչ ոք չէր նեղում, և թէպէտ դրացիք վերաբերում էին գէպի նոցա չորութեամբ և սառնութեամբ, բայց չէին խորշում, ինչպէս առաջ: Մանկութեան ժամանակ շատ ծանը էր նոցա զբութիւնը: Նաստեան յիշում էր, թէ ինչպէս փողոցի երեխաները շպրառում էին նոցա վրայ քար, կեղտ, փայտ, բարկացնում էին նոցա և յետեներից կանչում, «Ռ-ւ-Ռ-ւ, պիիծ: Գահճի ծնունդ»: Նիկիտը կաւում էր երեխաների հետ և կաւում էր կատաղի, իսկ նաստեան լաց էր լինում և չէր հասկանում, թէ ինչո՞ւ երեխաները այնպէս հալածում և ատում են նոցա, քանի որ նորա ոչ ոքին շարիք չեն արել: Ցետոյ, արդէն, եղբայրը բացատրեց նորան գործի էութիւնը, բայց նորա բացատրութիւններից յետոյ էլ դարձեալ, նա իւր որտի խորքում զգում էր, որ մարդիկ չափազանց անարդար են վարում նոցա հետ: Այս դառն, հասակին անհամամատ ծանը և խսար մաքերը, իսուր վիբաւրանքը, մշտական մենակութիւնն ու օտարութիւնը թողին նաստեայի բնաւորութեան վրայ տիտոր հետք և տուին նորա աշքերին այն առանձին, գանգատաւոր, աղերսող արտայայտութիւնը, որ այժմ այնպէս ակներե նկարում էր մտածողութեան բովչներին: Տանն էլ նաստեան լաւ չէր ապրում. եղբայրը լուռ էր, իսկ հայրը, արբած, հաւասարապէս վախեցնում էր նորան թէ յիշոցներով և թէ փաղաքանքով:

Նիկիտը աւելի սակաւ սրտին առնող, աւելի հանգիստ բնաւորութիւն ունէր, և դրա համար էլ մանկութեան ծանը տպաւորութիւնները արին միայն այն, որ նա տարէց-տարի աւելի քաշուող և լրասէր գարձաւ:

Ֆիլիպպ Շատրովի հետ ծանօթութիւնը պատահական էր՝ հինգ տարի դրանից առաջ; Ֆիլիպպը պատուիրել էր նիկիտին շինել մի զբասեղան: Զըուցի էին բոնուել... Ֆիլիպպը շատ էր մօտենում արհեստաւոր մարդկանց հետ: Ստաղձագործը խելօք երիտասարդ էր, գրագէտ, չարքեցող, հանդարտ, և Ֆիլիպպը շուտով բարեկամացաւ նորա հետ: Թէս Նիկիտը վեց տարիով մեծ էր, բայց Փիլիպպը աւելի զարգացած էր, աւելի աշքաբաց, և դրա համար էլ տարիքի դանազանութիւնը արգիլք չէր լինում նոցա բարեկամութեան: Զատրովը պատուիրեց Նիկիտին շինել մի արհեստագործի դազգահ, և ինքը սկսեց նորանից ատաղձագործութիւն սովորել: Պարզ, ուրախ և շատախօս պարոնիկը դիւր եկաւ լուակեաց Նիկիտին: Քոյլը սկզբում վախենում էր «օտար մարդուց», անվստահութեամբ էր վերաբերում դէպի նա: Նորա հանգիստ, աւանձնացած կեանք էին վարում, և յանկարծ դուրս է ընկնում մի նոր ծանօթ, և այն բոլորովին ուրիշ աշխարհից: Բայց այդ վախի և անվստահութեան ժամանակը արգէն վազուց անցել էր...

Ֆիլիպպը արգէն վազուց «իւր մարդ» էր դարձել վարդագոյն տան մէջ: Յաճախ ձմերնային երկար երեկոները անց էր կացնում Նիկիտի արհեստանոցում: Նորա մէկ խօսում էին, մէկ Փիլիպպը կարգում էր մի բան բարձրաձայն, իսկ ատաղձագործը աշխատում էր, կամ հանգստանում էր իւր դազգահի վրայ նստած, երկար սպիտակ գոգնոցով և սև փոքրիկ կաշուէ երիզով գլխի չորս կողմը փաթաթած: Ընթերցանութեան ժամանակ սովորաբար նաստեան էլ էր գալիս արհեստահայ իւր կարով: Քոյլը և եղբայր, ապրած լինելով առանձնացած, ընտելացել էին Փիլիպպին, ոչ պակաս, քան թէ Փիլիպպը նոցա... նաստեան նորան շատ էր հաւանում, օրիորդին հաճելի էին նորա սրտաբացութիւնը և շիտակութիւնը, նորա պարզ խօսքերը, պարզ ճաշակը, նորա խեղճ և արհեստաւոր գասակարգի հետ ծանօթ լինելը, նորա մերձաւորի անբաղդութեան ցաւակից լինելը...

Արգէն երեք ժամն էր, երբ Փիլիպպը արթնացաւ:

— Այսուեղ ձեղ մօտ ի՞նչպէս լաւ է, նաստեա, — ասաց նա յորանջելով և չորս կողմը նայելով: — Լսու, ամեն տեղ կանաչ... չորս կողմը ծաղիկները: Կարծես մենք քաղաքում չենք... Իսկ այս թաշկինակը ո՞րաեղից է:

— Ես ձեր գլուխը ծածկեցի արեից, — պատասխանեց նո-

րան աղջիկը:

— Զէն կենաք: Բայց և այնպէս խղուր դուք ինձ չէք արթնացրել, — ասաց Գիլիսլաղը:

— Ես ձեղ մեղքացայ... Դուք այնպէս խոր քնած էիք...

— Զատ էլ... 2է որ ինձ ժամանակ է տուն երթալու: Մենք ճաշում ենք ժամը երերին...

— Ճաշեցէք միդ մօտ, — ասաջարկեց նաստեան: — Ճիշտ որ մնացէք: Սոված չէք մնալ...

— Դիտեմ, որ սոված չեմ մնալ, բայց պէտք է երթալ... թէ չէ ծերուկը գարձեալ կակսի վնթինթալ... — ասաց Գիլիպպը, վեր կենալով:

III

Գիլիպպ Շատրովը միջակ էր սովորում, միշտ փոխում էր դասարանը, միայն վերջի դասարանում նստեց երկու տարի, որովհետեւ տարուայ ընթացքում երկար ժամանակ հիւանդ էր եղել: Ոչ մի պարզէ, ոչ գիրք, ոչ գովասանական թերթ, նա չէր ստանում, որի պատճառով հայրը շատ էր ցաւում: Փիլիպպի ասաջադիմութիւնը փայլուն չէր, այլ միջակ, հաւասար:

— Թոնէ մի անգամ միսիթարէիր, բերէիր մի գովասանական թերթ, — ասաց մէկ անգամ Ալէքսանդր Վասիլիինիշը: — 2է... Ուշիների որդիքը ուրախացնում են ծնողներին, իսկ իմ որդիս միշտ դատարկ ձեւներով է տուն վերադառնում:

— Բոլորեցեան խօմ առաջինը լինելու չե՞ն, — ասաց որդին:

— Դէհ, հիմա արի խօսիր... — յուսահատութեամբ ասաց ծերուկը, շարժելով ծխամորճը:

— Այ, մեր Լիգան գիմնազիոնում առաջինն էր, բայց խօմ գորանով լաւ շարձաւ, — շարունակեց Փիլիպպը:

— Խնդրեմ, քո գործը չէ այդ մասին դատելը... — նեղացած նկատեց նորան հայրը: — Նա ինձ համար կատարեալ միսիթարութիւն է ծերութեանս տարիներում... Ես ի՞նչ պիտի անէի առանց նորան... Դու խօմ նորա մկոյթին շարժես: Քո և նորա մէջ այնքան տարածութիւն կայ, որքան այսաեղից երկնքի աստղերը...

— Ես այդ արգէն լսել եմ, — ասաց երիտասարդը, և նորա երեսը մթագնեց:

— Ել լաիր, — բարձացած ձայնով ասաց ծերուկը:

— Ոչնչով նորան այնքան չէր կարելի ցաւացնել, որքան

նորա սիրելու մասին վաստիությունը: Նա կարծում էր, որ Փիլիպպը բարկանում է, նախանձում է քրոջը, և զրա համար էլ ծերուկը ինքն իրան բաւականութիւն էր համարում ընկած տեղը ստորացնելու «անտառակ որդուն», զգալ տալու իւր անհամակիր լինելը դէպի նա, և անպատճառ համեմատելով կիդային նորա հետ՝ ի վիաս նորա: Երիտասարդը սակայն շատ հեռու էր մէկին աշխարհում նախանձելուց կամ չարութիւն կամենալուց, նամանաւանդ բրոջը, բայց նա Լիդայի մէջ շատ բանի չէր հաւանում, և նա, ըստ իւր սովորութեան, չէր կարողանում կեղծել...

— Միա հէնց այն պատճառով, որ նա քեզ համար ուրախութիւն և միսիթաբանք է, ես շատ բան նորան ներում եմ, իսկ եթէ այդ չ'լինէր...—ասաց Փիլիպպը:

— Նորան ներելու բան չկայ, ինդինմ: Լաւ է քեզ նայես, — կոշեց ծերուկը:

Փիլիպպը այսպիսի գէպքերում սովորաբար լսում էր: Նա քրոջը վատ, շար և անսիբա աղջիկ չէր համարում, բայց նորան զգուելի էին նորա վառասիրութիւնը, ունայնութիւնը, նորա խոնարհուկը աշխարհային վայելքների առաջ, յաճախ նորա թեթևամատութիւնը և քմահամութիւնները, նոյնպէս և նորա շաղորդութիւնը և հօր աշքը մտնել ձգտելը: Նորա հաճոյանալը և փաղաքանքները յաճախ թւում էին նորան ոչ բոլորովին անկեղծ: Եթէ հայրը առիթ տուած չլինէր, Փիլիպպը չէր համարձակուիլ ակնյայտնի խօսել քրոջ մասին, մանաւանդ, որ նա արդէն զգում էր, որ ծերուկը նորան համարում է նախանձու, և դուցէ, արտաքուստ նա կարող էլ էր նախանձու երեալ:

Հայելով հօր գանգատներին ու յանդիմանութիւններին և Լիդայի ծաղրին, Ֆիլիպպը շաբունակում էր ասած զնալ ուսման մէջ առանց աշքի ընկնելու քայլ առ քայլ... Նա սիրով պարագում էր բնագիտութեամբ, աշխարհագրութեամբ, մասամբ պատմութեամբ և գրականութեամբ, մնացեալ առարկաներով, որոնք գտնում էին գիմնազիոնի ծրագրի մէջ, նա շատ քիչ էր հետաքրքրում: Նա սիրում էր կարգալ պատմական գրքեր, ճանապարհորդական նկարագրութիւններ, բնական գիտութիւններից (Ճեյտէն, չարտիդ, Ռոսմեսլեր, Բէմ—նորա սիրելիներն էին), մի-մի ժամանակ կարդում էր և ըսմաններ: Ընթերցանութեան պատճառով, նոյնպէս և ամեն քայլափոխում, Ֆիլիպպը քրոջ հետ վէճի էր բանում:

— Միշտ քո մօտ այս ֆրանսերէն գլորյակներն են,—ասաց մէկ անգամ Փիլիպպը, քըքսելով քրոջ սեղանի վրայի ղեղնագոյն հատորները:—Ճերքիւիէ, Բուրժէ, Ժորժ-Օնէ... Փու: Ի՞նչ-պէս չես ձանձրանում: Կարծես ուրիշ լաւ գրքեր չկան:

— Օրինակի համար, ինչ կուզէիր, որ ես կարգայի, — ծաղրելով հարցուց կիդան:

— Այ, նորեցս ես կարգացի «Պուրիտաններ» Վալ'տեր-Սկաուի... Ի՞նչ հրաշալի գիրք է, — ուրախ-ուրախ ասաց Լիդան:— Մահու

շափաղութիւններ, դղեակիներ, ճակատամարտներ... Կարդան ինքդ, անուշ լինի: Ինձ հարկաւոր է կեանք, խակական կեանք:

— Կեանք, կեանք, — ծաղրեց նորան եղբայրը:— Ջատ բան ես հասկանում... Իսկ «Պուրիտանների» մէջ միթէ կեանք չկայ: Թէ նրա մէջ աւելի պակաս է կեանքը, քան քո Ժորժ-Օնէի մէջ: Է-ըմ, ոչ, քեզ հարկաւոր է միայն մէր և ըսմանական ինապիկներ, խորհրդաւոր անծանօթներ և տեսակցութիւն, չզիտեմ որտեղ՝ «տուերների տակ»...

— Ցիմար, — արհամարանքով արտասանեց Լիդան:

— Դու, իհարկէ, խելօք ես, — ասաց Փիլիպպը:

Քրոջ և եղբօք մէջ խօսակցութիւնը յաճախ վերջանում էր այսպիսի փոխադաբձ սիրունութեամբ:

Ընդհանրապէս Փիլիպպը նստողական, առանձնասեննեակի պարագմոնքի հակումն չունէր, սակայն նա խիստ ընդունակ էր ամեն տեսակ ձեռքի աշխատանքի, և նա միշտ ձգտում էր լինել ագտրակում, բակում և փողոցում: Նա սիրում էր փայտ կոտրել, մարգեր փորել, ծառեր ու թփեր անկնել և այլն: Նա աւելի ես ձգտում էր զուրս նրա համար, որ նոցա ընդունարանութիւններ հասարակութիւններ նորան հաճելի չէր, իւր կոպիտ ժարգունով՝ նա այդ ընկերութիւնը կոչում էր «փոխադապական»... Ֆիլիպպը անարժան գործ չէր համարում պարագելու այնպիսի ձեռագործով, ինչպիսի է գուլաց գործելը, ժապավագներ և ցանցեր կապելը, բայց ամենից աւելի վերջառաւում էր այնպիսի աշխատանք, որ պահանջում է ֆիզիքական ոյժ և ճարպիկութիւն:

Փիլիպպը շատ էր սիրում զիւղը, ընութիւնը և «բնական կեանքը», ինչպէս ասում էր նա, բայց դժբաղբարար նորան չէր յաջողուում զիւղում երկար միալ: Միայն արձակուրդներին

Երբեմն նա հիւր էր գնում մէկ այս, մէկ միւս լնկերոջ մօտ: Սպրելով ընկերոջ տպարակում, նա ամբողջ օրերսվ կորչում էր գաշտում, անտառում և այդ երկու-երեք շաբաթուայ ընթացքում սեանում, սև սատանայ էր գառնում: Նա շրջում էր գիւղերը, ծանօթանում էր գիւղացիների հետ, օգնում էր նոցա աշխատանքի մէջ, մեծ բաւականութեամբ նախաճաշում էր նոցա հետ գաշտում, աղ արած հացը լցնելով բերանը, և այդ նախաճաշիկի վերան վճիռ և սառն ջուր էր խմում: Առաջ գիւղացիները զարմանում էին այդ փոքրիկ պարոնի վրայ, որ սակայն պարոնի էլ չէր նմանում, ծաղրում էին նորան, նորա անչորհքութիւնը, բայց յետոյ ընտելացան, սիրեցին և, եթէ տեսնում էին նորան հեռուից, ասում էին.

— Ահա Ֆիլիպպը օգնութեան է գալիս:

— Բարի տղայ է, — ասում էին գիւղացիք:

— Բայց շատ սև է..., կարծես ագուատի ձագ լինի, — նկատում էին կանայք: — Պարոնի էլ չի նմանում...

— Է՞ն, հիմիկուայ ժամանակս շես կարող ջակել, ով է պարսն, ով ոչ, — պատասխանում էին գիւղացիք: — Պատահում են պարոններ, որ շապիկով են ման գալիս, իսկ մերոնցից ոմանք պինջակով... Իսկ ինչ կոչում ունի... Մարմնի վրայ գրած է ինչ է այդ կոչումը...

Փիլիպպը փորձել էր բոլոր գիւղական աշխատանքները (բացի կալսելը), նա լաւ հնձում էր, հերկում էր, բայց, ինչպէս ինքը խոստավանում էր, «անվարժ»...

— Հերկելը աւելի դժուար է, քան ես կարծում Իի, — ասում էր նա:

Մէկ անգամ Ֆիլիպպը լաւ տրամադրութեան տակ նստել էր քըս սենեակում: Լիդան նոյնպէս հոգույ լաւ տրամադրութեան մէջ էր, քան առհասարակ, որի համար և Ֆիլիպպին թոյլ էր տրուած ծխել և մինչեւ անգամ ոչ մի նկատողութիւն չեղաւ, որի մէջ լսուէր խող խօսքը, երբ նա, հրապուրուելով, խորասուզուց քըս փոքրիկ բազկաթոռի մէջ և ոտները դրեց պատուհանի վրայ:

— Ի՞նչպէս լաւ կ'լինէր, եթէ ես այժմ լինէի գիւղացի, — ասաց նա, ինչպէս շոգեկառքի ծխնելոյզ, ծուլը արձակելով գէպի տատաստաղը, և, կծկուելով, մտածողական հայեացք ձգեց հեռուն, այսինքն հակառակ պատի վրայ, որ ծածկուած էր սիրուն, ծաղկաւոր պաստառով: — Այս, հինց այժմ, գոնէ այն-

քան գիտութեամբ, որքան ես ունեմ... Ապրել գիւղում միշտ մաքուր օգի մէջ, ամբողջ ամառը դաշտում... Ա'լս, ինչպէս լաւ կ'լինէր:

— Այս, գրանից էլ լաւ ի՞նչ կարող է լինել... — Նորա տոնով, ծաղրարար նկատեց Լիդան: — Մի օր էլ քեզ կկանչէին շինական կառավարութիւնը և, զորս դու պատուիրեցեր, գանածեծ կանէին... Հրաշալիք է:

— Բայց ի՞նչ բանի համար, — անբաւականութեամբ հարցուց Ֆիլիպպը:

— Քիչ պատճառ, — պատասխանեց քոյլը: — Կիլաւորէիր գիւղացիներին կամ մի ուրիշ բան...

— Այո... Բայց եթէ, — ըիշ մտածելուց յետոյ, ասաց Փիլիպպը, — եթէ բոլոր գիւղացիք էլ լինէին այնպէս, ինչպէս ես եմ, այն ժամանակ ոչ ոքին էլ չէին ծեծիլ...

— Այս: Մինչեւ առուն ջուր գայ, գորտի աշքերը դուրս կուգայ,... — ասաց Լիդան: — Ատամներդ կկանաչեն մինչև այն ժամանակ, երբ գիւղացիք էլ կունենան այնքան գիտութիւն, որքան, օրինակ, դու ունիս...

Փիլիպպը ստները վայր դրեց յատակի վրայ և մտած կոտութեամբ նայեց առաստաղին, կարծես մի բան հաշուելով և երեակայելով:

— Յիսուն կամ վաթսուն տարիից յետոյ... — սկսեց նա:

— Իհարիէ: Երբ մնիք կենդանի չենք լինիլ, — ասաց քոյլը:

— Ո՛չ, Լիդոչկա, դու բոլորովին այնպէս շես մտածում... — հաստատապէս խօսեց Փիլիպպը: Խօմ առանց այլ և այլի չեն պատժիլ ինձ...

Բայց ինչպէս լաւ կապըէինք: Հայրիկը ձուկ կոբար, իսկ դու...

— Ոչ, սիրելիս, թող: Ես արդէն փոցիս ձեռքիս չէի գնալ դաշտ և ոչ էլ երեք տակ ճկուելով կ'հնձէի...

— Ճքեղ չի լինիլ, սիրելիս, համ, — ծիծաղելով նկատեց Փիլիպպը: — Բայց ինչպէս, Լիդոչկա, քեզ կսպէլը ուռսական շորը... Դու այնպէս հաստ ես ե...

— Դէղէ, ինգրիմ, լեզուղ մի արձակիր, — դաղարեցրեց ներան օրիորդը քմծիծաղ, ցոյց տալով, որ խօսակցութեան այդ ձեւն նորան շատ էլ տհաճելի չէ:

Միայն «ընական կեանքի» մտքով կարելի է բացադրել այն պարագան, որ Փիլիպպը վերջին ժամանակները որոշեց երթալ

ոչ թէ չամալսարան, այլ Անտառային հնսախտուտ: Եթէ կարելի չէ ապրել գաշտում, նա կհոռանայ անտառ...»

Որովհեակ Ֆիլիպպը գիւղացի չէր, այլ տօհմական ազնուական և, սովորելով գիմնազիոնում, գիւղացի դառնալ չէր կարող, զբա համար էլ նա առ այժմ բաւականանում էր միայն նրանով, որ բարեկամութիւն էր սկսել բանուոր դասակարգի հետ և տմեն մի յաջող դէպրում կարդանում էր դուրս սպրտի տնից իւր այդ բարեկամների՝ «հասարակութեան անարտօնեալ խարի» մօտ: Մյդ ծանօթութիւնները պատճառ դարձան մի շարք անախորժ թիւրիմացութիւնների, կուիների և անհամաձայնութիւնների հօր և որդու մէջ:

Եթրուկ զարովը շատ էլ շար և հպարտ մարդ չէր. նա բաւականին կրթուած, կարդացած, մեղմ բնաւոլութեամբ և մերձաւորին ցաւակից լինող մարդ էր: Զխօսելով արդէն այն մասին, որ նա երբէք չէր մերժում ողորմութիւն տալ ալքատներին, հրդէնի ենթալզուածներին, խեղճերին և առհասարակ զրկուած դասակարգին, նա, բացի դրանից, միշտ ուրախութեամբ գնում էր խեղճին օգնութեան, պատրաստ էր խորհուրդներ տալ, մխիթարել և ողորմութիւն տալու մէջ միշտ առաւատձեռն էր: Բայց նորա մէջ խոր արմատ էին դրել ցեղական նախազգացումները, որոնք մշակուած և նոր ոյժ էին ստացած մի շարք նախօրդ սերունդների միջոցով: «Վերմակովդ մեկնիր ոտդ: Ռւրիշի զուռնայի տակ պար մի գալ», նորա սիրելի առածներին էին և կեանքի նշանաբանը: Նա միշտ պատրաստ էր հիւանդին բժկել, դժուարութիւնից հանել մի որ և է պարտապանի, օգնել քաղաքացուն կամ գիւղացուն, բայց օգնել որպէս իշխան, որպէս բարերար, որպէս բարձր մի անձնաւորութիւն: Մտերմանալ խանութպանի, գիւղացու կամ կիսաքաղաքացու հետ, նա համարում էր իրեն համար անկարելի:

— Ի՞նչպէս կարող եմ ես թոյլ տալ ընկերանալ ինձ հետ այնպիսի մի մարդու, որը ինձ չի հասկանում և չի կարող հասկանալ, — ասում էր նա:

Եւ երբ մէկ անգամ նորան հարկ եղաւ իբրև երդուեալ դասաւոր նահանդական դատարանում նստել կողք կողքի մի գիւղացու հետ, որ սովորաբար մաքրում էր նորա բակը, նա, միայն սրտապնդած, հնազանդեցաւ այդ ակամայ անախորժութեան և նստած էր այնպիսի մի տանջալից կերպարանքով, որ ակամայ յիշում էր բըլիտոնէւթեան առաջին դարերի նահա-

տակներին, որոնք պատրաստւում էին հլութեամբ և համբելութեամբ տանելու կատաղած կուպաշաների ամեն տեսակ զրկանիքներին:

Իւր այդ մտքերով նա աւելի մեծ բարկութեամբ էր վերաբերում դէպի որդու ծանօթները. ծերուկին թւում էր, որ Ֆիլիպպը արհամարհանքով է վիրաբերում դէպի առհասարակ գիտութիւնը, դէպի ուսումնականները և գիտակցարար խորշում է զարգացած մարդկանց շրջանից, գերադասելով նրանից, դարբինների և «ծխնելոյդ մաքրուների» ընկերութիւնը (խկապէս Ֆիլիպպը ծխնելոյդ մաքրու ծանօթները չունէր, բայց ծերուկին, չգիտենք ինչու համար, հաճելի էր դասել նորան այդ սեացած, թէկ շատ օգտակար և պատուաւոր գժենալմանների կարգը):

Ֆիլիպպը տեսնում էր, որ իւր ծանօթները հաճելի չեն հօրը, նոցա մասին յիշելը բարկացնում է նսրան, դրա համար էլ նա աշխատում էր հօր ներկայութեամբ չխօսել իւր ատաղձագործների և գարբինների մասին: Բայց միևնույն ժամանակ նա ամեններին չէր կարսդանում մտյնել իւր գլուխը այն միաքը, որ բարեկամութիւնը նիկիտի կամ այնպիսի մի յարգելի ծերուկի հետ, ինչպէս է երկաթագործ և ներկարար Ալէքսէյ Պետրովը, անփայել և գտառապարտելի է, քան, օրինակ, բարեկամութիւնը ակցիզի վերատեսչի կամ մի որ և է ուրիշ աստիճանաւորի հետ... Առաջ հօր և որդու մէջ անհամաձայնութիւնները յաճախ ընդունում էին խիստ սուր բնաւորութիւն: Պատահում էր, որ Ֆիլիպպը ցանկանում էր գնալ իւր ծանօթներից մէկի մօտ, իսկ հայրը բարկութեամբ կանչում էր,

— 2'համարձակուես զուրս գալ: Նստիր, մինա տանը...

Եւ պատանին, ծանը հոգոց հանելով, հեռանում էր իւր սենեակը, և շատ անդամ հարցնում էր ինքն իրան. «Ինչու հայր չի սիրում ինձ» և պատասխան չէր զանում:

Երբեմն Ֆիլիպպին յաջողում էր գուրս սպրաիլ բակից, բայց վերապարձին նորան սպասում էր վոթորիկ:

— Սպասի-իր: Հանգուցեալ տատդ քեզ երես է տուել... Ես քեզ կ'սովորեցնեմ... Սպասիր...

Բայց այդ սպասնալիքների, կանչերի և փոթորիկների ժամանակը անցել էր: Արդէն հինգ տարի է, ինչ որ Ֆիլիպպը օգտում է համեմատաբար ազատութեամբ, իսկ հայրը իրան թողել էր անձեռնմխելի իրաւունք կանչելու և նեղանալու նորա

վրայ առաւօտից մինչև երեկոյ, որ այդպիսով գոնէ մի բանով հալածէ նորան և թունաւորէ նորա գոյութիւնը այն անախորժութիւնների համար, որ սրբին պատճառում էր նորան... Այժմ Ֆիլիպպը անարդել աշխատում էր նիկիտի հետ, տալիս էր նաստեային դասեր, սովորում էր Ալեքսէյ Պետրովի մօտ երկաթագործութեան արհեստը և աշխատում դարբնոցում... Դարբին Վասիլիյ Ֆէօդորովը նորա ամենամօտ բարեկամներից մէկն էր:

Նոյն իսկ օրը, երբ Ֆիլիպպ Շատրովը այնպիսի բաւականութեամբ անց էր կացնում առաւօտեան ժամերը ագարակում նաստեայի մօտ, երեկոյեան ուղերուեց նա քաղաքի ծայրը իւր բարեկամ դարբնի մօտ: Նա մի բանի օր շարունակ գրքի հետ լինելով, այժմ զգում էր անհրաժեշտ կարիք աշխատելու դարբնոցում՝ ձեռները և ստները կեղատելու:

Դարբին Վասիլիյ Ֆէօդորովը նշանաւոր ոյժի տէր էր, բաջ, հսկայ, բարձրահասակ, թուխ, մի քիչ տփուր, խելացի դէմքով: Նա հանդարապարոյ և պարկեշտ էր, ինչպէս գառն, գրագէտ էր, բայց աւելի սիրում էր լսել ուրիշների կարգացածը, սիրում էր դասել կարդացածի մասին...

Նորա սեացած, ծխոտուած դարբնոցը գտնում էր քաղքի արուարձանի վերջին տների յետեր, մի քիչ հեռու ճանապարհից: Սյդ երեկոյ, երբ Ֆիլիպպը մօտենում էր դարբնոցին, նորա տէրը, կանգնած դռան մէջ, սրբում էր կարմբած երեսից քրաինքը և նայում էր ձեռքի տակից արդէն երկրագնդի վրայ ցածացած արեին:

—Ա-ա, զազուց է չէք երեսում, —խօսեց դարբինը, տեսնելով իւր ջահիլ բարեկամին:

—Ինչպէս ես, Ֆէօդորով, —խօսեց Ֆիլիպպը, բարեկամաբար տալով իւր ձեռքը, և նորա ոչ շատ էլ փոքր ձեռքը բոլորովին անյայտացաւ դարբնի մրոտուած ահազին ձեռքի մէջ:

—Այ, էս երկաթացանցն եմ շինում... գերեզմանի համար պատուիրեցին... վերջացնում եմ, —պատասխանեց դարբինը:

—Իսկ կրակ կայ: Տուր փուրսը քաշեմ, —ասաց Ֆիլիպպը և, հանիլով գլխարկը ու սիրառուկը, ներս սուզուեց բաց, զագնի բերանի նման, դարբնոցի սե դռնից:

—Կոյք, եթէ ցանկանում ես, —ծաղրելով նկատեց տէրը և, նստելով դարբնոցի դռան մօտ լնկած սպիտակ քարի վրայ,

սկսեց լեցնել իւր կարճիկ ծխամորճը: Ֆիլիպպը փուրսով բորբոքեց քուրայի մէջ կրակը, վերցրեց այնտեղից ունելիքով շիկացած երկաթը, գրեց նրա մէկ ծայրը սալի վրայ և սկսեց վարպետութեամբ ու ճարպիկութեամբ ծեծել մուրճով: Կիսախաւար դարբնոցում ուկէնման կայծեկը կրակէ անձրեկ նման թըռչկոտում էին մուրճի տակից հողէ յատակի վրայ:

—Դէ, Ֆէօդոր, նայիր, —կանչեց Ֆիլիպպը:

Հսկան գանդաղութեամբ բարձրացաւ քարից և նեղս նայեց դարբնոցը: —Լաւ է: Միայն վիրի ծայրը պէտք է սրել, —ասաց նա, նայելով հասկացող աշակերտի գործի վրայ: —Այ, այդպէս... այդպէս: Լաւ է:

Մինչդեռ Ֆիլիպպը շնում էր մէկ շերտը, միւսը միւնոյն ժամանակ տաքանում էր քուրայում, և աշխատանքը առաջ էր գնում արագութեամբ:

—Ապրիս, պարոն, —կատակով ասում էր գարբինը: —Այ, ապեն էլ մայր մտաւ... ժամանակ չէ արգեօր տուն գնալու:

Վասիլիին հանգրից կրակը, ամեն բան հաւաքեց իւր սկեղը գրեց գարբնոցում, գոցեց, և բարեկամները ուղերուեցան քաղաքի ծայրով դէպի գետեղը, որտեղ, բարձր և թէք տարափուների յետեր պատսպարուած, գտնում էր դարբնի տնակը: Այսաեղ, առանց տուն մտնելու, նորա նստան պատուհանի մօտ նստարանի վրայ:

Դետը հանդարա հոսում էր նոցա առաջով, տանելով իւր կապոյտ ջրերը և արտացոլելով նրանց մէջ և՛ կանաչ ափերը, և՛ ձկնորսների խարոյիները, և՛ գունաթափ լուսինը, որ բարձրացած էր երկրի վրայ, և պարզ, կապոյտ երկնքի ամբողջ անյատակ անօթը: Ալիքները միաշափ ծփում, բերում էին տաշեղներով և մանը քարերով ծածկուած ափերը: Մերձակայ եղի մօտ օրօրւում էր կապած նաւակը: Քաղաքի աղմուկը, որ լուրու վրայ էր, խուլ կերպով հասնում էր այսաեղ:

Նստեցին բարեկամները, խօսեցին. մէկը ծխախոտը շինեց, միւսը ծխամորճը լեցրեց և ծուխի կապտագոյն բուլաները գանդաղ կերպով հալուում էին օդի մէջ: —Վազուց է, Ֆիլիպպ Ալէքսանդրովիչ, գու ինձ ոչինչ կարդացած չես... —խօսեց դարբինը: —Առնէիր մի գիրը ու կարդայիր... այժմ գիշերներն էլ խօմ այնպէս լայս են, ինչպէս ցերեկները... ճշմարիտ...

—Է՞ն, ինչ կայ որ, արի կարդանք... —համաձայնեց Ֆիլիպպը:

Վասիլիյ Ֆէօդորովը այրի էր, անզաւակ և մես-մենակ, իւր տան մի կիսում տեղաւորել էր Մակոմովնային, որ մի պառաւ էր առանց ծագման ու ցեղի և ստանում էր քաղաքային վարչութիւնից 1 լ. 60 կոպ. առաքեկան թօշակ: Պառաւը ապրում էր գարբնի մօտ ձրիապէս և հսկում էր նորա չնչին ալնտեսութեան վրայ: Վասիլին ներս մտաւ խրճիթը և բերեց այնտեղից Աստուածաշունչը, մի մեծ հաստ գիրք, ու կաշուէ կաղմով: Նորա յետեկից դուրս եկաւ և Մակոմովնան, նստեց դուան մէջ և նոյնալէս պատրաստուեց լսելու:

—Մենք այն անգամ կարդում էինք Յակովը առաքեալի թուղթը և չէինք վերջացրել...—նկատեց դարբինը:

—Սյու: Մենք կանգնել էինք 5-րդ գլխի վրայ, —ասաց Փիլիպպը, գիրքը բանալով:—Եյտեղ է և նշանը...

«Արդ՝ այսուհետեւ մնատունք, —երկիրածութեամբ և շեշտելով կարդաց Փիլիպպը, —լացէք և ոզբացէք՝ ի վերայ թըշուտութեանցն, որք գալոցն են ՚ի վերայ ձեր:

«Զի մեծութիւնդ ձեր սշինչ է և հանգերձ ձեր կերակուր ցեցոյ:

«Արծաթ ձեր և ոսկի ժանդահար և ժանդ նոցա լիցի ձեզ՝ ՚ի վկայութիւն և կերպից զմարմինս ձեր իրքն զնուր, գանձեցէք աւուրցն յետնաց:

«Ահաւագի վարձք մշակաց, որք գործեն զանդս ձեր, առ «ձեզ են. զրկեալն ՚ի ձէնջ աղաղակէ և բողոք հնձողացն եհաս ցյականջո տեսոն զօրութեանց:

«Փափկացայք ՚ի վիրայ երկրի և զրօսայր. մնուցէք զսիր-առը ձեր իրքն աւուր սպանման:

«Զրկեցիր, սպանիք զարգարն, որ ոչ կայր ձեզ հակառակ:

«Երկայնամիտ լերուք եղարաք իմ մինչեւ ՚ի գալուստ Տետոն: Ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի մինչև առցէ զկանուխ և զանգան:

«Երկայնամտեցէք և հաստատեցէք զսիրտս ձեր, զի գալուստ «Տետոն մերձեալ է:

—Ա-ախ, ի՞նչպէս էլ լաւ է ամենը այդտեղ գրուած...—նկատեց դարբինը, երբ Փիլիպպը կանգնեց, որպէս զի ծխախոտ շինէ: Վասիլիյ Ֆէօդորովը սիրում էր մտածել և քննել կարգացածը:—Միայն ի՞նչպէս հասկանալ այդ. «գալուստ Տետոն մերձեալ է» խօսքերը...

Այդ բոպէին երեկոյեան խաղաղութիւնը յանկարծ խան-

գարուեց: Քաղաքի զանգակատներից մէկում լսուեց յուզիչ և շտապ զանգահարութիւն: Երիտասարդը, տալով գիրքը Վասիլիին, վեր թռաւ տեղից և արագ բարձրացաւ ափի թէք բարձրութեան վրայ: «Սրդեօք Վոլշիյ թաղում, թէ Մոսկովսկիյ փողոցումն է այրուում»... Քաղաքի հարաւային մասի վրայ բարձրանում էին թանձը, ծանը ծուխի սև բուլաննը և ինչպէս հէքիաթական հրէշ, դէպի կապսատակ երկինքն էին թռչում: Ծխի մէջ, կայծակի նման փայլատակում էին ալ կարմիր բոցերը, և Փիլիպպին թւում էր, որ նա արդէն լսում է աղմուկ, ճայթոցները և մարգկային ձայների աղաղակ:

—Զինուորական-Աւանումն է կարծիմ այրուում: Ես կ'վազեմ, —ասաց Փիլիպպը իւր բարեկամին և յիրաւի սկսեց վազել ամենամօտ ճանապարհով, ծանօթ փողոցներով դէպի այն կողմը, որտեղ տարածում էր սև ծուխը...

Փիլիպպի բնաւորութեան յատկանիշներից մէկն էլ այն էր, որ նա, իմանալով հրդէնի մասին, չէր կարողանում հանգիստ նստել տեղումը և, ոչ մի բանի վրայ ուշաղրութիւն շդարձնելով, թռչում էր հրդէնը հանդցնելու: Հէնց տհա այդ պատճռովի, էլ նա բարեկամութիւն էր կապել հրդէնաշէների հետ, որի համար հայրը և քոյրը միշտ հայնուում էին նորան... Եւ յաճախ Փիլիպպը աղատում էր շշլուած խեղճի աղքատիկ կարողութիւնը: Իսկ մէկ անգամ, մի տարի սրանից առաջ, նա կեանքը վատանգի հնդարկելով աղատեց մինչեւ անգամ մի փոքրիկ, եռաւմեայ աղջիկ, որ մոռացուած էր այրուող տան մէջ: Կտուրը, որ բոնկուած էր կրակով, ճայթ ճայթում էր և ամեն բոպէ սկատրաստ էր բանդուելու, երբ նա մտաւ ծխով լիքը նախասենեակը: Նա դուրս քաշեց կիսախեղդ եղած մանկանը և ինքն էլ տուժեց. զրանից յետոյ մի բանի ամիս նորա աշքերը ցաւում էին, և նա ստիպուած էր երկրորդ տարին մնալ միենոյն զասարանում: Այն մարդիկ, որոնք ներկայ էին այդ հրդէնին և վկայ այդ քաջագործութեան, ասում էին Փիլիպպին.

—Զեղ հարկաւոր է շքանշան կորսուողներին փրկելու համար... Մենք վկայ ենք... Ուզում էր այժմ և եթ երթանը արձանագրութիւն կազմենք...

—Ե՞ս, ի՞նչ պէտք է, —շփոթուելով ասաց Փիլիպպը: Դրանով էլ բանը վերջացաւ: Ցանակ Փիլիպպը գնում էր անբաղդութեան վայըը հրդէնաշէների հետ միասին, տեղաւորուելով տակառի յետնում կամ

խողովակի մօտ: Իսկ յաճախ տեղ էր համնում հրդէհաշէջներից էլ առաջ... Եւ, հրդէհը հանգցնելու ժամանակ իւր անգախ աշխատանքի համար, Փիլիպպ զատրովը այդ քաղաքում վայելում էր մեծ ժողովրդականութիւն, մահաւանդ խեղճ, բանուար դասակարգի մէջ, որոնք ամենից աւել են հրկիւում և առւժում:

Այս անգամ Զինուորական-Աւանում, քաղաքի ամենափեղճ մասերից մինում, այրուեցին կառապանների երեք ախոռ և հինգ տուն, որոնք խիտ կերպով շինուած էին մինը միւսի մօտ: Փիլիպպ վերադարձաւ տուն գիշերուայ ժամը երկուսին կամ, ուղիղն առած, առաւօտեան դէմ՝ արեի ծագելուց քիչ առաջ, և վերադարձաւ մեր հերսու ամենախեղճ զբութեան մէջ, ամբողջովին թրջուած, մրաթաթախ դէմքով, կեղտոտ ձեռներով, նորա գլխարկը մի քանի տեղ այրուած էր, իսկ մէկ կօշիկը պատուած, երեկի գամ էր մտել:

Զգուշութեամբ, մատների վրայ, տանեցոց շզարթեցնելու համար, անցաւ իւր սենեակը և թրջուած սիւրտուկը զեռ չէր հանել, երբ գուռը զգուշութեամբ բացուեց և մատ Լիդան՝ ամբողջովին սպիտակ, արձակուած մաղերով, ինչպէս մի յաւերժահարսն: Նո շատ ժամանակ չէ, որ վերադարձել էր տուն և զեռ չէր պատկել քնելու:

— Այս, Արարիշ-Աստուած, Փիլիպպ: Այս ի՞նչ դրութեան մէջ ես,— կիսաձայն կոչեց նա, ձեռները կրծքին սեղմելով:— Ինչի նման ես... Սարսափելի է, սարսափելի:

— Պարահանգէսի անպէտք եմ, համ, — ծիծաղելով նկատեց Փիլիպպը:

Փիլիպպը, ամբողջովին մըստուած, թրջուած, ցեխուուած, ճիշտուած, կաբոդ էր օրիորդին վախեցնել:

Նոքա երկուսն էլ՝ բոյր և եղբայր, արշալուսի մեղմ լուսաւորութեան մէջ երկում էին աւելի գունաթափ, քան թէ ճշմարիտ որ էին. մէկը պարերից, միւսը նախընթաց գիշերուայ յուղունքից:

— Մի օր երեխ, Փիլիպպ, քո կլուխը կջարգեն, — ասաց օրիորդը թթու դէմքով նայելով նորա վրայ:

— Քո գլուխը, Լիդոչկա, չեն ջարգի, — հանգիստ կերպով ալտասանեց Փիլիպպը:

— Ի՞նչ սիրուն զատողութիւն... — Նկատեց Լիդան: — Հայրիկը ամեն անգամ այնպէս անհանգիստ է լինում քո մասին...

Եւ կարծես առանց քեզ չի լինիլ մէկը, որ հանգնի հրդէհը: — Եթէ, հոգեակս, ամենքն էլ այդպէս զատէին, ինչպէս դու, իհարկէ այն ժամանակ ոչ ոք էլ չէր լինիլ. Իսկ այժմ գնաւակսիր, ես պիտի հանուիմ, — վճռապէս ասաց Փիլիպպը և սկսեց հանել վսայից թրջուած շրբերը:

— Բոլորը երեակայութեան պտուղ է, — արհամարհարար ասաց օրիորդը, յետ գառնալով և ամբողջապէս լուսաւորուած արշալոյսի լուսով, հանգարա գուրս եկաւ սմնեակից՝ փայլելով իւր հիասքանչ, արձակուած մազերով:

IV.

Երկու շաբաթ անցաւ այս նկարագրուած փոքրիկ դէպքերից յետոյ: Յունիսեան առաւօտի կարմրագոյն ճառագայթները նորից ցնծագին լուսաւորում էին ընթեցողներին յայտնի Մոսկովսկի փողոցում սպիտակ, երկյարկանի տան ճաշարանը: Նորից հայրը խօսում էր որդու հետ: Որդին, ուսւական շապիկով և առաջուայ նման զոտեկորուած զիմնագիօնական դպտով, կանգնած էր պատուհանի մօտ և մտազբաղ նայում էր դէպի փայլուն, ոսկենման հեռաստանը: Զեռքում նա բռնած էր գլխարկը, երեկի պատրաստում էր մի տեղ գնալու, բայց հօր հետ խօսակցութիւնը խանգարել էր նորան: Հայրը մէկ ձեռքում բռնած լրագիրը և ծխամորճը, նստած իւր սովորական տեղում ինքնայենի մօտ, թէյ էր խմում: Լիդան առաւօտեան սպիտակ զգեստով, շտապ հաւաքած մաղերով, կիսով չափ պառկել էր զահանրակի վրայ, ոաները երկարացրած, և «ըշում էր խողեր» (յայտնի խաղ, այժմ արդէն հնացած, բայց այդ ժամանակներում նոր մուտք գտած լուսաւորուած կենդբոններից մեր խուլ գաւառում):

— Դէս, տեսնում ես... զու ոչինչ չես ասում. ինչպէս տուիր վերջին ըննութիւնները: Աւարաեցիր վերջապէս: Վկայական պիտի ստանաս, — ասում էր ծերուկը, ուղելով ընչացքը իւր կեռասի ծխամորճի ծայրով:

— Քննութիւնները վերջացրի... Վկայական երեխ կստանամ, — ակամայ պատասխանեց որդին:

— Ը-ըմ, «երեխ»... կնշանակէ զեռ հաստատական չէ, — նկատեց հայրը: Փիլիպպը լուսութեամբ դարձաւ դէպի պատուհանը: Նորա այդ բոլորովին անմեղ շաբումը յանկարծ շաբեց և բռնկեցրեց բարկացկոտ ծերուկին:

— Այ, Փիլիպպ, զու միշտ այդպէս ես... մանկութիւնից...— խօսեց Ալէքսանդր Վասիլիկիվիչը: — Դայլուկ, վայրենի... ելքէք ոչ մէկ բանի մասին չես խօսում դու ինձ հետ: (Այս խօսքի վրայ երիտասարդը տիրութեամբ ժպտաց): Ախր այնտեղ, քո արհեստարու բարեկամների մօտ, ևս կարծում եմ ճառախօսում ես, հսկետութիւն ես անում, և ինքդ, իհարկէ, ուրախ ես, որ այդ տիրմարները բերաները բացած լսում են քեզ... եսկ հօրդ հետ զու խօսելու ոչինչ չունես: Ես արդէն չեմ տում այն մասին, որ դու երբ և իցէ, գոնէ պատահմամբ, գոնէ կատակով վաղաքչիր ինձ... ես այդ չեմ էլ պահանջում: Զեմ սպասում:

— Բայց ինչպէս, հայրիկ, կարող եմ ես փաղաքչել քեզ, քանի որ զու վարում ես ինձ հետ, այսպէս ասած...— ասաց Փիլիպպը: — Այն ժամանակից՝ 'ի վեր, երբ ես սկսեցի ճանաշել ինքս ինձ, զու միշտ իմ վերայ նեղանում և զուռում ես... Դու ինքդ ինձ երբէք չես փաղաքչել: Իսկ այժմ ես և՛ «գայլուկ եմ», և՛ «վայրինի»...

— Իհարկէ, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մեղաւորը ես եմ, իսկ դու թիշտ արդար էք... ծաղրական տոնով կարեց ծերուկը, զգացուած ել և էջ տալով իւր ձայնին:— Է-էհ, զաւակներ, զաւակներ: Ո՞վքան ձեզ հետ դժուարութիւններ, աշխատանք, ամեն տեսակ անհանգստութիւն ես կրում, մեծացնում ես, կանգնեցնում ոտի վրայ, իսկ երախտագիտութիւն մի սպասիր:

— Իհարկէ, եթէ խիստ կերպով քննենք, հայրիկ, ճշմարիտ որ, ըստըովին բնական բան է, եթէ զու կերպել—խմբել ես ինձ և սովորեցրել մի բան...— ասաց Փիլիպպը, նայելով ծերուկին:— Եթէ զու աշխատել ես այն բանի համար, որպէս զի կիանքը լինի ինձ համար ախորժելի, և ոչ տաժանակիր աշխատանք, այլապէս ինչպէս... Դապանն էլ իւր զաւակներին չի թողնում բաղդի կամքին:

Երբուկը թեթե կերպով գունատուեց և բանեց մօրուը, որ նորա սաստիկ յուզման նշանն էր:

— Օհօ-հօ-հօ... Ահա ինչ փիլիտովայութեամբ էք առաջնորդում դուք այժմ, — հեգնական ծիծաղով կոչեց ծերուկը:— Այդպէ-էս: Զատ սիրուն: Ճիլիրի «Աւազակներից» էք սովորել: Այնտեղ, յիշում եմ, մի այդ տեսակի բան կայ... Տեսնում եմ, տեսնում...

— Վելջ տուր, ինդրեմ, Փիլիպպ: Ինչե՞ր ես խօսում,— արհամարհական գէմքով զարձաւ գէտի եղբայրը լիդան, չափաղնց բարկացած նրանով, որ նորան ոչ մէկ անդամ չ'յաջողուեց քշել «խոզերը» ուր որ հարկն էր:

Օրիոսպը մօսեցու հօրը և, ձեռները դնելով նորա ուսերի վրայ, նայեց Փիլիպպին մի այնպիսի հայեցքով, կարծես պատրաստում էր պաշտպանել ծերուկին կատաղած շարագործների մի ամբողջ խմբից:

— Ինչպէս ես համարձակում, Փիլիպպ, այդպէս խօսել հայրիկի հետ, — ասաց նա, բարկութեամբ նայելով եղլուր վրայ:— Ցէս, ինչպէս զու յուղեցիր նորան քո յիմարութիւններով: Ի՞նչպէս չես ամեաչում...

— Ի՞նչ կայ որ... Ես միայն կարծիքս յայտնեցի, իսկ ես, իհարկէ, շատ շնորհակալ եմ քեզանից ամեն բանի համար...— շփոթուած պտտելով զլիարկը, ասաց Ֆիլիպպը, նայելով հօր վրայ:— Ես ամեննեին չէի ուզում քեզ ցաւացնել: Աղնիւ խօսք, ես չէի կարծում, որ զու...

— Լաւ, լաւ, ներողութիւն մի խնդրիք: Ո՞չ քո երախտադիտութիւնը և ոչ էլ զզումը ինձ հարկաւոր չեն...— դողդուն ձայնով ասաց ծերուկը, բանելով լիդայի ձեռքը:

— Մի վրգովուիր, հայրիկ: Հանդստացիր, — շնչում էր լիդան, կուանալով դէպի հայրը:— 2Է որ քուստը քեզ հետ է... Ահա նա:

Եւ ծերուկը զրկեց նորա պարանոցը, համբուրեց նորա ճակատը և մնամ վաղաքանքով շփում էր նորա մաղերը...

— Փիլիպպ Ալէքսանդրովիչ, այնտեղ ձեղ ուզում են տեսնել... եկել են, — յայտնեց Մարթան, ներս նայելով:

Երիտասարդը մէկէն 'ի մէկ դարձաւ և դուրս եկաւ սենեակից:

— Ո՞վ կայ այնտեղ: Ո՞վ է եկել, — հարցրեց Ալէքսանդր Վասիլիկիվիչը, բայց Մարթայի քէֆը այդ տուաւոտ տեղը շինելով, քթի տակ փնթփնթալով հեռացաւ:

Իսկ Փիլիպպը գուրս գալով նախասենեակը, տեսաւ սանդուխների ծայրում նաստեային և զարմացաւ ու վախեցաւ նորա գունատ, խիստ վրդովուած դէմքից:

— Ի՞նչ է պատահել, նախտեա, — կանչեց նա վայր իջնելով սանդուխից:

— Փիլիպպ Ալէքսանդրովիչ: Եկէք ինդրեմ մեղ մօտ, — աղեր-

սելով դաշճաւ դէպի նա աղջիկը: — Հայրս հիւանդացաւ, իսկ եղ-
րայրս տանը չէ... եղեկ գնաց գիւղ տախտակի... ևս մենակ եմ...
վախենում եմ... ես այնպէս տանջուեցայ նորա հետ. . ամբողջ
գիշերը հսկում էի... Խնդրում եմ, Փիլիպպ Ալէքսանդրովիչ,
եթէ կարելի է...

Նորա ձայնի մէջ լսում էին արտասուրներ:

— Իհարկէ կարելի է, — սրտով ասաց Փիլիպպ: — Ես այժմ
և եթէ ձեզ հետ կերթամ:

— Լիդոչկա, նայիր պատուհանից, չգնաց արդեօք նա, —
ասաց այդ բոպէին Ալէքսանդր Վասիլիևիչը աղջկան:

Վերջինս անցաւ հիւրասենեակը և բռնեց դիտողական
գիրքի պատուհանի մօտ, որտեղից հեռու երկում էր փո-
ղոցի թէ մէկ և թէ միւս կողմը:

— Նա գնաց կարծեմ ինչի հետ... Ֆրոլկայի աղջկայ, —
ասաց Լիդան մի բոպէից վերագանալով հիւրասենեակից —
Գնաց դէպի այն կողմը, դէպի քաղաքի ժայրը... հաւանական է
գնաց նոյս մօտ:

— Սրանից ի՞նչ դուրս կդայ, բարկացած կոչեց ծերուկը: —
Այս, արդէն, չպիտեմ... այսպիսի յանդկնութիւն... Ո՛չ, պէտք է
այս բոլորը վերջացնել... սա, սա անտանելի է...

Ծերուկը ուժգնութեամբ բարձրացաւ բաղկաթուից, լուռ
դնաց առաջ ու յետև և կանգնեց սենեակի մէջ տեղը:

— Օ՛, Սստուծ, — կստրուծ ձայնով արտասանեց նա,
ողբերգական ձեռվ բռնելով գլուխը ձեռների մէջ: — Տէր, ի՞նչ բա-
նի համար դու այսպէս խիստ կերպով պատճեւմ ես ինձ... որ-
դուս միջոցով:

Սենեակում լսութիւն էր, միայն լսում էր, ինչպէս գեղ-
ձանիկը թշչկոտում էր վանդակի մէջ և մաքրում էր վանդա-
կապատին իւր կտուցը:

Լիդան աշքերը սառած, հոգոց հանելով կտիկը էր պլու-
խը ցած:

— Իսկ բժիշկը եկաւ, — հարցնում էր Փիլիպպը, շտապով
ուղուելով նաստեայի հետ դէպի վարդապոյն տունը:

— Եկաւ, բայց ի՞նչ... հստօնել տուեց ինչ որ սպիրտ, ու-
րիշ ոչինչ, — տխրութեամբ ասաց աղջիկը:

Փիլիպպը գտաւ հիւանդին ճիշտ որ սարսափելի դրու-
թեան մէջ: Ծերուկը ոչ որին չէր ճանաշում և ահոելի կերպով
պատառում էր իւր պղտոր, անմիտ աշքերը: Նորա ուռած գէմքը

մէկ կարմրում էր, մէկ գունատում, ընդունելով հողանման,
զեղին — կապայտ գոյն: Նորան տանջում էր տենիղը, տիրում էին
երկոյթներ, սովորականից աւելի պարզ լսում էր նա ձայներ,
երկում էին նորան անցեալի պատկերները: Նա նստած էր փա-
թաթած ոտներով, կպած բազկաթոռի հենաբանին և իւր ոս-
կըցած ձեռներով ոյժով բռնել էր նրան:

— Ինչո՞ւ եկաւ նա այստեղ... այդ կինը, — շնչում էր նա և,
դժուարութեամբ չնչելով, ձգում բազկաթոռի մէջ: — Ցիզում եմ
նորան... ես այն ժամանակ... ծերուկը յանկարծ շտկուց,
բարձրացը ձեռքը, շարժեց, բայց նայն բոպէին ձեռքը թու-
լացած ցած ընկաւ և կախուեց ինչպէս մի մարակ:

— Հեռացիր, հեռացիր, — շնչաց նա, սարսափահար նայե-
լով իւր առաջը, նորա տատանեցը կպչում էին իրար, ինչպէս
լինում է տենդի մէջ և սպիտակ մազերը շարժւում ու դիզանում
էին նորա գլխի վրայ:

— Եխը ոչ ոք չկայ, սիրելիս... — Հանգստացնում էր նաս-
տեան: — 2Է որ ես եմ, իսկ այս Փիլիպպ Ալէքսանդրովիչը:

— 2Է, էլի նա չի հեռանում... և չի էլ գնալ, չի հեռանալ,
նորան չլսելով, յուսահատութեամբ զառանցում էր հիւանդը: —
Ահա և ոս... ինչո՞ւ, ինչո՞ւ համար ես եկել: Հեռացէք ինձա-
նից: Հեռա-ացէ-էք, — վայրենի, սիրա պատառող ձայնով կոշեց
ծերուկը, ցնցուելով ամբողջ մարմնով և իզուր ջանալով բար-
ձրանալ բազկաթուից:

Նա սկսեց շնչառապան լինել: Նաստեան վաղեց նորա մօտ և
մօտեցրեց նորա գէմքին սպիրտի մէջ թաթախած լաթ: Հիւանդը
փակեց աշքերը, ձգուեց և, ուժաթափուած տանջանքներից, կար-
ծես սուզուեց կարճառե մոռացութեան մէջ:

— Ահա ամբողջ օրը ժամը երեքից այսպէս է... և գիշերն
էլ չի քննել, — շշուկով խօսեց աղջիկը: — Մէկ հանգարտում է,
մէկ գոռում... Ս'իս, ինչպէս գոռում էր նա... 2ի կարելի պա-
տուհանները բանալ...

— Եւ ինչից է նա այդպէս: Ի՞նչ բան է, — հարիրեց Փիլիպպը,
կարեկցարար նայելով ծերուկի վրայ: — Դուք, նաստեա, յոզնել էր,
գնացէք քննեցէք, իսկ ես կ'մնամ հիւանդի մօտ, կնստեմ ահա
այստեղ, արենսատանոցում... — շնչալով ասաց նորան Փիլիպպը:

Նաստեան հրաժարուեց գնալ քննելու, բայց Փիլիպպը հա-
մոզեց նորան: Մի ժամ էլ զեռ չէր անցել, երբ նաստեան
նորից վերագարձաւ նորա մօտ:

— Արդէն, — զարմացմամբ դարձաւ նորան Փիլիպպը:
— Այս... մի քիչ քնեցի, — թոյլ ձայնով խօսեց աղջկը,
ընկնելով դռան մօտ աթոռի վրայ և այնտեղից հետեւլով
հիւանդին: — Ես, ճշմարիտ, ամաշում եմ, որ ձեզ անհանգիստ
արի և բերի այստեղ:

— Բայց ես չէ որ այժմ անդործ եմ... Դուք այդ գիտէք, — ասաց Փիլիպպը:

Զանձրալի էր անցնում վարդագոյն տան մէջ յունիսան
երկար օրը... Հիւանդը մէկ սկսում էր զառանցել ու այս ու
այն կողմ ընկնել, սասափիկ գտում էր, հեռացնելով ձեւքով
իւր վրայ եկող տեսիլները, մէկ նա լուսմ էր, և տան մէջ
ալբում էր լուսութիւն, և այդ լուսութեան մէջ աղօտ ու շարա-
գուշակ կերպով զգացում էր մահու մօտենալը:

Աղջկը մէկ շնչալով խօսում էր Փիլիպպի հետ, մէկ
նստում էր լուս, տիբութեամբ ցած կախելով գլուխը, մէկ
հեռանում էր հանգստանալու և մի քանի բոպէից նորից վե-
րապառնում արհեստանոց: Նա առաջարկեց Փիլիպպին ճաշել,
բայց ստ հրաժարուեց և խնդրեց թէյ:

Վրայ հասու և երեկոն, և ստուելները խտացան վար-
դագոյն տան մէջ: Նստեան վառեց փոքրիկ թիթեղեայ լապ-
տերը և, ծածկելով նբան գրքով, դրեց սեղանի վրայ:

— Իսկ եղբայրս շկայ ու շկայ... չգիտեմ ինչ անեմ, —
շնչում էր նստեան, ցած, անլսելի, ինչպէս ստուել անցնե-
լով իւր կակուզ հողաթափներով սենեակից սենեակ:

Ծերուկ զարսով և զուսարը այդ երեկոյ քաւական ուշ
հեռացան իրանց սենեակները: Ալէքսանդր Վասիլիիվիչը քանի
անգամ հարցրեց. վիրադարձել է արդեօք Փիլիպպը, բայց
«անհառակ սրդին» շէր երեւմ... Եւ հայրը խստութեամբ կի-
տելով ունքերը, ասում էր.

— Այս ինչ է, նա այս երեկոյ նոցա մօտ է մնալու ինչ է...
Ո՛չ: Կազը ես վերջնականապէս կ'խօսեմ նորա հետ..., հաստա-
տապէս կ'խօսեմ:

— Մ'ի յուզուիր, հայրիկ: Թող նորան, — հանգստացնում էր
նորան լիգան:

— Ես նայում եմ նորա վրայ և զարմանում.. — կարծես
շլսելով նորա ասածը, շարունակեց ծերուկը: — Ո՞րտեղից է
նորա մօտ այդպիսի ստոր զգացմունքներ, այդպիսի ստոր
ձգտումներ... այդ նորա ցանկութիւնը որոնել իրանից ցած

հասալակութիւն... Ես մի-մի ժամանակ նայում եմ նորա վրայ
և մտածում. կարծես նա իմ սրդին չէ: Դու խօս լսեցիր,
ինչպէս էր նա ինձ հետ խօսում, դարձաւ նա Լիգային: — Ո՛չ
փափկութիւն, ոչ ցաւակցութիւն... ոչինչ... Բոլորովին մի օտար
մարդ: Ա-ախ, զաւակներ, զաւակներ...

— Ախր նա, հայրիկ, ինձ հատ էլ այդպէս է... — ասում էր
Լիգան, կուանալով գէպի հայրը և փաղաքներով նորան: — Մենք
նորա հետ երբէք մէկ խօսքի չենք զալիս... նա միշտ երեա-
կայական բաների հետ է...

Ծերուկը ծանը հոգոց հանեց և մտածկոսութեամբ շփում
էր Լիգայի գլուխը, ինչպէս սովորութիւն ունէր զեռ այն ժամա-
նակից, երբ Լիգան իրքե մանուկ, խաղալով նստած էր լինում
նորա ծնկների վրայ: Ծերուկին հաճելի էին նորա բաց գոյնի,
կակուզ և մետաքսանման մազերը:

— Հայրիկ, զու ինձ փող կտաս, — ցած ձայնով ասաց Լի-
գան: — Ես ուզում եմ մի ամառուայ նոր գգեստ կարել... սպի-
տակ, գիտես, կապոյա զարդարանքով... Ինչպէս Մարտսեայինն է:

— Ի՞նչ կայ որ: Քեզ, սիրելիս, կապոյաը սաղում է... — մի
քիչ ցրուած ասաց ծերուկը:

— Ուրեմն ես վաղը կերթամ տաձաւ Լույէլի մօտ և
կպատուիրեմ, — շարունակեց Լիգան:

— Այս, այս, պատուիրիր, — ասաց ծերուկը:

Փող... նա ինդրում է փող..., բայց միթէ ծերուկը կ'իսնայէ
մի բան իւր սիրելուոյն համար:

Իսկ վարդագոյն տան մէջ այդ միջոցին դանդաղութեամբ
անցնում էր գիշերը... Կէս գիշերին մօտ հիւանդը հանգարատուեց,
և երիտասարդները, յաղթուած յողնածութիւնից, երկուսն էլ
նիւրնեցին:

Նիւրնում էին նոքա, իհարկէ, մի քանի բոպէ, բայց նո-
ցա թւում էր, որ քննել են երկար և արթնանում էին լսե-
լով հիւանդի տնքոցը:

— Ո՛հ: Կիւռանան արգեօք նոքա ինձանից, — ասում էր
նա մի անելեսթ բանի:

Լոյսը ծագեց... Ճիճուիները ճռվուացին պատուհանների
տակ: Վըշալոյսի բաց վարդագոյն փայլը ընկնում էր արձուկ-
ուած սպիտակ վարդագյունների վրայ: Օրը բացում էր... Ծա-
գեց արկը և նկա ճռվագոյթները խաղացին վարդագյունների
վրայ: Կարմիր-դեղնակոյն կրակը հազիւ էր պլայում միստուած

լապտերի մէջ: Լապտերը մոռացել էին հանգժնել...

Յանկարծ ծերուկը բարձրացրեց զլուխը և նայեց շորս կողմը:

—Ա-ա: Դնայել են.., Բոլորը գնացել են,—փնթում էր նա, հաղիւ շարժելով չորացած ու այրուած շրթունքը:

Դրանից յետով նա կարծես հանգստացաւ, ոտները երկարացրեց և ձեռները ծնկների վրայ դնելով, զլուխը ձգեց բազկաթոռի հենարանի վրայ:

—Գիշեր է... մութ է և լուռ...—շնչաց ծերուկը հաղիւ լսելի ձայնով, սկսեց նիբճել և շուտով քնեց յաւիտեան:

Նաստեան ընկած բազկաթոռի վրայ, ծնկաշոք կեցած էր նորա առաջ: Նորա ուսերը ցնցում էին... նա լալիս էր:

Փիլիպպը կանգնած էր դռան մօտ, ձեռները կրծքի վրայ խաչած և ալիրութեամբ նայում էր մեռեալին և նորա ոտների մօտ լացող աղջկան: Նա ցանկանում էր միտիթարել նաստեային, բայց լինչպէս, ինչով միտիթարել, լինչ ասել նորան, նա չգիտէր..., ծանը, խաւար մտքեր, շուծուած յաւիտենական հարցեր կեանքի ու մահուան մասին այդ բռապէին ալէկոծում էին նորա միտքը, իսկ սիրաը ցաւում էր իւր մարմոքող ընկերունու համար...

Փիլիպպը առաւօտեան վերադարձաւ տուն, պասկեց քնելու և քնեց մինչև ճաշ: Լիդան սալսափած էր և գարձեալ սպասում էր Փիլիպպի ու հօր մէջ փոթորկային տեսարանի: Բայց Ալէքսանդր Վասիլիկիվիշը երկի գիշերը հանգստացել էր և թողել էր որդու հետ կուռելու միտքը: Փոթորկի շեղաւ, բայց երեկոյեան հայրը գարձեալ չկարողացաւ զավել իրան և ասաց որդուն մի քանի սառն խօսքեր:

—Լաւ կ'լինէք արգէն, որ դու շուտով գնայիք այստեղից,—նեղանում էր հայրը:—Գու սկսում ես պահել քեզ անտանելի կերպով... եմ մասին ևս արդէն չեմ խօսում. դու ինձ յարգելու չե՞ս... Կարծեմ այդպէս է դուքս զալիս քո տեսութեամբ:

—Այդպիսի տեսութիւն ես երբէք չեմ ունեցել, —ասաց Փիլիպպը յուղուելով:

—Թոյլ տուէք ինձ վերջացնել խօսքս, —խստութեամբ ընդհատեց նորան հայրը:—Եմ մասին, ասում եմ, արդէն լուսում եմ... Բայց խօմ դու կարող էիր մտածել, ուր դու ունես մի բոյլ, մատաղահաս աղջկի... հարսնացու...

—Բայց ինչ եմ արել ես վերջապէս, —հարցրեց Փիլիպպը:—Երեկ դու գնացիր զբոսնելու մի աղջկայ հետ և, կար-

ծեմ, բարեհաճեցիր վերադառնալ տուն արդէն առաւօտեան: Ի՞նչ, դուք այդպիսի վարմունքը մի վայելուչ լան էք համարում,—խստութեամբ ասաց ծերուկը:

—Ես զրօննելու վիացած չէի...—մթագնած ասաց Փիլիպպը:—Նիկիալը տանը չէր, իսկ ծերուկը հիւանդացել էր... Աղջիկը վախենալով մենակ մնալ նորա մօտ, կանչեց ինձ... Ահա բոլորը: Ի՞նչ վատ բան կայ այսաեղ, ես չգիտեմ... Ես նստած էի հիւանդ ծերուկի մօտ... նա այսօր առաւօտեան մեռաւ: Խօմ կարող չէի նորան մենակ թողնել: Տարօրինակ բան... երբ եղացը վիւղից վերադարձաւ, ես էլ եկայ տուն...

—Ասա, խնդրեմ, զու ինչ յալարերութիւն ունես դոցա հետ... Տրեսկինաների, —շարունակեց հայրը:

—Լաւ ծանօթներ են, ուրիշ ոչինչ, —պատասխանեց Փիլիպպը:

—Լաւ ծանօթութիւն ունես,—ծաղրաբար նկատեց Լիդան, չգիտենք ինչու պէտք գանելով իւր լեցնել «անհախորժ խօսակցութեան» կլակի վրայ, որ առաջանում էր հօր և որդու մէջ:

—Քո ծանօթութիւնից ամենեին վատ չէ: Կարող եմ հաւատացնել քեզ, —ասաց Փիլիպպը:—Նիկիալը իւր գործը իմացող, աշխատասէր տղայ է, նորա քոյլը նոյնպէս բարի, լաւ աղջիկ է... Եւ ես ինձ նոցա մօտ լաւ եմ զգում..

—Ըատ լաւ, ուրեմն և մնա նոցա մօտ, —արհամարհանքով ասաց Լիդան:

—Իսկ դու նատիր քո կաւալերների հետ, այն...—բարկոնալով կոչեց երիտասարդը:

—Փիլիպպը, —խրոխ, նախազգուշացնող ձայնով խօսեց հայրը:

Փիլիպպը նայեց հօր և բոյլ վրայ ու հոգոց հանեց:

—Ըստով ես կհեռանամ ձեզանից, —ցած ձայնով ասաց նա, զնալով դէպի իւր սենեակը:

Սակայն ապագան ապացուցեց Փիլիպպ զատրովին, որ մարդ երբէք կարող չէ հաստատապէս ասել, երբ և ուր կերթայ նա, և կ'հասնի արդեօք այնտեղ, ուր գնում է...

Լիդան վիրաւորում է նորան, վիրաւորում է նորա ծանօթներին, բայց նա ոչ իրան և ոչ էլ իւր ծանօթներին կառող է պաշտպանել: Ահա այսպէս էր լինում միշտ, որքան որ

նա յիշում է, մանկութիւնից... Մէկ անգամ քոյրը շպրտեց նորա երեսին ձմերուկի կեղե, իսկ Ֆիլիպպը դրա համար խփեց նորա ձեռքին: Հայրը արտասուող Լիդային միսիթարելու համար գնեց նորա սիրած շաքարանցը «ձուախառն սերով», իսկ Ֆիլիպպին քիչ էր մնում գանահարէր, և միայն մեծ-մօր պաշտպանութիւնը փրկեց նորան զրկանքից և թակուելուց: Ֆիլիպպը շատ լաւ է յիշում այս դէպքը և շատ ուրիշ ոչ պակաս վիրաւորական պարագաներ:

Լիդային ժպիտներ, քաղցր խօսք և համբոյրներ, ամեն բան նորան, իսկ ֆիլիպպին բաժին էր մնում նախատինք, գոռոգոռոց, խիստ հայեացըներ և կանչ... Մեծ-մօր մահից յետոյ երեխան աւելի ևս սկսեց ինքն իրան մենակ զգալ իւր հայրական տան մէջ: Հօր, բոլոր ուշադրութիւնը, ամբողջ սէրը, կարծես անբաժան կերպով տրուած էր լիդային: Եթէ Ֆիլիպպի տեղ լինէր մի ուրիշ վատ բնազդումներով երեխայ, նորանից կարող էր դուրս գալ նախանձոտ, բարկացկոտ, չար գաղանի ձագ: Բայց Ֆիլիպպը բաւականանում էր միայն նըսնով, որ տեսնելով հօր կողմից կատարեալ անուշադրութիւն և մինչև անգամ արհամարհանք, ինքը սկսեց հեռանալ նորանից և մօտենալ այնպիսի մարդկանց, որոնք աւելի բարի և սիրալիք էին դէպինա:

Եւ այդ բնական է... Ամեն մի բոյս, որտեղ էլ որ նա լինի, դաշտում, մութ գեանափարում, աւերակների ճեխքուածքների մէջ, հաստատապէս ձգտում է դէպի լոյսը, որոնում է արև և օդ... Փաղաքանք և կարեկցութիւն որոնող մանկական սիրտը նոյնպիսի հաստատակամութեամբ որոնում է ամեն բանում փոխադրձը, որոնում է փաղաքանքը իւր փաղաքանքի տեղ:

Ֆիլիպպը մտածում և գտնում էր, որ ինքը պէտք է լինի խոհանոցում, բակաւմ, փաղցում, խեղճ դրացիների մօտ... Այստեղ շափահանները նորա հետ խօսում էին, կատակում, հիւրասիրում էին բողիով, սօխով, թթու ջրերով, մածունով կամ հոտած ձկնով, մէկ խօսքով պատում էին նրանով, ինչ որ ուտում էին իրանք: Երեխանները խաղում էին նորա հետ վէգ, բնեռախաղ, արձակում էին թռթռներ, շրջում էին, խաղում, յաճախ պատահում էր, որ անզգուշութեամբ ցաւացնում էին իրար, բայց զիխաւորը, նորանից երես չէին գարձնում, թթու դէմք չէին ցոյց տալիս, այստեղ ոչ ոք նորա վրայ չէր նեղանում և չէր կարգում նորան ձանձրալի և յոգնեցուցիչ խրաժներ, եթէ նա ուզենար ուրախ բոլէին թոշկուել ու երգել:

Եւ բոլորովին հասկանալի ու բնական էր, եթէ մանկութեան այդ վաղ օրերից նա սիրեց իւր փոքրիկ փողոցի բարեկամներին և այն մարդկանց, որոնք յօժարութեամբ կիսում էին նորա հետ իրանց ազ ու հայը և որոնք շփում էին նորա գլուխը իրանց չորացած ու կրտացած ձևոներով: Նա չէր կարող ուրիշ կերպ զգալ. մանկական մաքուր սիրալ կարող չէ ապերախտ լինել, եթէ միայն ախտերի ապականիչ շունչը չէ վարակել նորան... Թոլոր այս պարագաները՝ մերձաւորներից օտարանալը, փողոցային տեսակցութիւնները և օտար շրջանում ծանօթութիւնները արին այն, որ Փիլիպպը կանուխ զարգացաւ և տարիին անհամապատասխան քննող դարձաւ, պահելով սակայն իւր բնաւորութեան յատկանիշները, հսկու մաքրութիւնը և զգացմունքների թարմութիւնը: Մարդ ակամայ զննող է դանում, երբ զգում է իրան մենակ բաղդի կամքին թողնուած:

Եւ Փիլիպպը մեծանալով տեսու, որ խեղճ բանուորները, որոնք խնամում էին նորան մանկութեան ժամանակ, իրքե որբի, աւելի լաւ էին այն մարդկանցից, որոնք հաւաքում էին նոցա հիւրասինեակում: Ճիշտ է, այդ մարդիկ տղէս էին, վաս հագնուած, կոպիտ, շատ անգամ խիստ, բայց նոքա պարզ էին, բնական, աւելի անկիզի և հոգուով ուժեղ այն ամեն լաւ հագնուածներից և զուգուածներից... Ունենալով մօտ յարաբերութիւն հասարակ արհեստաւոր ժողովրդի հետ, Փիլիպպին ստոր և զգուելի էին թւում աշխարհային վայելքներն ու սովորութիւնները, որոնց առաջ այնպէս խոնարհում էր լիդան: Նորա դէպի ժաղովուրքը հաւանութեան մէջ ճիշտ որ երեսում էր մեծ-մօր գեղջկուհու, ուժեղ և զործունեայ կնոջ ժառանգական ազգեցութիւնը: Այն էլ կարող է լինել, որ հայրը, բնազդմամբ նկատելով նորա մէջ երկացող ժառանգականութեան այդ պեցութիւնը, չէր սիրում նորան...

Հայրը շաբ մարդ չէր, Փիլիպպի հետ խիստ չէր վարւում, միայն նեղանում էր նորա վրայ, նորա մէջ այն էլ վատ է, այս էլ լաւ չէ, այն էլ նա չէ անում այնպէս, այս էլ, քայլել էլ նա չէ կարող, ինչպէս հարկն է, և նստում է ոչ մարդու նման, սովորում է վատ, թէ յիմար է նա և թէ ծիծագելի և այն և այն: Ամենից աւելի և ճիշտ հայրը չէր զարձնում նորա վրայ ոչ մի ուշադրութիւն: Հօր վինթ վինթոցը յուսահատեցնում էր նորան, բայց և այնպէս աւելի ախտերի էր, քան թէ նորա արհամարհանքը: Հօր անտարբերութիւնը նորա համար ամենա-

վիրաւորականն էր և խոցի պէս աղդում էր նորա մանկական հոգւոյ վրայ:

Փիլիպպը ծեծուած ու հալածուած չէր, այլ ուզակի հեռացել էր հօրից և ինչպէս խխոնջ պահուել էր իւր խեցամորթի մէջ... ինչպէս որ ծաղիկին հարկաւոր է արեգական ճառագայթ, այնպէս էլ երեխային հարկաւոր է փաղաքշանը, ջերմ-կարեկից խօսք: Ոչ մի այդպիսի փաղաքշանը և ոչ մի այդպիսի խօսք ֆիլիպպը հօր մօտ չէր գտնում և հարցնում էր ինքն իրան. «Ինչո՞ւ նա ինձ չի սիրում: Ինչո՞ւ նա իմ վրայ նայում է այնպէս, կարծես ես նորան անախորժ հմ և արգելք հմ լինում: Ի՞նչ եմ արել ես նորան»:—Եւ ոչ մի տեղից նա պատասխան չէր սահնում: «Ը՛, Լիդայի հետ նա այնպէս չէ»... Նորան թւում էր, որ Լիդան «կեղծում է» հօր առաջ: Խոկ նա չէր կարողանում «կեղծել», և զրա համար էլ, հաւանական է, որ նա չէր կարողանում կեղծել, յաճախ լսում էր, ինչպէս նորան անուանում էին «Վայրենի», «Դայլուկ»:

Փիլիպպը երիտասարդական հասակ մտաւ և դարձեալ առաջուայ նման հարցնում էր ինքն իրան. «Ինչո՞ւ հայրս չի սիրում ինձ: Ի՞նչ հմ արել ես նորան» և դարձեալ պատասխան չէր գտնում: Հայրը այժմ ես շարունակում է նայել Փիլիպպի վերայ այնպէս, կարծես սա խանգարում և բարկացնում է նորան իւր ներկալութեամբ: Այժմ Փիլիպպը չէր կարծում, որ Լիդան «կեղծում է» հօր առաջ, բայց այժմ ես Լիդայի դէպի ծերուկը ունեցած յարաբերութեանց մէջ շատ բանի նա չի հաւանում...

Այժմ հայրը նորա վրայ չի կանչում և ոտը գետնին չի խփում, չէ սախզում նորան լոել և քաշուել իւր սենեակը, բայց կարծիքների մէջ վերջին ժամանակները առաջուանից աւելի յաճախ էին պատահում ընդհարումներ և աւելի սուր: Օրեց-օր կարելի էր սպասել մի որ և է ընտանեկան փոթորկի: Լիդան ճշմարիտ որ սպասում էր զրան...

Ակնկալութիւնները յաճախ վերջանում են ոչ այն կերպարանքով, ինչպէս որ նորա երեսում են մարդկային երեակայութեան, և փշրուում են աւելի հեշտութեամբ, քան թէ ամենափխուր ապակին...

V*

Տարօրինակ փոփոխութիւնն էր առաջացել ծերուկ զատրովի մէջ, այդ նկատել էին ոչ թէ միայն Լիդան ու Փիլիպպը, այլ

և Գունեաշան, Մարթան և ծանօթներից մի քանիսը, որոնք ամենից շատ էին յաճախում «Ճատրով ժառանգների» առւնը: Բայց ոչ սք չէր նկատել երբ էր առաջացել նորա մէջ այդ փոփոխութիւնը և նամանաւանդ ոչ սք չէր կարողանում լիմանալ զրա պատճառը: Արտաքուստ զատրովների տան մէջ կեանքը ընթանում էր զարձեալ այնպէս, ինչպէս որ էր արդէն շատ տարիների ընթացքում:

Ծերուկը դարձաւ մտքամոլոր, մտածկուա և երկար, լուս նասում էր մի բաժակ թէյի վրայ, փշելով և ներս քաշելով հանգած ծխամոլը: Յաճախ և սովորականից երկար նա մնում էր իւր առանձնասենեակում, և Լիդան շատ անգամ գտնում էր նորան զբանեղանի մօտ զբաղուած ինչ-ինչ թղթերով: Դուրս դալով սենեակից, նա պահում էր թղթերը արկում և արկը դոցում: Ուշ երեկոյեան, երբ արդէն ամենքը ցըռուած էին լինում իրանց սենեակները, նա երկար ժամանակ մենակ շրջում էր սեղանատանը և հիւրասենեակում: Նա յաճախ, ըստ երեսյթին տառանց որ և է պատճառի, տիրում էր, և այդ պատճառաւ էլ նորա ճակատի վրայ կնճիռները աւելի աշքի ընկնելու դարձան և նորա բաց-կապոյտ աշքերը տիրութ էին նայում:

Լիդայի վերաբերմամբ, ինարկէ, ինչպէս որ էր, այնպէս էլ մնաց քնչշաբար-սիրող հայր: Խոկ Փիլիպպի հետ խօսում էր նա առաջուանից քիչ, թէկ առաջ էլ նոքա շատ չէին խօսում: Ընդհարումներ արդէն բոլորովին չէին լինում, ոչ նկատողութիւններ, ոչ խրաններ, ոչինչ... ծերուկը մինչև խոկ, կարծես, խուսափում էր որդու հետ պատահելուց: Երեսում էր, որ մի տանջող միտք հալածում էր նորան, յուզում և վրդովում էր:

— Աւողջ ես, հայրիկ, — հարցուց նորան մէկ անգամ Լիդան: — Ինչո՞ւ այսօր այդպէս թթուած երեսով ես... անխօս (նա ուզում էր ասել «ախուր», բայց չասաց, տեսնելով, որ հայրը աշխատում է չմատնել իւր անհանգստութիւնը):

— Աւողջ եմ, սիրունիկս, ոչինչ... Ի՞նչ երեկոյ քեզ, — անհոգ ձեանալով ասաց ծերակը: — Այնպէս, մի քանի օր գլուխս էր ցաւում... խոկ այժմ բոլորը անցաւ: Բայց Լիդան մտածում էր, որ բանը այստեղ բոլորովին գլացաւի մէջ չէ, և թէկ հայրը նորան մսիթարելու համար ասաց, որ «այժմ բոլորը, անցաւ», բայց նա առաջուայ նման շարունակում էր ունքերը կիտել:

Այդ փոփոխութիւնը ծերուկի մէջ առաջացաւ Յունիսի կէ-

սերին մօտ, այն խօսակցութիւնից յետոյ, երբ նա հարցըրեց սրգու դիտաւրութեան մասին ապագայի վերաբերմամբ:

—Մտածում եմ զնալ Պետերբուրգ... ուզում եմ մտնել Անտառային ինստիտուտ, —պատասխանեց նորան Ֆիլիպպը:

—Այսպէս... Իսկ չեմ ուզում մնալ և ծառայել այսաեղ, —շարունակեց հայրը: —Եթէ ուզում ես, ես կարսդ եմ քեզ համար խնդրել նահանգապետին...

—Ո՛չ, դիւանատունը ինձ չէ գրաւում... —ասաց որդին:

—Ինչպէս գիտես: Քո բանդ է... ես չեմ խանգարում, —ասաց ծերուկը հոգոց հանելով:

Սրանով էլ խօսակցութիւնը վերջացաւ: Խօսակցութեան մէջ, լսա ելեւսթին, չկար մի այնպիսի բան, որ կարողանար վշացնել ծերուկին: Որդին չէր կամենում մնալ հայրական քաղաքում, կամենում էր այլ ևս սովորել..., Սրանում ոչ մի վատ բան չէր երևում, մանաւանդ, եթէ ՚ի նկատի առնենք այն հանգամանքը, որ ծերուկը շատ անգամ, մասսամբ կատակով, մասամբ լուրջ, զգուշացնում էր, որ «Փիլիպպը ներկարար կամ ծինելոյդ մաքրող չգաւանայ»: Ծերուկը միայն կարող էր ուրախանալ, որ որդու ընտրութիւնը ընկել է մի այնպիսի պատուարեր հիմնարկութեան վրայ, ինչպիսին է անտառային ինստիտուտը: Դործի էութիւնը չգիտացող մարդը բոլորովին չէր կարող մտածել, որ այս կարճ և բոլորովին հանգիստ խօսակցութիւնը ցնցեց ծերուկ Զատրովին մինչև նորա հոգու խոլքը: Նորա սիրալ այսպէս շփոթուեց, որ ծերուկը մինչև անգամ մի քիչ գունատուեց:

Սհաւասիկ այս իսկ կարճ և ըստ երեսյթին անհշան խօսակցութիւնից յետոյ, ծերուկը յանկարծ, կարծես, զառամեցաւ, թուլացաւ, կարծես նորան մի բան հարուածեց... Նա յաճախ, բոլորովին ակամայ, ծանր հոգոց էր հանում և երևակայելով, որ շրջապատողները չեն նկատում իւր քեզ չունենալը, այնպէս էր ձեանում, ինչպէս առհասարակ շունչը կարուած մարդը շունչ է առնում... Այդ բոպէին ցաւալի էր նորա վրայ նայելը: Իսկ հոգոց էր հանում նա այսպէս ծանը, որ նորա սիրալ բարախում էր ցաւելու շափ սաստիկ և յուզուած, որովհետեւ տանջալից հոգսերը յաղթամբ էին նորան: Տիսրութեամբ նայում էր նա իւր սիրելի Լիգայի վրայ, իսկ որդու վրայ, երբ վերջինս չէր նայում նորա վրայ, յաճախ նայում էր գաղտնի, երկիւղով և շփոթութեամբ: Հետուից կարելի էր այսպէս թուել, որ ծե-

րուկը, կարծես թէ, վախենում է նորանից, կարծես ուզում է մէկ բան ասել նորան, բայց չի համարձակում...

Փիլիպպը բոլոր այդ ժամանակը զգում էր ինքն իրան շատ վատ, մի-մի ժամանակ հօրը տեսնելիս, կարծես մի ծանր բան գալիս նասում էր նորա սրտի վրայ: Նորան աւելի հեշտ կլինէր, եթէ ծերուկը առաջուայ նման շարունակէր զուալ նորա վրայ և յանդիմանութիւններ կարդար: Փիլիպպը մտածում էր, ինքը բարկացրած չէր արդեօք հօրը: Արդեօք շատ խիստ չվարուեց նորա հետ: 2վիրաւորեց արդեօք ծերուկին: Եւ նա, լինում էին բոպէներ՝ երբ չաս էր ցանկանում մօահնալ, հաշտուել հօր հետ, ստիպել նորան հասկանալ իրան...

Նա երբեմն կամենում էր հօրը ասել, «ինչո՞ւ զու ինձ միշտ յետ էր մզում և այժմ յետ ես մզում և տանջում քեզ և ինձ: Ներիի, եթէ ես մի բանով ցաւացրել եմ քեզ... թաց ինձ քո սիրալ, թոյլ տուր, որ ես մտիթարեմ քեզ, ցրեմ քո տիսուր մտքերը: Թոյլ տուր ինձ սիրել քեզ և խօսել քեզ հետ սրտարաց ամեն բանի մասին»...

Այսպէս էր խօսում Փիլիպպը ինքն իրան, նայելով հօր վրայ, որ տիրադէմ նստած էր լինում իւր բաղկաթուի մէջ: Բայց զնալ հօր մօտ և ասել նորան այս խօսքերը, որոնք ուզում էին գուրս բղանել նորա բերանից, Փիլիպպը չէր կարողանում: Նորան թուում էր, որ հօր հետ այսպիսի վարմունքը գուրս կ'զայ թատերական, կնմանի մելոդամայի, իսկ Փիլիպպին ոչինչ այնքան չէր կաշկանդում, ինչպէս բոլոր անբնականութիւնը, բերանացի արուածը, բալորը, ինչ որ նմանում է գերի, կատակերգութեան: Եթէ նա այսպիսի բացականչութեամբ գառնար գէպի հայրը, ծերուկը, ինչպէս կարծում է, սառն ծաղրով կալատասիանէր նորան: «Ճնորհակալ եմ, Փիլիպպ, տեղիք չ'կայ ինձ միմիթարելու... Բայց ես քեզ յետ չեմ մղում, և ճշմարիտ, ես չգիտեմ էլ, ինչով ես քեզ տանջում եմ: Ընդհակառակը, կարծեմ ես այժմ քեզ բոլորովին հանգիստ եմ թողել... Ես բոլորովին չէի կարծում, որ զու այսպէս գիւրագրիու են»... ծերուկը կոչում էր նորան «անառակ որդիի»: Սանք, նա այսպէս էլ էր նորա աշքում: Բայց աւետարանական առակում հայրը չծաղրեց իւր «անառակ որդուն», այլ ցնծութեամբ առաւ նորան իւր գիրկը... Փիլիպպը կարծում էր, որ նոր ա հայրը չէր վարուի այսպէս, ինչպէս հայրը աւետարանի առակում...

— չայրիկը առողջ է արդեօք, — մէկ անգամ հարցրեց նա քրոջը; — ի՞նչ է պատահել նորան: Դու չգիտե՞ս:

— Զգիտեմ, — բաւական սառն պատասխանեց նորան Լիդան: — Հաւանական է դու քո վարմունքով վշտացրել ես նորան...

— Դու կարծում ես, — ցած ձայնով հարցրեց Գիլիպպը:

— Այն, կարծում եմ, որ այդպէս պիտի լինի... Ուրիշ ի՞նչ կարող է լինել... Վերջին ժամանակները դու, ճիշտ որ, խօսում էիր նորա հետ այնպէս, որ անտանելի էր լսելը...

— Բայց ի՞նչպէս եմ ես նորա հետ խօսել: Ի՞նչ եմ ասել, — կոկիծով և տիրութեամբ ասաց Գիլիպպը:

— Կոպիտ էիր խօսում դու նորա հետ... իհարկէ, — չարամտութեամբ նայելով շփոթուած ֆիլիպպի աշքերին, ասաց Լիդան:

«Այ, Լիդան էլ ուրեմն այդպէս է մտածում, — ասում էր նա ինքն իրան: — Ի՞նչ անեմ ես այժմ: Հեռանալ շուտով... Դուցէ նա առանց ինձ հանգստանայ»:

Յուրիս ամսին նա սկսեց խօսել հօր հետ այն մասին, որ ամսի վերջում պէտք է Պետերուրդ ուղարկել խնդիրը և վկայականները, իսկ օգոստոսի սկզբին պէտք է երթալ...

— Ե՞ն, ի՞նչ կայ որ, գնա... — ասում էր ծերուկը, աշխատելով չնայել ֆիլիպպի վրայ:

Տիսուր էին անցնում յուրիսեան օրերը «Ճատրով ժառանգների» տան մէջ: Միայն ծանօթ վարդապոյն տան մէջ, ի՞նչպէս ասում էր ֆիլիպպը, նա հանգստացնում էր իւր սիրաբը:

— Ի՞նչպէս է, ֆիլիպպ Ալէքսանդրովիչ, հայրիկը դարձեալ բարիկանում է ձեր վերայ, — կարեկցաբար հարցնում էր նորան նաստեան:

— Ես, ճշմարիտը, չգիտեմ, թէ ի՞նչ է պատահել նորան, — պատասխանում էր երիտասարդը: — Այսպէս դեռ երեք եղած չէր... Մի խօսք չի արտասահում, սառն է ինձ հետ, ի՞նչպէս սառոյց..., ինձ մի-մի ժամանակ թուում է, թէ նա ինձանից մինչեւ անգամ փախչում է... այնքան ես նորան զգուելի եմ...

— Կարող չէ լինել, ֆիլիպպ Ալէքսանդրովիչ: Ինչից էր եղրակացնում դուք այդ; — ասում էր նաստեան, — չէ՞ որ ձեր մէջ տուանձին ոչինչ պատահած չէ:

— Այն, բայց նա վազուց ինձանից անբաւական է... Յետոյ էլ անախորժ խօսակցութիւններ եղան... Ասենք այդպիսի խօսակցութիւններ մեր մէջ լինում էին և առաջ... Զգիտեմ ի՞նչ ասեմ, — տարակուուիլով տուում էր ֆիլիպպը:

Դաղանիքը շուտով պարզուելը և այդ պարզուելը այնպիսի վրդովմունք առաջ բերեց զատրովների տան մէջ, այնպիսի փոփոխութիւններ գործող անձանց յարաբերութիւնների մէջ, որ ոչ իրանք գործող անձինք, ոչ նոցա ծանօթները, ոչ այս վեպի կարգացողները կարող էին նախատեսել:

Մի անգամ նախաճաշից յետոյ, Փիլիպպը սեղանատան պատուհանի մօտ նստած կարգում էր: Լիդան պատրաստում էր դուրս գալ տնից, արդէն գլխարկը ծածկել էր և, ձեռնոցները հագած, պտոյտ էր գալիս սեղանատանը պատի հայելու առաջ: Այդ ըստէին ծերուկը երեաց դռան մէջ:

— Դու, Լիդոչկա, գնում ես, — հարցրեց նա:

— Այո, հայրըիկ: Քիչ ժամանակով... ես պէտք է կլուշինի խանութը գնամ, — պատասխանեց աղջիկը:

— Ա-ա: Բայց և այնպէս ես քեզ մի քիչ կրոնեմ... Երթանքիմ մօտ... Դու էլ արի, — զարձաւ նա Փիլիպպին:

Փիլիպպը զարմանքով նայեց հօր վրայ և գնաց նոցա յետերից, դէպի նա ուղղուած հօր ձայնը Փիլիպպին թուաց անսովոր, հաստատակամ և լուրջ, մինչև իսկ խրոխտ:

Առանձնասենեալը մի փոքրիկ լոցիկ էր մի պատուհանով, ամենահասարակ և պարզ կահաւորութեամբ: Երկաթէ մահճակալ, զրատեղան առանց աւելորդ սեթենեթների, նրա առաջ մի բաղկաթոռ, զարակներ, գրադարան, փորբիկ պահարան տնային գեղերսվ և ամեն տեսակ պարագաներով և երեք աթոռ: Առջեի անկիւնում Փրկչի պատկերը, առանց վշեայ պսակի, առանց մետաղագեստի, հին և լաւ նկար, իսկ պատկերի յետել չորացած ծառի ճիւղ թղթեայ բաց գայնի վարդով: մէկ պատի վրայ Ռուսաստանի քարտէզը, միւսի վրայ, հնութիւնից սեացած, այսպէս ասած «Յաւիտենական օրացոյց», որ ցոյց էր տալիս այդ օրը «Յուլիսի 19-ը»... Գրասեղանի վրայ, թանաքամանի երկու կողմը, կանգնեցրած էին վարդագոյն թաւչչ շրջանակների մէջ երկու լուսանկարներ. մէկը ծերուկ զատրովի հանգուցեալ կնոջ, միւսը Լիդայի և Փիլիպպի երեխայ ժամանակուայ պատկերները:

Ծերուկը նստեց բաղկաթոռի վրայ, Լիդան առաւ աթոռը և նստեց նորա մօտ. Փիլիպպը կանգնած էր վըրակալին հենուած:

Մառախլապատ օր էր, քամի չկար և խեղդսով էր: Պարաէզի կողմի պատուհանը բացած էր, բայց հանգիստ օդի մէջ ամենափոքրիկ զովութիւն անդամ չէր զգացւում:

Ենթակը քաշեց ծխամորճը, ուղղեց ընչացքը և հաղաց, ինչպէս սովորաբար անում են պատրաստուելով կամ շատ խօսելու և կամ դժուարին ու ծանր բացադրութիւն տալու ժամանակ:

—Դուք գիտէք, որ ձեր մեծ-մայր իրինա Միխայլովնայից յետոյ, ձեղ մնաց ահա այս տունը և փող...— սկսեց Ենթակը թեթև հոգոց հանելով:— Այս բոլորը ձեղ է կտակուած հաւասարապէս, այսինքն ձեզանից իւրաքանչիւրը իրաւոնք ունի տան կէսի և փողերի կէսի վրայ... Յուլիսի 10-ին, Փիլիպպ լրացաւ ըստ 21 տարիդ: Դուք երկուադ էլ այժմ չափահաս էք և կարող էք ստանալ ձեր ժաւանգութիւնը: Ես ձեր խնամական էի... Ահա և այժմ ինձ պէտք է խօսել ձեղ հետ... Դուք պէտք է ստանաք տունը և 14 հագար բուրլի փող, իւրաքանչիւրիդ 7 հագար: Ուրեմն դուք այս բոլորը գիտէք:

—Եյո, հայրիկ, —ցած ձայնով խօսեց Լիդան:

—Դու ինձ այդ մասին ոչինչ չես ասել, —տսաց Ֆիլիպպը:

—Այ, այժմ եմ ասում...,—խօսեց Ենթակը և, ծխամորճը քաշելով, մի բոպէ լսեց:

Լիդան շունչը պահած լսում էր. նախաղդացմունքը նրան ասում էր, որ պէտք է լինի մի շատ կարևոր, գործնական բացադրութիւն:

—Դուք, իհարկէ, կուզենաք ստանալ ինձանից հաշիւ... ստուգել ինձ...—ամուր ձայնով խօսեց Ենթակը, առաջ քաշելով գրասեղանի գլուխը: Եւ դուք այս բոպէիս կտանաք հաշիւ... այժմ... ահա...—շուտ-շուտ խօսելով, շարունակեց նա, հանելով գլուխը ինչ-ինչ թղթեր, գրուած նորա հնօրեայ ուղիղ ձեռագրով:

—Ոչ մի հաշիւ ես քեզանից չեմ ուզում, —ունքերը կիտելով խօսեց Ֆիլիպպը: Եւ եթէ, հայրիկ, դու ինձ կոչել ես այստեղ միմիայն դրա համար, ես դուրս կերթամ:

—Կաց, —շեշտելով ասաց նորան Ենթակը:

Լիդան լրու էր և գլուխը քիչ ծռած, մտածկոտութեամբ թխացնում էր սեղանը մատների ծայրով, որոնք ծածկուած էին բարակ, բաց-մանիշակագոյն շան սեկից ձեռնոցների մէջ: Նորա սպիտակ քողը ձգուած էր գլխարկի վրայ, զարդարուած

կապոյտ ծաղիկներով և հասկերով: Օրիորդը այդ բոպէին շատ սիրուն էր իւր մտածիստ, սպասողական գիրքի մէջ: Նորա կտապոյտ աշքերը, կէս ծածկուած խիտ և երկար թերթելունք-ների տակ, նայում էին մտազրագ. Նորա թխլիկ շրթունքների վրայ սահում էր ժպիտը և կարծես վարդագոյն խաւով ծածկուած էին նորա սպիտակ, փափուկ այտերը: Նա ժպասում էր երկի մտածելով, որ ահա այս բոպէիս նա կդառնայ բաղդաւոր աէր եօթ հաղարին և այս սպիտակ տան կիսին, «որ արժէ երեք հազար... Իսկ հաւանողները կտան և աւելի»:

—Ինչո՞ւ ես կարծում, որ ես հաշիւ պիտի պահանջեմ քեղանից, —կոպտաբար և խօսութեամբ տսաց Փիլիպպը:— Ոչ ես կերթամ:

—Քեդ ասում են մնա, —ձայնը բարձրացնելով, տսաց ծեսուկը:

Փիլիպպը արդէն բռնել էր դուսը, բայց կանգնեց: Նորա մութ աշքերը փայլում էին զայրոյթից, թուխ այտերը շառագունեցան և շրթունքները ամուր սեղմուեցան: Ծերսուկի յամառութիւնը երեկի բարկացքն նորան և յուզեց մինչև հոգու խորքը: «Ինչո՞ւ նա ինձ վիրաւորում է» ասում էր ինըն իրան Փիլիպպը, նայելով հօրը և նորա արծաթանձան մազերով շերտաւորուած ճաղատ գլխին:

Եթէ նա առաջ լինէր հօր հետ ուրիշ յարաբերութեանց մէջ, եթէ լինէին նորա բարեկամներ, այն ժամանսկ Փիլիպպը կտակի համար, լուրջ-ծաղրական գէմքով կ'թերթէր այդ թուանշանների կարգերով ծածկուած թղթերը, և յիտոյ, խփելով նոյա վրայից ձեռքով, կ'կոչէր ուրախութեամբ. «Կսկականին ուզիր է»: Իսկ այժմ, այժմ ուրիշ բան էր: Այժմ կտակը անտեղի էր...

Փիլիպպը ամաշում էր թէ իւր և թէ հօր տեղ: Նորան թւում էր, որ հայրը ստորանում է թէ իւր և թէ լիդայի առաջ և միենոյն ժամանակ կարծես կասկածում է, կամ, գոնէ նորան—Փիլիպպին, այն բանի մէջ, որ Փիլիպպը չի հաւատասում նորան և ընդունակ է հաշիւ պահանջել, ստուգել, յետախուգել և հաշիւ տեսնել նորա հետ մանէթներով և կապէկներսի, ինչպէս մի գործակատարի հետ: Նա ուզում էր ուզակի համբուրել ծերսուկին և ասել. «Ընորհակալ եմ քեզանից, հայր, որ դու այսքան տարի պահեցիր ու պահպանեցիր մեր կարողութիւնը, այնքան զլուխ ցաւացըրի և հետեկցիր...» Բայց Փիլիպպինը, այնքան զլուխ ցաւացըրի և հետեկցիր...

լիպպը այժմ չվստահացաւ ոչ համբուրել հօրը, ոչ յայտնել իւր շնորհակալութիւնը՝ դարձեալ այն պատճառով, որ հօր հետ այդպիսի վարմունքը թափերախաղի ձեւ կունենար: Ֆիլիպպը բայց և այնպէս որոշեց յայտնել շնորհակալութիւնը, թէ և տառնց համբոյրների և փաղաքշանքի... «Ժող այդ փաղաքշանքիները բաժ-ժին ընկնեն հօրը Լիդայի կողմից», վշառվ և ցաւելով մատ-ծում էր նա:

— Դու, Փիլիպպ, իհարկէ այժմ իսկ կ'կամենաս ստանալ բո բաժինը և... կ'պահանջիս ինձանից բոլոր փողերը,—ասաց հայրը սառնութեամբ նայելով նորա վրայ:

— Ինչո՞ւ «բրոլը»,—արտասանեց որդին:—.Թող նոքա մնան քո մօտ... Տուր ինձ միայն 3-4 հարիւր մանէթ առաջին տար-ուայ համար...

— Ես, իհարկէ, փողերը տանը չեմ պահում, այլ զբա-մատանը... ասաց ծերուկը:—Երկի ես ստացայ... յատկապէս նրա համար, որ վերջնականապէս ցոյց տամ ձեզ հաշիւները և..., ամեմ ամեն բան...

Նա նորից առաջ քաշեց գրասեղանի գլուցը և նրա խոր-քից հանեց մի կոյտ գրամատան տոմուր և ծիրանեգոյն թղթա-գրամների մի կապոց:

— Ահա այստեղ են բոլորը,—ասաց նա, ձեռքը դնելով փողերի վրայ:— Այժմ դուք կարող էք առնել և անօրինել այն-պէս, ինչպէս գիտէք... Բայց ես ոլեաք է այլ ես ասեմ... Լիդոչկա, խնդրեմ կրակ տուր:

Աղջիկը շտապով վառեց լուցկին և մօտեցրեց հանգած ծխամորճին:

— Merci, աղաւնեակս:

Եերուկը ծխեց իւր ծխամորճը և նորից հազար:

— Ես պարտական եմ...—սկսեց նա, բայց Ֆիլիպպի և նոյն բոպէին խօսեց, և ծերուկը ակամայ դպրաբեց:

— Շնորհակալ եմ քեզանից, հայր, որ դու պահել ես...

— Թոյլ տուր, խնդրեմ... մի շտապիր: Դեռ կ'յայտնին շնորհակալութիւնգ...—ընդհատեց նորան հայրը, և ալլիպպին թուաց, որ նորա ձայնի մէջ լսում է կծու ծաղը:

Լիդան բռնեց հօր ձայնի ելաչչների մէջ մի բան, ծերուկը երեխ կ'բարկանայ Ֆիլիպպի վրայ, որ նա կարում է նորան: Լի-դան ուշագրութեամբ լսում է հօրը, իսկ այդ «զզուկի Ֆիլիպպը միշտ ամենքին խանդարում է...» Կարծես, ճիշտ որ, նա ժա-

մանակ չէր ունենայ յայտնել իւր շնորհակալութիւնը հայրիկին, երբ կ'վերջանայ այս բոլոր գործողութիւնը...»

— Բաղդը հալածել է ինձ...—սկսեց ծերուկը, ձեռքը դնելով աղջկայ ձեռքի վրայ: Ուրիշները կուցէ կասեն, որ ես յափշտակուել եմ... Զգիտեմ,, Դուք, իհարկէ, տեսած կլինէք գոմում մի նաւակի կաղապար... Այդ իմ գիւտն է: Նաւակը պիտի լողար վեր ու վայր հոսանքով և հակառակ հոսանքին ջրի տակով: Ջատ նեղութիւն եմ քաշել ես այդ չարաբասիկ նաւակի պաճառով: Այստեղի վարպետների ձեռքով հեշտ չէր կաղապարը շինելը: Դնացի ես Պետերբուրգի, ներկայացրի այդ կաղապարը, բայց ոչինչ գուրս չեկաւ... Յետոյ դուք, իհարկէ, տեսած կլինէք գոմում մի վագոնի կաղապար... Մատղիր էի շինել մի «անվտանգ վագոն»... Գուռ, Փիլիպպ, կարծեմ նիանով մի ժամանակ խաղում էիր: Վագոնին էլ նոյն անաջողութիւնը պատահեց: Անաջողութիւնները հալածում էին ինձ... Իհարկէ, ես արեստագէտ չեմ... կարող էին սիսաներ լինել իմ հաշիւների մէջ, բայց... եթէ ժամանակը և միջոցները ներէին, ես կողղէի սիսաները, ես, իհարկէ, կհասնէի իմ նպատակին... Իմ միտքս ռւզիղ էր... բայց ես անբաղդ եմ...

Այդ ասիլով ծերուկը սեղմեց աղջկայ ձեռքը, կարծես խնդրելով նորանից քաջալերութիւն և կարեկցութիւն, բայց Լի-դայի ձեռքը թոյլ պատասխանեց նորա սեղմածին: Փիլիպպի վերայ նա չէր նայում:

— Դուք գիտէք. Թուղթ խաղալ ես չեմ սիրում, չեմ խմում, մինչեւ անգամ գիրք էլ խնայողութեամբ եմ բերել տալիս ինձ համար...—շարունակեց ծերուկը:— Ես ապրում եմ ձեզ հետ, դուք ինքններդ գիտէք, ինչպէս եմ ես ապրում... Ես բաւակա-նութիւնների յիտենից չեմ ընկել, չեմ էլ ընկնիլ, դուք գիտէք... Իմ քմահաճութիւններիս համար ես չեմ ծախսել ոչ մի կուպէկ ձեր փողերից... Ահա այս ջլոպէ ներքնակը 15 տարի է, որ առել եմ... դժուարանում եմ ես նրա վրայ քնել, ցաւում են ծերուկիս ուկրները... Ահա այս թաղիքը մահճակալիս մօտ գորգի տեղ ես մինչեւ իսկ չեմ յիշում, թէ երբ է դա գնուած... Կարծեմ զեր տատիկ կենդանութեան ժամանակ...

— Հայրիշկ, ես, ճշմարիտ, չգիտեմ... Ինչո՞ւ ես այդ բո-լորը դու ասում, համարեա ցաւելով կանչեց Փիլիպպը:— Ո՞վ է քեզանից հաշիւ պահանջողը: Յամենայն զէպս ես չեմ...

Երիտասարդը մինչեւ անգամ թեթև կերպով գունատուեց

յուզմունքից. նորա թուխ այտերի գունատուելուց, նորա խոշոր, մուլթ աշքերը թւում էին աւելի ևս սկ և խորը:

— Լիդա, ինչո՞ւ ես դու լուսմ: Խօսիր,—յուզուած դարձաւ գէպի քոյրը Փիլիպպը:—Ինդրիր, սր նա թողնէ այս բոլորը...

Իսկ Լիդան լուռ էր... Մի աղօտ, ծանր տարակուսանք պաշարում էր նորան աւելի և աւելի, քանի հայրը խօսում էր և աստիճանաբար պինդ սեղմում նորա ձեւը, նայելով մի-մի ժամանակ նորա վրայ, ինչպէս նորան թւում էր, աղաջաւոր և յուզուած կերպով: Ի՞նչ է նորանից հայրը սպասում: Ի՞նչ է ուզում նա նորանից..., Կարծես հօր հոգին պատող յուզմունքը բնագրմամբ անցնում էր և լիդային:

— Այժմ... այժմ, Փիլիպպ: Ես կվերջացնեմ...—ասաց նույան ծերուկը:—Իսկ յետոյ զու կխօսես... Իսկ ես կլսեմ,, ժամանակ կայ... Սյու... Ուրեմն ահա ինչ էի ուզում ասել ձեզ...

Ծերուկը գունատուեց և լուց: Մի վաս, հիւանդոտ կարմբութիւն բծերով ծածկեց նորա այտերը: Նա ուժգին ծծեց ծիամորճը և կարծես մերենապէս զրեց ձեւքը առմսակների և փողերի վրայ, բայց և նոյն բոպէին յետ քաշեց:

— Զեղ վրայ իսկապէս ծախսուած է, բացի տոկոսներից, այս բոլոր տարիները համարեա երկու հազար... Ահա այստեղ են և վաւերակները... այստեղ բոլորը ցոյց է տրուած. երբ, ինչու համար և այլն:

Ծերուկը նորից կանգ առաւ, նայեց պատուհանից... Մոխրագյն, մառախլապատ ամպերը պատում էին երկնակամարը: Խօսիները կանգնած էին պարաիզում անշարժ: Ծանը, արճացին ստուեր էր ընկած ամենի վրայ...

— Դիւտերը թանկ արժեցին... շատ թանգ են այդ կազապարները,—խուլ յուսահատ ձայնով արտասանեց ծերուկը:— Ա՛խ, որքան տանջել են ինձ այդ գիւտերը, եթէ գուք իմանայիք... Մօտաւորապէս վեց հազար և կէս ես ծախսել եմ նոցա վրայ ձեր փողերից...

Այդ բոպէին ծերուկը զգաց, ինչպէս Լիդայի ձեռքը գուրս պլրծաւ իւր ձեւը տակից:

— Մ'նում է 5,460 մանէթ: Ահա բոլորը այստեղ է...

— 2,730 մանէթ, փոխանակ 7,000-ի—յանկարծ տարօրինակ ձայնով խօսեց մէկը խիստ հաստատուն կերպով:

Կարծես մէկի սառցային շունչը անցաւ սենեակի միջով: Ծերուկը ցնցուեց և նայեց: Խօսում էր Լիդան,,, Բայց

նորա ձայնը այնպէս էր փոխուել, որ քիչ էր մնում ծերուկը շմանաշէր նորան:

— Դու ծախսել ես 6,000-ի մօտ,—հարցրեց նա:

— Այն, այն, Լիդոչկա,—հոգոց հանելով պատասխանեց նորան հայրը, դողդողուն ձեւքով խփելով տոմսակներին:— Այն, փոխանակ 12,000-ի, այստեղ միայն 5,460 մանէթ կայ: Դէհ, ի՞նչ ես լուսմ,—դարձաւ նա գէպի Փիլիպպը:— Ինչո՞ւ այժմ ոչինչ չես խօսում: Այժմ խօսքը քոնն է... Խօսիր, դատիր ինձ... Ի՞նչ ես կանցնել...

Փիլիպպը տիրութեամբ նայում էր ծերուկին, և միայն «ծիծաղելի» «թատերական» թւալու ահը խանգարում էր նորան այդ բոպէին վազելու հօր մօտ, զրկելու նորան և կոչելու. «Մի խօսիր ինձ հետ այդպէս: Թողնենք այդ բոլորը... Ես քո դատաւորը չեմ: Ո՞չ դատել, այլ համբուրել եմ ուզում քեզ... Եմ հարազատ»: Ծերուկը կարծես զգաց իւր վրայ նորա շեշտակի հայեացքը, բարձրացրեց գլուխը և նայեց նորա վրայ: Նոցա աշքերը պատահեցան իւրաք: Երիտասարդի աշքերում կարծես թէ արտասուր էր երկում, իսկ հօր աշքերում տարակուսանք...

Ծերուկը, ըստ երկոյթին, սաստիկ յուզուում էր, և աւելի յուզուում էր նրանից, որ աշխատում էր ծածկել իրան յաղթող շփոթութիւնը և միենոյն ժամանակ զգում էր, որ ծածկել չի կարողանում:

Մի քանի վայրկեան շարունակ ծանը, գերեզմանային լուսութիւն էր տիրում սկնեակում: Լսելի էր, թէ ինչպէս ճանճը բզբալով կաշում էր առաստաղին և պարտիզում կաղնիների թփերում ծւծուում էր թաշնիկը:

Լիդան մէկին վեր կացաւ, կանգնեց գրասեղանի մօտ և, երկու ձեռքով հենուելով նրա վրայ, մեծ կատաղութեամբ և շարութեամբ նայեց հօրը: Նա նայում էր հօր վրայ այնպէս, կարծես ուզում էր նորան ոչնչացնել, այրել, փոշիացնել իւր աշքերի առաջ: Ո՞ւր գնաց նորա մատաղ, մտածկու գէմքի փափուկ գեղեցկութիւնը, որ մի բոպէ առաջ նորան հետաքրքիր և զեղեցիկ էր զարձնում: Նա այժմ մի կատաղած փուրիա էր, չար, կատաղի կենդանի, պատրաստ պատառել իւրաքանչիւրին իրանից խլուած մի կտոր մտի համար:

Ո՞չ, նա այնպէս հեշտութեամբ չի զիշանիլ: Նա թոյլ շիտակ անպատիք կողոպտել իրան: Փիլիպպը ինչպէս որ գիտէ,

բայց իւր բաժնից չի հրաժարուիլ: Իրան ի՞նչ, որ նա անմիտ գիտեր է կամեցել անել: Նա առանց ցախ չի կարող յիշել այժմ նորա նաւակների և վագսնների մասին, որոնք ընկած են գոմում զանազան անպէտաք իրեզէնների հետ... Եւ այդ յիմարական գիտերի վրայ ծախսուել է 6,000... Ո՛չ, նա թոյլ չի տալ իրան կողոպտել... Ո՛չ, նա ձեռք չի վեր առնիլ, կպահանջէ... Լիդայի վրայ նայելը անախորժ էր, մինչի այն աստիճան փօխուել էր նորա գէմքը: Քթի ծայրը սպիտակել էր, քթածակերը լայնացել, կուրծքը ծանր էր շնչում... Ճիշտ որ, կողքից նայելով, կարելի էր կարծել, որ նա, ինչպէս կատու, պատրաստ է թոշել իւր զոհի վրայ և իւր զեղ, մաքուր ձեռներով կախուել ծերուկի մօրուքից:

— Այդպէս գու... կողոպտեցիր մեզ,— մի սուլող շշուկով ասաց նա, կռանալով սեղանի վրայ և աչքերը սկեռելով ծերուկի աչքերին:

— Լիդա, զաւակս... կոտրուած ձայնով, գծուալութեամբ խօսեց ծերուկը, շնչասպառ լինելով յուզմունքից և աշխատելով բաղկաթուից բարձրանալ: — Գու ասում ես...

Ծերուկը ձեռքով սրբեց աշերը, կարծես արթնանալով լուսաւոր տեսիլներից և դառնալով տանջալից իրականութեան:

— Լիդա, լիդոչկա... — անկապ թոթովում էր ծերուկը, և նորա տխուր հայեացքը ընկաւ աղջկան վրայ և սառած մնաց:

Ո՞րաեղ է նորա փափկութիւնն ու փաղաքանքը: Ո՞րտեղ է նորա մշտական բարութիւնն ու զիջողութիւնը գէպի ծերուկ հայրը: Միթէ նա չի գտնում այդ գժուար բոպէին հօր համար մի միթարիչ խօսք: Միթէ աղջիկը այդպէս խստասիրտ կ'լինի դէպի նա... Բայց... Աստուած իմ, Աստուած, ինչպէս է նա նայում նորա վրայ... ինչպէս նայում... Թէկ այդ բոպէին նա նայում էր հօր վրայ, բայց ոչինչ չէր տեսնում և ոչինչ չէր ուզում գիտենալ իւր խարուած ակնկալիքներից և փլատակուած յոյսերից զատ: Ահա նրանք կարծես ընկած են նորա աչքերի առաջ, ինչպէս այն անպէտ, ջարդուած կազապարները...

Ինն հազարի փօխանակ (հաշուելով և տունը), այժմ, շնորհիւ այդ անիծեալ կաղապարների, նորան մնացել է մի շնչին երկու հազար... «Գու կողոպտեցիր մեզ» — ասաց լիդան: Միթէ փօղերի կորուսուր այն աստիճան աղդեց նորա վրայ, որ մինչև անգամ կորցրեց նա իւր խելքը... Բայց ինչպէս է նա նայում

հօր վրայ: Ի՞նչ տարօրինակ գէմք է: Ծերուկը նորա վրայ գեռ այլպիսի գէմք երբէք չէր տևսել... Սարսափելի է, սարսափելի... Բայց ի՞նչպէս հայրը հաւատում էր նորան, ինչպէս սիրում էր, ինչպէս փաղաքշում էր նորան օրօրոցից... Եւ միթէ այդ բոլորը ոչնչացաւ փողի համար... Նա վախենում էր Փիլիպից, «անառակ որդուց» նա զգուշանում էր, իսկ նորա մէջ ծերուկը յոյս ունէր հենարան և միթիթարութիւն գտնել այդ ծանր բոպէին, այն ինչ նա, լիդան, նորա սիրելին... նորա ուրախութիւնը... նորա բաղդաւորութիւնը... Ասում են, որ պատժից առաջ (կամ առհասարակ մահից առաջ) մարդու երեակայութեան առաջ անցնում է պատկերներով և երազներով տարիների մի երկար շարք, ամբողջ կիանքը, բոլոր նրա նշանաւոր բոպէները սկսած վաղ մանկութիւնից, որ դեռ պատաժ է լինում ստուերներով, մառախուղի նման կիսալուրջ, կիսահեքիաթական տեսիլներով...

Նոյնը պատահեց և ծերուկ զատրովի հետ այն ժամանակ, երբ նա, շփոթուած աղջկայ խօսքերից և հայեացքից, անշարժ նայում էր նորա վրայ...

Ահա նա ման է ածում սենեակի մէջ մանուկ լիդային, բոնած նորա ձեռքից, իսկ նա զեռ հազիւ է կարողանում փոխել ոտնելը... Ահա օրօրում է նորան և աղջիկը քնում է նորա ձեռների վրայ: Դիշերը մատների վրայ մօտենում է նա նորա սենեակին և դիտում, որպէս զի համոզուի, առողջ է արգեօք նորա աղջիկը, հանգիստ է քնած, հանգիստ է շնչում... Ահա լիդան հիւանդ, և նա զգիաէ թէ ինչ է հանգիստ ոչ ցերեկը և ոչ գիշերը. ինքը հիւանդանում է հիւանդ աղջկան տեսնելով... Ահա նա ճանապարհ է գնում լիդային զիմնազիօն և տալիս է նորան հացի համար փող, գասերից յետոյ գալիս է նորա յեակից, և ճանապարհին աղջիկը միշտ խօսում է, պատմում նորան դասերի մասին, ուսուցիչների, դասարանական փարժուհիների, իւր ընկերուհիների մասին... Ահա լիդան հավաքուհիների, իւր ընկերուհիների մասին... Ահա լիդան հասաւացած աղջիկ է, նորա սիրտը ուրախանում է, նորա վրայ նայեացց չի յագենում և մատծում է նա իւր սիրելու բաղդուր և փայլուն ապագայի մասին...

Եւ քանի ուրախալի, յուղիչ պատկերներ անցնում են մի վայրկեանում նորա առաջից, անցնում են աւելի արագ, քան յիշութէ ես կարողանում եմ զբել այս տողերը... Բոլոր այս յիշութիւնները, նորա մտքի աչքերի առաջ վայրկենապէս կենդութիւնները,

դանացած, կարծես դանակով կտրատում էին նորա սիրաը, և ծերուկը շնչառպառ, վայրենի, գանգատաւոր ձայնով կոշեց, «Լիդ... գու...» ինչ որ մրթմրթաց և կամաց օրօրուեց բաղկաթուի վրայ. նորա զլուխը կախ ընկաւ, ծխամորճը դուրս սահեց ձեռքից և ծխախոտի փոշին թափուեց յատակի վրայ:

Փիլիպպը շտապեց նորան օգնութեան..

— Տոմսակները ես կպահեմ, իսկ մնացեալ փողելը և թղթերը առ քեզ,—ասաց օրիորդը, հաւաքելով դրամատան տոմսերը և սառնութեամբ նայելով Փիլիպպին:

Ծերուկը, ամբողջովին ցնցուելով, կապտած դէմքով ընկած էր բազկաթուի վրայ և ծանր խրխռացնում էր: Փիլիպպը սկսեց շտապով քակել նորա շորերը և զգկապը:

— Ուղարկիր բժշկի յետեից... շնուտ.—կանչեց Փիլիպպը քրոջը:

Ինչպէս մի վիրաւորուած, բարկացած թագուհի, Լիդան դուրս եկաւ սենեակից, խնամքով բարձրացնելով իւր գեղեցիկ զգեստի փեշերը, որպէս զի չ'կաշի յատակի վրայ թափուած ծխախոտի մոխրին: Մինչև անգամ նորա գլխարկի վրայ եղած կապտագոյն վարդերն ու ոսկեգոյն հաճարի հասկերը կարծես դողսւմ, սարսափահար էին լինում և զգւում այդ խստասիրա և անխիղ աղջկանից:

ՎԻ

Ծերուկ զատրովը կաթուածահար եղաւ և իսկոյն, այդ դեռ ես առոյգ մարդը, դարձաւ մի խղճուկ աւերակ: Չորս օր նա պառկած էր առանց շարժուելու և միտյն երկար, աղերսալի կերպով հառաջում էր: Հինգերորդ օրը նա սկսեց մէկ-մէկ թոթովել, անկապ, բայց և այնպէս կարելի էր նորան հասկանալ, թէս մի-մի ժամանակ մեծ դժուարութեամբ:

Առաջին օրերը այն ծանր դէպքը, որ տեղի էր ունեցել նորա հիւանդանալուց առաջ, բոլորովին ընկել էր մաքից: Նա խօսում էր հին ծահօթների, վաղուց անցած գնացած դործերի մասին, բայց ընդհանրապէս խօսում էր քիչ, իսկ մեծ մասամբ պառկում էր լուս, աշքերը փակած կամ նայելով իւր ձեռներին:

Մի շաբաթից ակներկ էր, որ նա ուշքի էր գալիս, սրով-հետեւ քիշ-միշ սկսում էր յիշել մօտ անցեալը: Նա սկսեց վախենալ Լիդայից և յաճախ կանչելով իւր մօտ Փիլիպպին, սղորմելի դէմքով ասում էր նորան.

— Մի թաղնիլ նորան... այստեղ: Զես թաղնիլ: Նա չի գալ:

Փիլիպպը գիտէր, թէ ում մասին է խօսում հայրը և աշխատում էր հանգստացնել նորան: Բայց ծերուկը դարձեալ վախով և անհանգստավթեամբ էր նայում դռանը:

Մի օր երեկոյեան, երբ հիւանդը ընեց, Փիլիպպը, թողնելով նորա մօտ Մարթային իբրև հսկող, գնաց բարեկամներին տեսնելու: Նա գտաւ նաստեային մենակ արհեստանոցում կար կարելիս:

— Կատանիմ է ձեր հիւանդը, — հարցրեց նորան նտստեան:

— Այս, քիչ-քիչ... պատասխանեց Փիլիպպը: — Մէկ ձեռքը շարժում է, սկսում է խօսել, բայց գեռ ես վաս...

— Իսկ ձեր քոյրը... ինչպէս... գնում է նորա մօտ...

— Մի-մի ժամանակ մանում է, երբ նա քնած է լինում... Եթէ գուք, նաստեա, լսէիք ի՞նչպէս էր խնդրում ինձ, որ ես շթողնեմ նորան սենեակ... Ամբողջովին գողում է, աշքերը այնպէս մեծանում են...

Ի՞նչ սարսափելի բան, — շնչաց նաստեան, տիրութեամբ նայելով երիտասարդին:

— Իսկ ես, նաստեա, եկայ ձեզ հարցնելու. Ի՞նչ կանէիք այժմ գուք իմ տեղ: Ի՞նչպէս կ'վարուէիք, — արտասանեց Փիլիպպը:

Աղջիկը զարմացմամբ նայեց նորա վրայ և սկսեց մտած-կուութեամբ հարթել ծնկների վրայ իւր կարը:

— Դէ, ի՞նչ էք լուսւ, նաստեա... Ոչի՞նչ չէք ասում, — պնդում էր Փիլիպպը:

— Դժուար է ասել, Փիլիպպ Ալէքսանդրովիչ, — ծանր-ծանր խօսեց նա: — Դուք ունէք մէկ տեսակ մտքեր, ես ուրիշ տեսակ... ձշմարիտը ես ինքո էլ չգիտեմ, թէ ի՞նչպէս կվարուէի այսպիսի դէպքում...

— Բայց և այնպէս, ի՞նչպէս: Մատածեցէք, պատկերացըէք: 2⁵ սը գուք գիտէք իմ ներկայ գրութիւնը...

— Գիտեմ, — արտասանեց նաստեան, կռանալով ատամներով կարեց թելը և մտածելով սկսեց պտտել նրան իւր մատների մէջ: — Ինձ թւում է, որ ես չէի թողնիլ ծերուկին մենակ, հիւանդ... — կամաց ասաց աղջիկը: — Իհարկէ, այդ գուցէ կ'վախսէք իմ ծրագրներիս, բայց ի՞նչ արած... ես, բայց և այնպէս, չէի կալ ողանալ թողնել նորան...

— Երեակայցէք, նաստեա, իրէկ երեկոյեան նոյն իսկ

միտքը եկաւ իմ գլուխը,—կոչեց Փիլիպպիլ: —Ռւրեմն վերջացած է... ես մնում եմ:

—Ասենք, կանանց գործը բոլորովին այլ է, բան ձերը...— նկատեց նաստեան: —Ճատ կարելի է, եթէ ես լինէմ այր մարդ կվարուէի այլ կերպ և ոչ այնպէս, ինչպէս մտածում եմ այժմ. գուցէ թողնէի ամենը և հեռանայի... Սակայն, չեմ կարծում... Ո՞չ:

—Իհարկէ «ոչ»,—վրայ տուեց Փիլիպպը բուռն կերպով, խառնելով մազերը: Աղջիկը բարձրացրեց գլուխը, նայեց նորան և ցածր հոգոց հանեց.

—Բայց և այնպէս, Փիլիպպ Ալէքսանդրովիշ, ես ձեղ խըդճում եմ, —իսուեց նա: Իսկ եթէ դուք յետոյ զղջաք... սկսէք ափսոսալ...

—Ո՞չ, ոչ... ես արդէն ամեն բան մտածել եմ... Կ'գլունեմ գիւղական ուսուցչի տեղ, կտանիմ ինձ հետ հօրս և մենք լաւ կապրենք... Ի՞նչ էք շարժում գլուխներդ... միթէ դա վատ է... Ինչու այդպէս տիսուք էք նայում իմ վրայ: Խընդքեմ, այդպէս մի նայէք... ձշմարիտ որ, նաստեա, ես կլինեմ շան բաղդաւոր, երբ ամենը կարգի ընկնի... Իսկ փողերի և տան վերաբերութեամբ ուզում եմ այսպէս վարուել...

Եւ Փիլիպպը սկսեց մեկնել նաստեային իւր գործունէութեան ծրագիրը: Աղջիկը լուռ, քաջալերութեամբ շարժում էր գուլիսը:

Շուտով սրանից յետոյ Փիլիպպը ունեցաւ քրոջ հետ մի կարճ, բայց լուրջ խօսակցութիւն: Մանելով նորա սենեակը, նա տառաւ քրոջ վերցրած տոմսակները, հաշուեց և դրեց նորա տռաջ սեղանի վրայ: Լիդան, ունքերը կիտելով, երկրայելով, անվտան նայում էր եղօր վրայ: «Ռւրում է բաժանել» անցաւ նորա մտքից, և նա հաստատապէս որոշեց թոյլ շտալ իրան զրկել...

—Այստեղ հինգ հաղար է: Ստացիր, —ասաց Փիլիպպը, գլխով ցոյց տալով տոմսակների վրայ: —Տունը նոյնպէս տալիս եմ քեզ... Գնանք նօտարի մօտ այսօր կամ էգուց, երբ ուզում ես, և ամենը այնտեղ շուտով կարգի կ'ըերենք: Ես ինքս չգիտեմ... նօտարը ինքը կասէ, թէ ինչ պէտք է անել...

Լիդան իսկոյն հանգստացաւ և ընդունեց անհոգ, անտարբեր կերպարանք: Առանց բազկաթոսից բարձրանալու, նա երկարացաւ գէպի դրամատան տոմսերը և սկսեց ինքը ևս կրկին

հաշուել: «Առանց բաժանելու: Աւելի լաւ: Փիլիպպի առաջին խօսքերի վրայ նա, իբր թէ, ուզում էր դժգոհ դէմք ցոյց տալ, բայց, կաշելով դրամատան տոմսերին, ինչպէս իւր անխզելի սեպհականութեան, նա արդէն չէր կարողանում բռնուել ուրախութիւնից, և այրուած, արդէն ոչ դժգոհ դէմքով, սկսեց հաւաքել տոմսակները: Փիլիպպը կանգնած էր լուռ և նայում էր նորա վրայ:

—Այս, ուղիղ է, —խօսեց Լիդան, պինդ սեղմելով ձեռների մէջ տոմսակները: Ինձ կ'պատկանէր եօթ հաղար և տան կէսը... Տունը, ես տեղեկացայ, գնահատութեան նայելով, կարժենայ երեք կամ երեք և կէս հաղար... Դիցուք երեք հաղար... Այն ժամանակ իմ կէսը կլինի հաղար հինգ հարիւր... Ուրեմն ինձ պիտի պատկանէր ութ և կէս հաղար, այնպէս որ այժմ ինձ չի հասնում այլ ես հինգ հարիւր մանէթ... Տանը համար երեք հաղար էլ չեն տալ...

—Այս, բայց ես այլ ես ոչինչ շեմ կարող անել...—ասաց Փիլիպպը յետ դառնալով և պատրաստուելով գուրս գալու: — Չորս հարիւր վաթուն մանէթ ես ինձ առայ մնացի:

—Ցաւս փորը, —թեթէ հոգոց հանելով ասաց Լիդան, և մօտենալով կօմօղին, ոկսեց փողերը պահել արկղի մէջ:

—Լիդա, և դու դեռ խօսում ես... Եւ ինչպէս շես ամշում, —զգուանքով նկատեց նորան երիտասարդը, ամբողջովին բռնկելով:

—Սմենեին էլ ամօթ չէ... Ինչու ես պիտի ամաչեմ, — հանգիստ արտասանեց քոյրը: —Ես ստանում եմ իմը... Ուրիշինը շեմ առնում: Քո յօժար կամքն էր հրաժարուել քո բաժնից... Ես ոչսից ոչինչ իւլած շեմ... Այս փողերը թողել է ինձ տաս: Հայրիկը իրաւունք չունէր ծախսել մեր փողերը... Դու թօղնում ես ինձ քո բաժնը... այդ քո բանն է:

—Դու արդարացի ես, —ասաց Փիլիպպը, շարունակելով նայել քրոջ վրայ, կարծես առաջին անդամն էր տեսնում այդ աղջկան նորա իսկական կերպարանքով:

—Իհարկէ արդարացի եմ: Այդ ամեն մի առողջ զատողութեամբ մարդ կամէ... հաստատեց Լիդան:

Եղայրը լուսութեամբ բռնեց դուռը և բացեց:

—Իսկ դու, Փիլիպպ, այժմ ինչպէս: Ինչո՞վ պիտի մնաս: Ինչո՞վ պիտի երթաս Պետրոսիրդ, կարծես ցաւակցութեամբ հարցրեց նորան քոյրը, ամաչելով իւր անտարբերութիւնից և

հսասիրութիւնից:

—Մի կերպ կապը եմ,—պատասխանեց Փիլիպպը, կանդնելով դռան մէջ:

—2է որ ես անկարող կ'լինեմ քեզ օգնելու... ես կարող եմ մարդու գնալ, ես կունենամ իմ ընտանիքը... —սաայ լիդան գոցելով արկղիկը: Կողպէքը զնդաց, և արկղիկը թաքնուեց կօմօդի մէջ:

—2է որ ես, Լիդոչկա, մուրացկանութեամբ շրջելու չեմ պատրաստում,—ծաղրելով նկատեց Փիլիպպը:

—Յամենայն դէպս ես նախազգուշացրի քեզ... —սառն կերպով խօսեց քոյրը: —Խոկ ինչպէս կլինի հայրիկը: Նորա համար հարկաւոր կ'լինի մարդ վարձել... բժիշկ է պէտք... քիչ ծախս կլինի ինչ է:

—Մի վախենար, նա քո վրայ չի մնալ:

Եւ դուռը փակուեց Փիլիպպի յետեկից:

—Աղնիւ ասպետ,—ասաց ինքն իրան օրիորդը, գոցելով կօմօդը: —Վաղը առաւտօեան և եթ փողերը զբամատուն...

Խոկ նոյն ժամանակ ծերուկ ծատրովը թոյլ, անկարող, ջարդուած մարմնով և աւելի ես ջարդուած հոգուով տանջուելով հալում էր օրէցօր: Նա չէր կարողանում ոչնչով վարապել, չէր կարողանում մինչև անդամ երկար խօսել, և մտածելու համար ժամանակ նորան շատ էր, մինչև անդամ խիստ շատ... Սրաի կսկիծով և ցաւով մտածում էր նա աղջկայ մասին, և նորից նորա առաջ պատկերանում էր այն զարհուրելի տեսարանը, որ այնպէս աղել էր նորա սրաի վրայ...

—2է որ նա այստեղ չէ, —հանգստացնում էր նորան Փիլիպպը, լսելով հիւանդի աղաղակը, և մտածում էր, որ ծերուկին պաշարում են տեսիլները:

—Այն, այն, նա չկայ... —փսխում էր քամբաղը, հաղիւ շարժելով իւր գունատ շրթունքները:

Ուրեմն Լիդան կեղծում էր, խարում էր նորան... ծերուկը շատ էր ցանկանում պահել յիշողութեան մէջ մաքուր, անվնաս գոնէ մի փոքրիկ անկիւն իւր աղջկայ համար և աշխատում էր համոզել ինքն իրան, որ մանկութեան ժամանակ Լիդան դարձեալ ճշմարիտ, առանց սիրում էր նորան, առանց որ և է ստոր, փառասիրական միտումների: Բայց ինչ ժամանակ կից նա սկսեց խարել նորան, որ ժամանակից սկսած նորս փառաքանքը, նորա սիրային հայեացքները և գրկախառնումները կեղծ

դարձան, որ ժամանակ նա սկսեց կեղծաւորել և դիմակ կրել: Դժուար է ասել, ցոյց տալ այդ ժամանակը...

Եւ նախապաշարուած, հիասթափուած ծերունուն սկսեց թուալ, որ նա, դեռ երեխայ, դեռ մանուկ հասակից, վարուելով նորան, երեսպաշտութիւն էր անում և, կամենալով գրաւել նորան, դուրս կորպել նորանից խաղալիք, շաբարահաց կամ բաղցրաւենիք, խարում էր նորան և՝ խօսրով, և՝ հայեացքով, և՝ իւր թխլիկ, վարդագոյն շրթունքների համբոյրներով... Այս մանր և անխափան մտքերն ու յիշողութիւնները տանջում էին ծերուկին աւելի, քան մարմնական ցաւը:

Մի մի ժամանակ ծերուկի միտն էին գալիս իւր գիւտերը, իւր անքաղդ ջրասուզուող նաւակը անվտանգ վագոնը: Նա յիշում է, ինչպէս իւր աղարակում սարքել էր մի փոքրիկ թումբ, զբել էր վրան փայտեր և ձգել երկաթէ գծեր, և ինչպէս մէկ անգամ նորա վագոնը գտարս թուալ թումբից, կպաւ ինչ որ բանի և ճարեց... Այդ կաղապալները, Պետերբուրգ գնալ գալը, չարչաբանքները... Այդ բոլորը շատ փող արժեցին: Իզուր էին նորա հոգսերը, և ժամանակը, և աշխատանքը և փողերը (նորա որդոց փողերը) ձգուած են կրակը:

Գիւտեր անելու ցանկութիւնը, ինչպէս և ուրիշ իւրաքանչիւր աւելի ստոր, բայց և նոյնքան կորստաբեր, ինչպէս օրինակ, արքեցողութիւնը, թղթախաղը, փող վաստակելու ցանկութիւնը, այլում էր նորան դժոխալին կրակով, անիրազործելի յօյսերով կուրացնում էր նորան, զժուեցնում էր, զբաւում էր աւելի ու աւելի, մինչև որ հասցը նորան խաւարի և յուսահատութեան: Վաղելով անուշների յետնից, ինչպէս խելագար, կիսակուշտ և կիսագուն, ինքն իրան հետ բարձրածայն խօսելով, ինքն իրան խարելով և ոյժ չունենալով դադարել, նա ծախսեց այդպիսով որդոց կարողութեան կէսը, որ թողել էր նորան պահպանութեան հանգուցեալ զոքանչը: Սաբսափելի էր նորա արթիսնալը... Նա մեղաւոր է և պատժուած: Այս, մեղաւոր, բայց արգեօք վայել էր Լիդային մատուցանել նորան գառնութեան բաժակը:

Նա արդէն վաղուց ծածուկ անտանելի կերպով տանջում էր այն օրուայ մտքով, երբ վերջապէս ժամանակը կ'համանի հաշիւ տալու որդոց և յանձնել ժառանգներին իրան պահպանութեան տրուած կարողութիւնը: Նա չէր կարողանում առանց սարսուի մտածել՝ այն ժամի մասին, երբ պէտք կլինի երես առ երես կանգնել ֆիլիպպի հետ և ասել նորան, «Ես վատնեցի

քո փողերը։ Հասկանալի է, որ ծերուկը, իւր թուլակամութեան պատճառով, աշխատում էր ըստ կարեւոյն հեռացնել օրհասական բացադրութեան օրը։ Եւ նա յոյս էր գնում այն բանի վրայ, որ Լիդային, մինչև նորա մարդու գնալը, պէտք չի գալ իւր բաժինը, իսկ Փիլիպպը, կարեւի է, մտածում էր նա, կ'ծառայէ հայրենի քաղաքում և բոլոր փողերը նորան ևս մէկ անդամից պէտք չեն գալ..»

Երբ պարզուեց, որ Փիլիպպը պատրաստում է գնալ Պետերբուրգ և, երեւ կխօսէր ժամանգութեան մասին, այն ժամանակ ծերուկը ինքը գնաց գէպքերին ընդառաջ, որովհետև գաղանիքը սաստիկ տանջում էր նորան, և նա ուրախ կլինէր ազատուել նրանից, ինչպէս մի ժանր և ոյժից վեր բեռից։ Ահա ինչու նա վերջին շաբաթները ինքն իրան չէր նմանում, այնքան մտտղրադ ու տարօրինակ էր։ Նա տատանում էր, մէկ որոշելով բանալ որդոց առաջ իւր վատնելու հանգամանքը, մէկ յետ կանգնելով իւր դիտաւորութիւնից։ Եւ ծանր, շատ ծանր էր նորան այն առաւօտ կոչելու որդոց իւր սենեակը, որպէսզի նորա դատեն նորան ինչպէս յանցաւորի...

Հատ սարսափներ պատճառեց նորան շփոթուած երեակայութիւնը, բայց այն, ինչ որ կատարուեց, երեակայութիւնը նորան չէր պատկերացնում... Նա հաստատ համոզուած էր, որ Լիդան կ'լզնայ և կ'պաշտպանէ նորան։ Հատրովը երբեմն կարդացել էր Զեկոսիքը, Սօֆոկլէս և ուրիշ շատ լաւ գրքեր, և նա չէր մոռացել, կարծես լուսաւոր պսակներով շրջապատուած, Մնտիգոնէի և Կորդելիայի հրաշալի, սիլուն պատկերները։ Փիլիպպից նա սպասում էր խիստ մեղադրական վճիռ։ Ծերուկը սովորել էր նայել որդու վրայ, ինչպէս մի սառն, կոշտ րնաւորութեան վրայ, որ օժտուած է լինում ամենավատ ձգտումներով։ Դուր ան ից չի կարելի խնայողութիւն սպասել։ Ոչ, սա չի ողորմիլ... Զգացմունքների նրբութիւնը նորա համար չէ։ Նա ոչինչ չի հասկանալ... «Հաստակաշի կենդանի է»։ Այսպէս մէկ անդամ չէր մտածել ծերուկը որդու հետ ընդհարումներից յետոյ։

Բայց կեանքի մէջ միշտ այնպէս չի լինում, ինչպէս գրում են զրքերում։ Մէկ քրանսիացի զրսդ շատ ուղիղ է նկատել, որ «կեանքը աւելի յաճախ նմանում է բոմանի, քան թէ բոմանը կեանքի»... Փիլիպպը խղճաց ծերուկին, նա պահպանում է նորան, ինչպէս դայեակ, իսկ Լիդան, նորա սիրելին, նորա

Անտիգոնէն հեռացաւ նորանից, ինչպէս քորոտից... Նա արդէն ուրախ է, որ Լիդան չի մտնում այստեղ, այս կիսալուաւար, քաշած վարագոյրնելով, ծանր, դեղերի հոտի հետ խառն մթնոլորդով, կարծես ցաւերով և տանջանքներով լրցուած սենեակը...

Հատրովների տան այսպիսի տիսուր ժամանակում, միայն Լիդան էր անցկացնում բաղդաւոր բոպէներ։ Բաղդը ժպտում էր նորան։ Երբ նա արդէն մտածում էր, որ անորա փողերը լալիս են», յանկարծ, բոլորովին անսպասելի տեղից, նորան վերագարձուեցաւ համարեա ամբողջ նորա ժառանգութեան բաժինը։ Վերջապէս, նորա վաղուցուայ երկրսպագու ակցիզի աստիճանաւորը, ծառայութեան մէջ մեծ յօյսեր տուող մի երիտասարդ, առաջարկութիւն արաւ նորան, և Լիդան, շատիպելով անորոշութիւնից երկար տանջել նորան, տուեց իւր յօժարութիւնը։ Պայմանաւորուեցան պսակը կատարել Վերափոխման տօնից յետոյ։

Իւր գործերի այսպիսի յաջող ընթացքի պատճառով, Լիդան մինչև անգամ կարծես բարի դարձաւ և մէկ անգամ զգացուած գնաց հօր մօտ, որպէս դի մի քիչ նստի և 'ի դէպ յայտնէ և իւր նշանագրութեան մասին։ Բայց հէնց որ նա երևեց դռան մէջ, ծերուկը ցնցուեց։

— Ի՞նչ է, ինչպէս է, — շուկով հարցըց Լիդան, դառնալով եղբորը։

— Փիլիպպ, Փիլիպպ, — թոյլ ձայնով շշնջաց հիւանդը, գլուխը անհանգստութեամբ պտտելով բարձի վրայ։ — Ո՛չ, ո՛չ, հարկաւոր չէ։ Մի թողնիր նորան, Փիլիպպ։

Անկարազըլի սարսափով նայում էր ծերուկը մատաղահաս աղջկայ գերեցիկ և հրաշալի կերպարանքին, որ նկարուել էր բաց գուան մութ ֆոնի վրայ։ Փիլիպպը հաստատ քայլերով զնաց բրոջ առաջ։

— Լիդա, մի մանիր, խնդրեմ։ Միթէ չես տեսնում, ինչպէս յուրում է նա։ Զինի թէ նորից կրկնուի հարուածը.., չեռացիր, — շշնջաց նա։

Երբ դուռը փակուեց Լիդայի յետեից, ծերուկը կոչեց Փիլիպպին իւր մօտ և, բանելով նորա ծեռքը, ասաց։

— Ես վախենում եմ նորանից... վախենում եմ... Մի թողնիր ինձ նորա հետ... Նա դարձեալ, դարձեալ կնայէ իմ վրայ...»

Նորան իսկոյն պատկերացաւ, աչքերի ինչպիսի սարսափելի արտայայտութեամբ նայում էր նորա վրայ աղջիկը, այն նորա համար յաւիտեան յիշելի օրը:

Ծերուկը ամբողջովին դողում էր, ինչպէս տեսդի մէջ, և նորա լայն բացուած երկոտ աչքերը միշտ դառնում էին դէպի դուռը:

— Փակի՞ր, փակի՞ր դուռը, — փնթ փնթաց նա:

Վերջապէս Գիլիպպին յաջողուեց մի կերպ հանգստացնել հօրը...

Լիդան, սաստիկ վշտացած կամ, ճիշտն ասած, զայրացած, վերադարձաւ իւր սենեակը: Նստած բազկաթուի մէջ, նա ուժգնութեամբ շարժում էր ոտը և կրծում շրթունքները՝ այն վատ սովորութիւնը, որ մնացել էր նորա մէջ մանկութիւնից, և ճիշտ նշան, որ Լիդայի քէֆը տեղը չէ: Նորան անախորժ և ամօթ էր, որ հայրը քշեց նորան... Նա գնացել էր հօր մօտ ամենալաւ գիտաւորութիւններով և յանկարծ... «Նորա խորշում են ինձանից, կարծես մի չարագործ լինեմ ես» — մտածում էր Լիդան:

Երբ հայրը յայտնեց, որ վատնել է նոցա կարողութեան կէսը, Լիդան, հասկանալի է, շփոթուեց: Եօթ հազարի վոխանակ ստանալ երեքից պակաս, մեծ տարբերութիւն կայ... Փողերի ծախսուելու լուրը շշկեցրեց նորան..., հհարկէ, Լիդան գիտէր, որ ինքը գեղեցիկ է (այդ մասին իւրաքանչիւր օր մի քանի անդամ ասում էր նորան հայելին), նա գիտէր, որ առանց մեծ օժիտի ևս կարող է մարդու գնալ, բայց և այնպէս հարուստ օրիորդին աւելի հեշտ է գտնել լաւ փեսացու, քան աղքատին: Նա շկարողացաւ գիմանալ փոթորկի անսպասելի թռիշքի տակ և մի բան աւելի դուրս թացրեց բերնից... Լիդան մինչեւ անդամ ինքն էլ պարզ չի յիշում, ինչպէս դուրս թռան նորա բերանից այդ վիրաւորական խօսքերը... Ճիշտ որ սարսափելի խօսքեր: Խղուր չէր, որ նոքա ձգեցին հօրը մահիճ: Բայց չէ որ նա դարձի եկաւ (երբ նորա գործերը լաւ կարգի ընկան), չէ որ նա գնում էր հօր մօտ, որպէս զի հաշտուի նորա հետ և խնդրէ մոռանալ ամեն բան...

«Մոռանալ ամեն բան»... Նորա յիմար գլուխը չէր կարողանում երևակայել, որ կեանքի մէջ լինում են այնպիսի վարմունքներ, ասում են այնպիսի խօսքեր, որոնք մոռանալ

անկարելի է և որոնց մասին յիշողութիւնից մարդ չի ազատում ոչ առաջ, քան դադաղում պառկելը: Իւր նամբութեամբ և թեթևամտութեամբ, Լիդան չէր կարողանում հասկանալ այն, թէ ինչպիսի կոկիծ և դառնութիւն խմցրեց նա խեղճ ծերուկին այն անմոռանալի օրը... Նա կարծում էր, որ հայրը վիրաւուել է միայն այն բանից, որ Լիդան տաքացած երես զարկեց նորան փողերի վատնելը, բայց սահելով միայն երեսից, նա չէր նայում խորը և դրա համար էլ չէր տեսնում իւր հրէշային բարոյական յանցանքի ամբողջ էութիւնը:

Իհարկէ, շփոթեցուցիչ յայտնութեան տպաւորութեան տակ, բարկութեան և յուսահատութան բոպէին, բարկութիւնից և վշտից նա, ճիշտ որ, արտասանեց խիստ, կոպիտ խօսքեր և վիլաւորեց ծերուկին: Սյապէս էր մաածում Լիդան... Բայց նա գլխի չէր ընկնում, կամ աւելի լաւ է ասել, աշխատում էր չմտածել, որ ծերուկը ոչ թէ միայն վիրաւուած էր նորանից, այլ և բարոյապէս սպանուած, սպանուած տեղն ու տեղը այն մտքից, որ նա շարունակ քսան տարի խարւում էր իւր սիրելուց իւր «գանձի» մէջ, իւր ամենամօտ և թանկապին մարդու մէջ, որին նա տուել էր իւր բոլոր փափարշանքը, բալոր իւր փէրը և ծնողական սրտի չերմութիւնը...

Ի՞նչ կայ որ: Դիցուք նա սիրել է աղջկան, միշտ բարի է եղել դէպի նա, բայց աղջիկն էլ իո փոխադաճն է հատուցել իւր փաղաքանիքներով: Ի՞նչ պէտք էր անիել, եթէ նա շկարուզացաւ մուշանալ իրան և խոնարհարար ինքն իրան զոհ բերել հօր անմիտ, այնպէս թանկ արժած քմահաճ ձեռնարկութիւններին: Երկի նորա բոլոր այդ նաւակները, վագոնները ոչ որին սկարագան չէին... Սյապէս էր պաշտպանում Լիդան ինքն իւր առաջ: Սակայն, թէ Լիդան և արդարանում էր բաւական պէրճախօս, այնուամենայնիւ նա այնքան էլ խուլ չէր, որ չլսէր այն տիսուր վէպի ձայնը, որ աղդու կերպով պատմում էր նորան հիւանդ, անբաղդ ծերուկի և նորա անխիղճ, ապերախտ աղջկայ դէպի նա ունեցած վարմունքի մուսին...

Եւ նա բանիցս ցանկանում էր զնալ հօր մօտ, բայց ամեն նորան տեսնելիս ծերուկը այնպէս ալէկոծւում և այնպէս գանգատաւոր կերպով խնդրում էր Փիլիպպին չթողնել նորան, որ Լիդան, վախենալով կաթուածի կրկնուելուց, պարտական էր լինում, շրթունքները ուռցնելով, վայրկենապէս աներևոյթանալ

սենեակից: Օրիորդը, տեսնելով հօր այդպիսի վամունքը, աւելի և աւելի էր գրգռում...

«Ես մեղաւոր եմ միայն նրանով, որ թոյլ չտուի ինձ զրկել, ինչպէս յիմարի, —ասում էր նա ինքն իրան: —Թող ուրեմն նոքա բարկանան... Եւ չի կարելի, ճիշտ որ, լրջօպէն մտածել, որ հայրը հիւանդացել է նորա պատճառով: Լիդան յիշում է, ինչպէս մի անգամ մէկը ասաց, որ նորա հօր պարանցը խիստ կարձ է, որ նա շատարիւն է, որ նորան պէտք է զգոյշ լինել, մէկ խօսքով, ասում էին, որ նա «ընտթեամբ» ընդունակ է կաթուածի: Նա շատ լաւ է յիշում այդ խօսակցութիւնը... Եւ լիդան սկսեց հանգստանալ...

Ինքնասէր, թեթեամիտ, մաքի և զգացմունքի վերայից սահող մարդիկ, ինչպէս թիթեռնիկներ, որ հաւասարապէս թռչկոտում են և՝ ազբի կոյաի, և՝ հրաշալի, սիրուն վարդերի վրայ, կարողանում են լուցնել իրանց մէջ խղճի կշամբանքը, գոնէ գանում են միջոց չլսելու այդ կշամբանքների ձայնին...

Փայլուն շորի վրայ թարմ բիծն առաջին նուագ անախորժ կերպով է աշքի ընկնում, բայց աշքերը կարելի է այնպէս ընտելացնել այդ բծին, որ նրանից առաջ եկած տպաւորութիւնը աւելի և աւելի կսկսի մարել և նոյն ու բիծը, որ իրականապէս չի էլ փոխուել, կսկսի գունատուել և ջնջուել:

ՎIII

Սենեակում լուսթիւն է և կիսախաւար...

Փիլիպպը կանգնած է հիւանդի մօտ, արմաւնկներով մահճակալին յմնուած: Ծերուկը կարծես մի բան յիշում է և, աշքերը լայն բացած, հարցական երկմատութեամբ նայում է որդու վրայ: Այսօր նա ծանր է և զժուար է խօսում...

— Ի՞նչ ես ուզում, —հարցնում է Փիլիպպը զգալով նորա անհանգիստ հայեացքը:

— Ժամանակ է պատրաստուելու... ժամ է քեզ գնալու...

Դու ի՞նչ... — Ծոթովում է ծերուկը:

— Ոչ, ժամանակը չէ, - պատասխանում է երիտասարդը:

— Ի՞նչպէս... Խոկ որ թիւն է այսօր...

— Պոստոսի ութը:

— Ժամանակ է, ժամանակ քեզ... — Փինթփինթում է ծերուկը, անհանգստութեամբ գլուխը շարժելով բարձի վրայ: — Կուշանաս...

— Ես, հայրիկ, ոչ մի տեղ գնալու չեմ, — ասում է նորան Փիլիպպը:

— Ա-ա... Խոկ Պետերբուրգ, — դժառարութեամբ արտասահում է հիւանդը:

— Ես կմնամ քեզ հետ:

— Ի՞նչպէս... Ինչպէս այդ... — ասում է ծերուկը: — Ոչ, զու գնա... Առանց քեզ կթաղեն...

— Քեզ թաղելու դեռ ևս չեմ պատրաստում, ուստի այդ մասին զու մի անհանգստանար... Խոկ ես, ահա, ուզում եմ զիւզական ուսուցչի պաշաօն ստանձնել, և մենք միասին կապրենք: Դու զիւզում աւելի շուտ կուղղուես, և ընդհանրապէս զիւզում քեզ լաւ կլինի... — վճռական կերպով ասաց Փիլիպպը, ինչպէս մի մարդ, որ զգում է, թէ ինքն է տէրը, ինքն է գործում զլիսաւը դեր կատարողը:

Ծերուկը ուզում էր այլ ես մի բան ասել, բայց չկարողացու, և լուռ, չետակի նայում էր որդու վրայ այնպիսի կերպարանքով, ինչպէս նայում է մի մարդ, որ արթնանում է իրան մի տնօանօթ վայրում և տիսնում է իւր առաջ մի նոր զէմք: Եւ այդ բապէին կարծես արեգակի պարզ ճառագայթը թափանձում էր նորան շրջապատող իւաւարի մէջ: Ծերուկը նայելով որդու վրայ՝ հոգուով կենդանանում էր:

Փիլիպպը հրաժարում է իւր վաղուցուայ ծրագրներից, յիտ է կենում իւր զիւտաւորութիւնից և մնում է նորա հետ՝ նորա համար...

Այս միթթարական զիւտակցութեան հետ ծերուկը զգաց կեանքի հոսանք, զգաց, որ կարծես թարմ և նոր ոյժեր լցում են նորա թոյլ, ուժաթափ մարմնի մէջ: Նորա աշքերը լցուեցան արտասուքով... Մինչեւ այժմ նա չէր ճանաչում որդուն: Լիդային չնորհելով իւր բոլոր փայփայանքն ու սէրը, նա ոչ մի անգամ Փիլիպպին չէր փայփայել: Իւր սառնութեամբ և զուգուցներով նա ծունաւորել էր որդու զոյտթիւնը, իհարկէ, մանր, գատարկ բաների համար, բայց աստիճանարար, օրէցօր, իւրաքանչիւր քայլին..

Ծերուկը խօսել չէր կարողնում, նա լուռ նշան արա որդուն: Որդին մօտեցաւ նորան և կուցաւ, չհասկանալով բանի էութիւնը... Ծերուկը զժուարութեամբ բարձրացրեց իւր թոյլ, զաղղոջուն ձեռքը և զրեց որդու զլիսին:

ծերուկը շփամ էր որդու զլուիք, իսկ գունատ, կնճռոտ
այտերի վլայից հանդարտ հոսում էր արտասուրը...

Փիլիպպը սկսեց աշխատել զիւղական ուսուցչի պաշտօն
գտնելու համար, բայց նորա աշխատանքը 'ի թերե ելաւ: Այն
ժամանակ նա շուտով ուրիշ բան վճռեց անել: Նա դեռ վաղուց
ցանկութիւն ունէր զիւղացի դառնալ, ապրել զիւղում... «Այդ-
պէս էլ ուրեմն պէտք է լինի»:

Քաղաքից երեսուն վերստ հեռու, Բամենիէ զիւղում նա
ունէր ծանօթ զիւղացիներ: Նա կվարձէ այնտեղ մի խրճիթ,
կով կպահէ, ձի, ոչխար, հաւ, կվարձէ զիւղացիներից մի կառը
հող և կսկսէ ինքը մշակել այդ հողը: Երբեք օգնութեան նե-
ցուկ կրանայ և մի դարբնոց, իսկ ձմեռը հիւսնութիւն կանէ:
Լաւ է ինքը լինի աէք, բան թէ մաշէ զիւանատան դոները
և խեղուի նրա փոշու մէջ:

Ծերուկը ամին բանի յօժար էր: Առաջ նա համակար-
ծիք չէր լինում որդու հետ, իսկ այժմ յաճախ, լսելով Փի-
լիպպին, սրտի խորքում սկսում էր երկմահել. նորմ կողմն է
արդեօք ճշմարտութիւնը, շէր սխալում արդեօք նա... «Եթէ
զիւղ է, ուրեմն զիւղ: Զատ լաւ է, —ասում էր ինքն իրան
ծերուկը: Նա ծանօթ է այնտեղի բահանայի հետ... Լաւ մարդ
է այդ ձկնորս բահանան... ընկեր կունենայ... Բամենիան լաւ
գետ է... ճիշտ է, լայն չէ, բայց ձկնառատ է»...

Սսելն ու կատարելը մէկ եղաւ:

Գալով մնաս բարեի վարդագոյն տունը, Փիլիպպը նիկի-
տին գտաւ արհեստանոցում: Նա յայտնեց բարեկամին, որ
ուզում է «զիւղացիութիւն» անել, և վերջինս, չկարուելով իւր
քերիչից, ասաց.

—Ե՞ն, ինչ կայ... վաս չէ...

Եւ մաղթեց Փիլիպպին ամեն տեսակ յաջողութիւն:

Յետոյ Փիլիպպը անցաւ ազարակ նաստեայի մօտ: Աղջիկը
դիրք էր կարգում: Խօսեցին այլ և այլ բաների մասին...

—Նաստեա, զիտէք ինչ եմ ուզում ասել ձեզ, —յանկարծ,
կարծես մի քիչ շփոթուելով, խօսեց Փիլիպպը:

—Իսկ ինչ պիտի ասէք դուք ինձ, —կատակով սրտասա-
նեց աղջիկը:

—Ամուսնութիւնը, ինչ որ էլ ասեն, կաշկանդում է մար-

դուն, խանգարում... գոնէ մի-մի ժամանակ, —ասաց նա: —Ես
գոնէ չէի կարող մտածել շուտով ամուսնանալու մասին... Ես
շատ եմ մտածել այդ մասին... Իհարկէ, ես դեռ ջահիլ եմ...
բայց զլիաւորը, գիտէք, երբ ձեռքսւմ գործ կայ, այն ժա-
մանակ լաւ է մինակ լինել...

—Ինչո՞ւ համար էր խօսում դուք այդ մասին: Ամուսնա-
ցնում են ձեզ, ինչ է, —ծիծաղելով նկատեց աղջիկը, զարմա-
ցած նայելով նորա վրայ:

—Ոչ, չեն ամուսնացնում... այդ չէ իմ ասելս... գործը,
տեսնում էք, նրանումն է...

Փիլիպպը դժուարացաւ, աւելի ևս շփոթուեց, կարմրեց
և յանկարծ, բռունցքը սեղմելով, ուժգնութեամբ խփեց սե-
ղանին:

—Եթէ ես երբ և իցէ մտածեմ ամուսնանալ, նաստեա...
մյ, աղնիւ խօսք եմ տալիս, ես կամուսնանամ ձեզ վրայ, —
շատապով խօսեց Փիլիպպը...

—Այ քեզ բան, —մեծ զարմանքով արտասանեց նաստեան,
նայելով իւր խօսակցի վրայ, և ուրախ ծիծաղեց: —Տէ՛ր Աս-
տուած: Դիռ ո՞րքան երեխայ էք, Փիլիպպ Ալէքսանդրավիչ:

—Թոյլ տուէք իմանալ... ինչ մի այդպիսի երեխայական
բան էք գտնում իմ մէջ, —հազարով և ունկերը կիտելով հար-
ցրեց նորան Փիլիպպը, մի քիչ վիրաւորուած:

—Ինչպէս շասեմ: Համարեա պատրաստում էր ինձ հետ
ամուսնանալու, իսկ ինքներդ ձեզ դեռ հաշիւ չէք տուել. ար-
դեօք ես ձեզ կդամ: Դուք ո՞րտեղից գիտէք, որ ես կհամաձայ-
նեմ...

Այժմ էլ Փիլիպպը սկսաւ զարմանալ:

—Այսինքն... ինչպէս... ինչո՞ւ դուք չէիք համաձայնուիլ, —
հարցրեց նա շփոթուելով:

Ճնորհիւ աղջկայ հետ ունեցած բարեկամական լաւ յա-
րաբերութիւնների, Փիլիպպին թւում էր, որ նորա կողմից մեր-
ժումն կարող չէ լինել...

—Էնց նրա համար, որ ես ձեզ չէի կամենալ կաշկան-
դիլ... —խօսեց նաստեան, վափկութեամբ նայելով երիտասար-
դին:

—Ա-ա-ա, միայն զրմ համար... —երկարացրեց նա, հար-
ցական կերպով նայելով նաստեային:

—Եւ առհասարակ այս բոլորը շատ տարօրինակ դուրս

եկաւ...—նկատեց աղջիկը:—Մենք բարեկամ էինք, բայց մինչեւ այժմ սիրոյ մասին ոչինչ չենք խօսել...

—Ի՞նչ հարկաւորութիւն կայ դրա վրայ խօսել: Միթէ դա անհրաժեշտ է,—շնչաց Փիլիպպը, կարմրելով մինչեւ մազնը արմատը:—2է որ այդ միայն զբքերի մէջ են խղմղում զանազան յիմարութիւններ... Խոկ ես ինչո՞ւ պիտի խօսեմ: 2է որ դուք գիտէք, որ ես ձեզ յարգում եմ եմ ե... սիրում: Ես կարծում էի, որ դուք նոյնպէս... ինձ գոնէ այդպէս էք թւում... Սաացէք, նաստեա (Փիլիպպը բարձրացրեց զլուխը և դժուարութեամբ նայեց աղջկայ վրայ), ասացէք: Դուք խօմ սիրում էք ինձ: Ճիշտ է:

—Ճիշտ է,—շատ ցած շշուկով արտասանեց նաստեան:

—Այդպէս ուրեմն... այլ ես ինչո՞ւ խօսել,—խորը հոգսց հանելով, ասաց Փիլիպպը:

—Խոկ յետոյ էլի մի բան կայ... Դուք դեռ շատ ջահիլ էք, Փիլիպպ Ալէքսանդրովիչ... Դուք ինքներդ էք ասում,—ասաց նաստեան:—Ես շատ մեծ եմ ձեզանից.., հինգ տարով մեծ եմ... Պառան...

—Դուք—պառան, —ծաղրելով նկատեց Փիլիպպը, սիրով նայելով նորա վրայ:—Գէհ, բաւ է...

Աղջիկը ցած խոնարհուեց զրքի վրայ:

—Բայց և այնպէս ինչ որ ասացի, ասացի,—խօսեց երիտասարդը:—Խոկ այժմ մնաք բարով, նաստեա:

Աղջիկը դեռ չէք բարձրացել նստարանից, երբ Փիլիպպը արագութեամբ խոնարհուեց և համբուրեց նորան:

—Կտեսնուենք: Դուք իհարկէ պիտի զաք բաղաք,—հարցրեց նաստեան, ճանապարհ դնելով նորան մինչեւ դուռը:

—Իհարկէ, —պատասխանեց Փիլիպպը:—Խոկ ամառը դուք մեզ մօտ՝ խոտ հնձելու...:

—Դնաք բարով, Փիլիպպ Ալէքսանդրովիչ: Մեղ շմոռանաք, —կոչեց աղջիկը նորա յետից:

«Սակայն, ի՞նչպէս մենք ընտելացել էինք նորան: Մեզ տխուր կ'լինի առանց նորան»—ասում էք ինքն իլան նաստեան, ձեռքը կրծքին սեղմելով և լսելով սրտի ուժեղ բարախումը... Նոցա առանց նորան տխուր կ'լինի աշնանային և ձմբան երկար գիշերներին, և աշնանային փոթողիկլի ու ձմբան պարզ գիշերուայ ծանր ժամերին յաճախ յիշուում էք Փիլիպպը վարդագոյն տան մէջ... և ասում էին իրանք իրանց. «Ո՞րաեղ է

նա այժմ, ցանկալին: Ինչպէս է ապրում նա իւր նոր բնակագայրում»...

Հուտով վերափոխման օրից յետոյ, Լիդայի պսակից մի քիչ տուաջ, ծերուկը որդու հետ հետացաւ գիւղ, թողնելով տունը և բոլորը, ինչ որ կար նրա մէջ, աղջկայ կամքին: Դնալուց առաջ ծերուկ զատրովը մնաս բարով արեց Լիզային: Սաբավելի էք այդ հրաժեշտը: Հայրը աղջկայ հետ պատահեցան, ինչպէս օտարները: Աղջիկը համբուրեց հօր ձեռքը, վերջինս չըթունք ներով կպատ նորա ճակատին:

—Դնաս բարով, հայրիկ:

—Մնաս բարով, Լիդա: Ապրիր, Տէր ընդ քեզ...

Եւ որանով էլ վերջացաւ..., Խոկ ծերուկը քսան տարի շարունակ ամեն օր առաւօտ և իրիկուն սեղմում էք այդ աղջկան իւր կմծքին, օրհնում և համբուրում էք նորան... Զատարվների տան մէջ կատարուած վիրջին դէպքերն ծանօթ մարդուն հօր և գտաեք այս հրաժեշտի պատկերը աւելի սարսափելի կթուար, քան թէ շատ հնարավի ողբերգութիւններ թագաւոր և իշխանուհի գործող անձինքով: Զարժումներ, խօսքեր, «լսադ», էֆեկտնելի իմաստով, քիչ կար այս տեսաբանում, բայց նրա միտքը շատ սղբերգական էք...

Մէկ ոտը քարշ տալով և ձեռնափայտով թրխկացնելով, ծերուկը դուրս եկաւ անից: Նա խօսյն երեսը դարձրեց Լիդայից, և վերջինս մինչեւ անզամ չնկատեց, որ նորա աշքերում արտասուր երեց...

Սեպտեմբերի վերջերին Փիլիպպին սէտք եղաւ գործով գալ քաղաք:

Երբոր նա մընաշաղին մօաենում էք հայրենի տանը, նորա սրտի վրայ մի ծանրութիւն եկաւ նորից, կարծես նա տեսնում էք իւր հին, թանկագին բարեկամին, նորա համար դէպի վատը փոխուած պարագաների մէջ:

Սեպտեմբերեան այդ օրը անախորժ էք: Մադում էք մանր անձրե, ծառերի գեղին տերեները զատրովի պարափում թափում էին ցած և քամին տխուր աղմուկով օրօրում էք նոցա կիսամերկ կատարները: Գորշ ամպերը ցած սլանում էին երկնքի վրայ: Հեռաստանը մթնում էք...

Նախասենեակում ձգելով վերաբիուն, Փիլիպպը մտաւ պայծառ լուսաւորուած դահլիճը և ակամայ տրորեց աշքերը:

— Զար-Սատանայ, — դուքս թռաւ նորա բերնից:

Լիդան, սիրուն, սպիտակ, վարդագոյն զարդարանքով հագուստ հագած, շատ սիրուն սանրուած, կանգնած էր լապտերների փայլով լուսաւորուած դատարկ դահլիճի մէջ տեղը:

Փիլիպպը իսկոյն նկատեց, որ նոցա հին բնակարանում տեղաւորուել են «նոր տատուածներ» և եղել զանազան փոփոխութիւններ: Դահլիճում լոյս են ընկել բաց գոյնի պաստառներ ոսկէ շրջազարդերով, նոր, «սիրուն» կահ կարասիք և, փոխանակ պարզ հերանիումների, յասմիկնենի և չինական վարդենինների, ինչ որ խոշոր բոյսեր տարածում էին հեռուն իրանց մութ-կանաչ, խոշոր, լայն թերթերը: Ամեն բան մարուր է, սինչպէս չոլանդիայում (նկատեց ինքն իրան Փիլիպպը ծիծաղելով), յատակը փայլում էր ինչպէս ապակի...

— Այսօր ինչ տօն է քեզ մօտ, — հարցը քիլիպպը, բաշեելով քրոջը:

— Ոչ մի տօն չկայ, այսօր՝ մեզ մօտ հիւրեր պիտի լինեն, — պատասխանեց նորան Լիդան, խէժ-խէժ նայելով նորա ջիթ, հնամաշ շապիկին և երկար, կեղտոտ կօշիկներին:

Այսօր Լիդայի մօտ առաջին երեկոն է...

— Այստեղ, հայրիկի սենեակում մնացել է զրքերի մի կապոց... Տնտը, խնդրեմ, — ասաց Փիլիպպը, խիստ հանգիստ կերպով նստելով նոր, փայլոն թախտի վրայ: — Օ՛ֆ, յոզնեցայ... Ցետոյ... Ես եկայ իմանալու. նամակ չի ստացուել իմ անունով:

— Կայ երկու նամակ... Ես այժմ կրերեմ... — ասաց Լիդան, շտապելով ապատուել իւր անսպասելի, կեղտոտ այցելուից:

— Դրբերն էլ, խնդրեմ: Մի մոռանար... — կոչեց Փիլիպպը:

Մի բանի ըստեից Լիդան վերադարձաւ նամակները ձեռքին (զրքերը թողել էր նախասենակում), և անկեղծ սարսափով տեսաւ, որ Փիլիպպը արդէն ծխախտը շինած ծիում է, մտածկոտութեամբ թափելով մոխիրը յատակի վրայ «իւր յիմար սովորութեամբ»:

— Ելդպէս, լաւ... — ասաց նա, առնելով քրոջից նամակները և ուշադրութեամբ զննելով ծրաբների վրայ փոստի կնիքները:

Լիդան նստեց նորա կողքին թախտի վրայ, զնելով մօտի սեղանի վրայ մոխաման և աշխատելով գործածել ամեն տեսակ զգուշութիւն, որպէս զի Ֆիլիպպը կօշիկներով չկաչի նորա շքեղ զգեստին: Փիլիպպը դարձաւ և նայեց նորա վրայ:

— Սակայն, որքան զարդարուած ես դու, — ժապտալով խօ-

սեց նա: — Գո՞ւ, դու... դու... ես մինչև անգամ մոռացել եմ... Ախր դու, Լիդոչկա, այժմ տիկին ես: Այս, պար... Այդպէս: Խոկական, բուն տիկին, Ամստերդամից... Լիդան թթու կերպով ծիծաղեց... «իմ եղբօրից յիմարութիւններից զատ ոչինչ չի կարելի սպասել» — ասում էր նորա ծիծաղը:

— Իսկ որտեղ է Վայսկան, — չարցը քիլիպպը:

— Ի՞նչ Վայսկա... Աի, այո... կատունե... նորան մի տեղ ուղարկեցինք... Ես խօս կատուներ չեմ սիրում, — պատասխանեց նորան քայլը:

— Խեղճ Վայսկա, — արտասանեց Ֆիլիպպը: — Այ ինչ, Լիդա... թոյլ կտան այսօր մնալ քեզ մօտ, — հարցը նա, անհոգ կերպով երկարացնելով ոտները:

— Ճշմարիտը, զփտեմ... ինչպէս ասեմ քեզ, — ասաց Լիդան, անդադար նայելով նորա զիւղական, բանուորական շորերին: — Հայրիկի նախկին սենեակը ամուսինս իր համար առանձնասենեակ է դարձրել... (նա այժմ պարապում է այնաեղը... շտապում է: Այժմ նա հաշիւներ է պատրաստում...) Գո սենիակում նորա ննջարանն է, իսկ ես մնացել եմ իմ սենեակում...

Բանը նրանումն է, որ նորա մօտ այսօր երեկոյթ կայ. պիտի լինեն նահանգական դատարանի երկու ծանօթ անդամներ, զատափաղի օգնականը, ակցիզնիներ (ամուսնու ընկերները, շատ յարգի երիտասարդներ), ժանդարմի զնդապետի աղիւտանտը, երկու-երեք սպայ, մի քանի տիկիններ և օրիորդներ, ի միջի այլոց խոստացել է լինել և ինքը բացա Սարեչկովան, նահանգապետի աներձագի աղջիկը: Առաջին երեկոյթն է... Եւ Լիդան ցանկանում էր թող վչել իւր նախկին ընկերութիւների աշքին, ցանկանում էր փայլել... Խոկ այստեղ պէտք կլինէր ծանօթացնել Փիլիպպին, ներկայացնել նորան (այդպիսի կերպով) ու ու Սարեչկովային... Ներկայացնում եմ, — իմ եղբայրը: Խայտառակութիւն...

— Ուրեմն ինչպէս կլինի, Լիդոչկա, կրկնեց քիլիպպը:

— Բայց ինչու ենք մենք նստել այստեղ: Գնանք աւելի լաւ է սեղանատուն, — առաջարկեց քոյլը, եղբօր հարցը շլած ձեւանալով:

Լիդան շշկուեց, նայեց իւր փոքրիկ ժամացոյցին և անհանգստացաւ անկեղծօրէն: Գաւառում երեկոյթներին յաճախ հաւքում են վաղ, և մէկ, կէս ժամից Լիդայի մօտ արդէն կարող էր մէկը շնորհ բերել... Իսկ այն ինչ, նորա դահլիճում

նստած է սամիկ ասենք, թէ արհեստաւոր... Que dira madame Streschkoff...

—Ինչո՞ւ համար սեղանատուն: Միևնայն է...,- ծուլութեամբ պատասխանեց Ֆիլիպպը, առատ կերպով ծուխ արձակելով:

—Երկի շուտով կական հաւաքուել,—նկատեց Լիդան:

—Ա՛յ, ահա ինչ...,-ժպիտը երեսին ասաց Ֆիլիպպը, դիտելով դահլիճը:

Լիդան բռնկուեց և նորա շրթունքները անախորժ կերպով ձգձգուեցան:

—Ես ուզում էի այլ ևս մի բան ասել քեզ, Ֆիլիպպ...—յայտնի անբաւականութեամբ խօսեց նա, յիտ քաշելով ձեւը վրայ ապարանջանը:—Ճատ անյաջմար է, որ քո նամակների հասցէն գրում են իմ տան վրայ... Մենք չգիտենք, ինչպիսի ծանօթներ ունիս դու և ինչ գործեր առես նոցա հետ... Խընդանութեամբ, ազատիր մեզ այդ նամակներից և ամեն տեսակ ծրաբ-դրեմ, ազատիր մեզ այդ նամակներից

—Հանգստացիր, Լիդոչկա: Իմ պատճառով Սիրիը չես գնալ,—ժպտալով ասաց Ֆիլիպպը: Ես արդէն տուել իմ ծանօթներիս իմ գիւղի հասցէն...

—Ինձ ինչ... Ես բոլորովին չեմ վախենում... քո գործերի մէջ չեմ խառնում,—ասաց Լիդան:—Բայց ամուսնուս անախորժ է... Նա ծառայող մարդ է, և առհասարակ, պէտք է խօսուվանել, այդպիսի գաղափարների նա չի համակրում...

—Ինչպիսի գաղափարների, Լիդոչկա,—հուրցը նորան եղբայրը:

—Այդպիսի... գիւղացիական,—պատասխանեց Լիդան:

Ֆիլիպպը վեր կացաւ և ճիշտ մանկական շարամտութեամբ և կրակութեամբ գահիճի մէջ տեղը յատակի վրայ շարտից ծխախոտի մնացորդը:

—Մնաս բարով: Հաւանական է, մենք քեզ հետ այլ ևս չենք տեսնուիլ... Մեր ճանապարհները բաժանում են: Դու իշխանուիի, ես գիւղացի... առում էր Ֆիլիպպը, նախասենեակում հագնելով վերաբուն և թեկի տակ առնելով գրքերի կապոցը:—Իսկ հայրիկի մասին դու ոչինչ չես հարցնում...—Նկատեց նա, բռնելով դուռը:

—Ինչ, խօմ նա այժմ առողջ է...—սասնութեամբ արտասանեց Լիդան:—Մեղանից բարեկիր նորան և ասա...

—Ոչ, Լիդա: Քո բարեզ ես նորան չեմ հասցնիլ և ոչ էլ մի բան կասեմ բեզանից նորան,—խօսեց Ֆիլիպպը, զուրս զաւով, և հայրական տան գուռը վերջին անգամ փակուեց նորայիտեց:

—Դունեա, Դունեա, աւելեցէր շուտով այստեղ, —կոչեց Լիդան և, մինչդեռ սպասուիին աւելում էր ծխախոտի մոխիրը, տիկինը մօտեցաւ պատուհանին և նայեց փողոց:

Ֆիլիպպը արդէն թաքնուել էր աշնան անձրեային երեկոյի խաւարի մէջ, և Լիդան տեսնում էր միայն լտպաների կարմիր լոյսը, որոնք փալփում էին ծառերի մերկ ճիւղերի միջից... Ֆիլիպպը գնաց, և քրոջ ժողովի փայլուն ֆոնի վրայ նա արգէն չի երեալ իրեկ մի սկ բիժ...

«Ես երբէք ոչինչ ընդհանուր բան չեմ ունեցել նորահետ», իրան արդարացնելով և հանգստացնելով, մտածում էր Լիդան: Բայց խօմ հօր հետ նա շտա ընդհանուր բան ունէր... Ահա այս խօկ կէտի վրայ Լիդան ամեն անգամ կարկանում էր...

Ֆիլիպպը երեկոն անցկացրեց իւր հին բարեկամների մօտ վարդագոյն տան մէջ: Այնտեղ նորան տեսնելու ռւրախ էին, նա այնտեղ ոչ ոքին չէր խանգարում... Ֆիլիպպը երկար և ոգեսուած խօսում էր, պատմում էր իւր նոր նիստուկացի մասին, բայց նաստեան նկատեց, որ նորա քէֆը տեղը չէ:

—Զեր քրոջ մօտ եղաք,—հարցրեց նա Ֆիլիպպին:

—Մայց, —լակոնական ձեռվ պատասխանեց նա, շրթունքները ամուր սեղմելով:

Դիւզը արդէն վագուց բաշում էր նորան զէպի ինքը: Այժմ նորա իշձը կատարուած է: Նա բաղդաւոր էր, և միայն Լիդայի մասին յիշողութիւնը մթնեցնում էր այդ բոպէին նորա հոգւոց փայլուն-արամազրութիւնը: Որքան աւելի էր յիշում նա քրոջ հայեացքների և նորա հետ խօսակցութեան տոնի մասին, այնքան աւելի էր փոթորկում մրրիկը նորա մատադ, եռուն սրտի մէջ... Եւ նա մտածում էր. «Իսկ ինչ կլինէր, եթէ նա վերադառնար այժմ քրոջ մօտ և հիւլերի առաջ կանչէր նորա երեսն ՚ի վեր. «Պու վատ, փշացած, փոքրովի կին ես: Դու խղճալի արարած ես...» Երեի նա կուշաթափուէր, ինչպէս առհասարակ անում են բոլոր «վայելչաշուր» տիկինները... Իսկ իսան, հաւանական է, հիւրերը խելագարի տեղ կղնին...

Վարդագոյն տան աէրերը խնդրեցին Ֆիլիպպին գիշերել իրանց մօտ, բայց Ֆիլիպպը, չնայած նորա գիւղացիական և իրանց մօտ,

կոպիտ ձեւըին, շատ ամօթխած և քնքոյշ մարդ էր... Նա գիշերը անցկացրեց պանդոկում և հետեւեալ օրը վերադարձաւ «տուն» բամենիէ...

Սեպտեմբերի երկարատև վատ եղանակներից յիտոյ, մի պայծառ և տաք օր լուսացաւ:

Փիլիպպը գատւ հօրը խրճիթի մօտ նստարանի վրայ նստած: Ծերուկը տարանում էր արեին և, կուղը դուրս ձգած, մտածելուութեամբ գաւազանով բան էր գծում գետնի վրայ:

—Ա-մ, վերադարձար,—ասաց նա ուրախ, տեսնելով մօտեցող որդուն:—Է՛յ, ինչպէս է, գործերդ կարգի բերիր:

—Այո: Ամենը կարգի ձգեցի, —պատասխանեց Փիլիպպը, ձգելով գրքերի կապոցը դռան մօտ և նստելով հօր կողքին նստարանի վրայ: Փիլիպպը հանեց գլխարկը, սրբեց քրտնածնակատը և նայեց վերև: Կապոյտ, պարզ, անամպ երկինքը տարածում էր նորա գլխի վրայ: Ոսկեզրյն յարդի ձողունները կախ էին ընկել կարից: Ճնճուկները ճեճում էին, թռչկոտելով ցանկապատի վրայ: Զորս կողմը խաղաղ և լուսութիւն էր... Փիլիպպը նայեց խրճիթին, ներկած պատուհաններին և, յիշելով քրոջ երեկուայ ընդունելութիւնը, ասաց ինքն իրան: «Ահա որտեղ է այժմ իմ իսկական տունը»:

—Իսկ նորան տեսար: Ինչպէս է ապրում,—վնթինթաց ծերուկը:

—Ո՞վ, լիդան, —հարցրեց Փիլիպպը և իսկոյն պատասխանեց:—Դու այլ ևս աղջիկ չունես:

—Ի՞նչպէս, ինչ է պատահել նորան, —վրայ տուեց ծերուկը, շփոթութեամբ նայելով որդուն:

—Մի վախենար, մի վախենար, —ասաց վերջինս:—Նա ողջ և առողջ է... Միայն քեզ համար նա կորած է...

—Է՞հ... բայց դորա փոխարէն որդուս գտայ, —խօսեց ծերուկը այնպէս ցած և անկապ, որ Փիլիպպը շլելով կրկին հարցրեց:

Բայց ծերուկը լուռ մնաց:

—2խօսենք այլ ևս, հայրիկ, այդ մասին, —ասաց Փիլիպպը:

—2խօսենք, —հլութեամբ համաձայնեց ծերուկը:

Հեշտ է ասել, «չխօսենք այլ ևս», բայց այդպիսի որոշումը կատարելը դժուար է... Դժուար է չասել, բայց աւելի դժուար է շմտածել քո ցաւի մասին... Ծանը է բաժանուելը վազուց վայ-

վայուած մարից. աւելի ևս ծանը է մարդուս ամենամօտ անձերի ցուցակից ջնջել զեռ ևս մօտ անցեալի սիրելոյն... Ծերուկը սարսուաց. կարծես մի տեղից սաւնութիւն վշեց նորա վրայ... Իհարկէ, նա այժմ լաւ էր ապրում, հանգիստ էր. Գիղիքական ոյժը քիչ քիչ վերադառնում էր, նորա հոգեկան վէրքը խոց էր կապում, բայց... կվերջանայ արդեօք նա երը և իցէ: Գոնէ այդ բոպէին, նստած Փիլիպպի կողքին, նա զգում էր իւր շուրջը մի անախորժ գատարկութիւն... Մի քանի բոպէից ծերուկը արդէն մոռացաւ իւր որշումը՝ չխօսել նորա մասին...

—Յիշում եմ, զեռ շատ վագուց...—խօսեց նա, մաքով անցնելով յիշողութեան շարքերը և կարծես բարձրաձայն մտածելով:—Նա այն ժամանակ զեռ բոլորովին վկրք էր... Յիշում եմ, նստած մէկ անգամ ձհաներիս վրայ, բռնեց երկու ձեռքով իմ պարանոցը, կացրեց իւր թուշը իմ երեսիս... այնպէս փափուկ... և ասում էր... (ուրախ ծպիտը այդ խօսքերի ժամանակ լուսաւորեց ծերուկի դէմքը): Ասում էր «Հայրիկ, դու իմն ես, և մենք... մենք...»

2այնը կտրուեց, և ծերուկը յանկարծ, կարծես անտանելի, այլով ցաւից. շարժեց զլուխը...

Փիլիպպը տիրութեամբ նայեց նորա վրայ:

Անցաւ մի քանի բոպէ:


Ծերուկը դարձեալ կուցաւ և, գլուխը ցած խոնարհելով, մտածկոտութեամբ գծում էր զետենի վրայ գաւազանով...

Վ Ե Բ Զ.

1903 Ե. ՄԼՃ-Առլա.



ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
44





11.156

